110



Lto
V 869

1999

ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ
ԿԱՐԳԱՒՈՐԱՑ

ԱՑՍԻՆՔՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՒ ՔՈՀԱՆԱՅԱՑ

ԶՈՐ Ի ԲՈՒՆ ՄԱՇՏՈՑԷՆ ՄԵՐՄԷ ԱՌԵԱԼ՝ ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ԿԱՐԳԱՒՈՐԵԱԼ ՏԷԱՌՆ ՍԻՄԷՕՆԻ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ԵՒ ԳԻՏՆԱԿԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԵՏ ՏՊԱԳՐԵԼ ՄԵԾԱՒ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ, ԻՆՔՆԻՆ ԻՍԿ ԼԻՆԵԼՈՎ ՎԵՐԱՀԱՍՈՒ։

Ի փառս Աստուծոյ, եւ ի հնշտութիւն եւ ի պիւրութիւն կատարողաց սոյնոյ սրբազան կարգիս, զոր յառաջ կարի դժուարութեամբ եւ տաժանմամբ առնէին։

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1892—ՌՅՊԲ

ՀՐԱՄԱՆԱՒ

ԱՄԵՆ· Տ· ՏԵԴԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

4869-ա

28. 871



Կանոն յորժամ եպիսկոպոս՝ կամ՝ քահանայ՝ կամ՝ հայրապետ՝ կամ՝ ուխտի առաջնորդ կատարի մահուամբ՝ զայս կարգաւորութիւն արասցեն լուացման և պատանաց և այլ կանոնեալ պայմանաւոր կարգացն։ Երթան նախ ուր զհանգիստն պատրաստեն Քահանայք ժողովրդովքն հանդերձ։ Եւ ասեն սաղմոս ՀՓ՝ ողբաձայն՝ կցորդ։ Ջորթս մեռաց մերոց։ Տէր ողորմեա։ Մինչև ցայն տեղին որ ասէ՝ զգործըս ձեռաց։

Ընթերցուածս Յաւակաց։

Իմաստութիւն չինեաց իւր տուն· և կանգնեաց սիւնս եօթն։ Նշեն զգենուլիս իւր· և խառնեաց ի խառնարանս զգինի իւր· և պատրաստեաց զսեղան իւր։ Նւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր։ Նւ ասէ՝ որ ոք իցէ անզգամ՝ եկեսցէ առիս· և ցպակասամիտսն ասէ։ Եկայք՝ կերայք ի հացէ իմմէ՝ և արբէք զգինի իմ՝ զոր խառնեցի ձեզ։ Թողէք զանզգամութիւն, և կեցջիք, խնդրեցէք զիմաստութիւն, զի ապրեսջիք· և ուղղեցէք զիաւութեամբ զՀանճար· և ուղիղ ճանապարհաւ իմացարուք զկարաս։

Ընթերցուածս Յովհաննէսի Մարգարէից։

Ա՛յսպէս ասէ Տէր. որ ուրուք ի ձէնջ տեսցէ իցէ զտունս զայս ի փառաւորութեան իւրում իբրև զառաջինն. և արդ տեսանէք զդա, որպէս զոչինչ առաջի ձեր։ Ընդ զօրացիր դու Օ՛օրաբաբէլ ասէ Տէր. և զօրացիր Յեսու Յովսեդիկեանց քահանայ մեծ. և զօրասցի՛ ամենայն ժողովուրդ երկրիդ ասէ Տէր, և գործեցէ՛ք՝ զի ես ընդ ձեզ եմ ասէ Տէր ամենակալ։

Պօղոսի առաքելոյն Ընդդատելոց Թղթոյն է ընթերցուածս։

Ասաի Եղբարք սուրբք՝ երկնաւոր կոչմանն բաժանորդք՝ նայեցարո՛ւք ընդ առաքեալն և ընդ քահանայապետն խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս Քրիստոս։ Որ հաւատարիմ է արարչին իւրոյ՝ որպէս և Մովսէս ամենայնի տան նորա։ Օ՛ի առաւել ևս փառաց քան զՄովսէս արժանի եղև. որչափ առաւել պատիւ ունիցի քան զտունն տանն առնելի։ Օ՛ի ամենայն առն կազմի, յումմէ կազմի. իսկ որ զամենայն արար, Աստուած է։

Ալէլ-էյ։ Պաղմոս, կոչէ։ Արի Տէր ի հանգիստ քո՛ դու և տապանակ կտակի սրբութեան քոյ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի ըստ Ղուկասու։

Իբրև եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա. Օ՛ա՛քէ՝ փութա՛, էջ այսի. զի այսօր ի տան քում արժան է ինձ ագանիլ։ Փութացաւ և էջ. և ընկալաւ զնա ուրախութեամբ։ Իբրև տեսին ամենեքեան՝ տրտնջէին և ասէին, թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն եկաց Օ՛աքէոս՝ և ասէ ցՏէր, Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա Յիսուս, այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ. քանզի և սա որդի Աբրահամու էր։ Օ՛ի եկն Որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն։

Քարոզէ Սուխաոտգն. վասն ի վերուստ։

Եւ ասէ զայօթս։

Փառք քեզ Թագաւոր Թագաւորաց, յոյս և ակնկալութիւն ամենայն ծագաց երկրի, ի քեզ յուսով յուսացաք. որ փոխանակ ապականացու կենացս, զանապական և զանվախճան կեանն շնորհեցեր մեզ. և փոխանակ տխրալից աշխարհիս՝ պարգևեցեր զվերինն Երուսաղէմ զղուարճալից ուրախութիւնն։ Վա՛ սընորոյ աղաչեմք զքեզ Տէր՝ օրհնեա զտեղի

բնակութեան ծառայիս քո, զոր ընտրեցեր տաճար հանգստեան. հանդո՛ւր ընդ սուրբս քո. ընտրօք և մարդասիրութեամբ Տեառնդ մերոյ և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և՛։

Ե֊ասէն Աստուած անեղ. ք պո֊ն։ Երբ ի դնել բեմին. Հոգւոյն Տանգ՛։ Ամէն Տանգ՛։ Քրիստոս Որդի։ Հայր մեր՛։

Եւ ապա առեալ քահանայն զգրիչն, և գրոշմէ զտեղին խաչանման. և տայ գործել ժողովրդեանն զնորութիւն բրածին, վեց թիւ կամ եօթն. և զերկայնութիւնն ըստ չափոյ մարմնոյն։

Եւ ապա երթայցեն առ վախճանեալն։ Նախ կարեսցեն զպատանն ամենայն պարագայիւքն՝ որպէս ի վայրդ գրեալ է. և ի պատրաստելն, այս կարգ կատարի մինչև վճարեսցեն։

Նախ ասեն.

Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմա՛։ Ողորմեա՛ ինձ Աստուած։ (Օրհնէ՛ զէն ու ասէ)։ Յամենայն ժամ աղա՛։ Եւ ևս խաղաղու՛։ Օրհնութիւն և՛։ Ե֊ ասէն ի նեղութեան կանգն, և ասէն վեց գո֊ը։ և յամէն գո֊ը, Եւ ևս խաղա՛։ Օրհնութիւն և փառք՛։

Ե֊ ասէն կանոնագլո֊ի։

Օրհնեա՛ անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր ի կեանս իմ։ սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչև եմ եա։

(Զփոխն թիւ լման ասա. և ի վերջն ձայնիւ)։

Օ՛րհնեցի՛ց ընդքեզ գոհութեա՛մբ ի կեանս իմ։ սաղմոս ասացից քե՛զ Քրիստո՛ս թագաւո՛ր. յաղթակա՛ն նո՛ր երգո՛վ օրհնութեամբ։ Երէց կրկնէ։

Թ֊։ Օրհնեցէ՛ք զՏէր՝ զի բարի է սաղմոս. Աստուծոյ մերում քաղցր եղիցի օրհնութիւն։ (Զփոխն լման ասա. յերկոց յայնի֊։)

Ո՛ւրախացի՛ն քե՛զ Քրիստոս՝ գոհութի՛ւնք երկիւղածա՛ց անուան քոյ. զո՛ր յանապատացուցեր ողորմութեամբ քո՛վ ի խորհո՛ւրդս կենսաբեր դալստեանդ քո՛յ։ Երէց կրկնէ։

Թ֊։ Գո՛ւթեա՛ Երուսաղէ՛մ զՏէր։ պիտի լման ասա. փա֊ Հօ՛։) Յերկոց յայնի֊։ Ո՛ւրքե՛զ Քրիստոս գո՛վք եկեղեցի փո՛ր կեանք քո սուրբ. ցո՛նձալո՛վ տեսանե՛ զքեզ ընտրիկդ ե՛կեալ հայրական իշխանութեա՛մբ ի պըսակել ընտանութեա՛մբ քո։

Երէց կրկնէ։

Զկին, Եւ ևս խաղաղութեան՛։ Օրհնութիւն և փառք՛։

Ե֊ ասէն. Տէր ղսուր քո լուայ և երկեայ. Տէր նայեցայ ի գործս քո և զարհուրեցայ։ Զկնի շարական դի։

Լո՛ւայ աքանչելի՛ տնօրէնութեան քո ընտրութ. քանզի յերկնից խոնարհեալ մարմնացար ի սուրբ կուսէն. և խաչեցար ընդ աւազակին.

և զարհուրեա՛լ հիացայ ընդ քո՛ ընդ անհաս մարդասիրութիւնդ։ Օ՛ի հանապա՛ր զյարո՛ւթիւնդ գո՛ւշակեաց մե՛զ մարգարէն. ա՛ստ ելե՛ր դու ի կա՛ռս քո. հեծելութիւնդ քո՝ Քրի՛ստո՛՛ս փրկո՛՛ւթիւն եղե՛՛ւ յե՛լանելո՛ղ քո՛։ Ն՛րեւեցար ի փրկել զա՛րարածս ի՛ մահուանէ՝ և՛ ղե՛ժո՛՛ւկը հիացեա՛լ սատանեցա՛ն ի յա՛ղէ ամենազո՛ր փա՛ռաց քոյ՛։

Աղաչանաբութեան։

Քրիստո՛ս Աստուա՛ծ յո՛յս ապա՛շխարհո՛՛ցդ. շնո՛րհեա՛ զթո՛՛ղութիւն բա՛զում յանցա՛նաց իմո՛ց։

Ա՛՛ռ քե՛զ բազմա՛դութ ա՛՛պա՛՛հնեալ կա՛՛րդա՛մբք մի՝ մե՛ծ իւ՛ղ ըզմե՛զ յո՛՛ղորմութի՛՛նէ՝ քո՛՛մէ՛։ Որպէ՛ս զանա՛զանի աղաղա՛կեմ ա՛՛ռ քե՛զ. յիշեա՛ և զի՛ս Տէ՛ր ի՛ քո՛՛մ յա՛րբա՛յո՛՛ւթեա՛նդ։

Ը՛զմե՛զ ի՛՛մ խո՛՛տո՛՛վա՛ն լինի՛՛մ ա՛՛ռ քեզ Քրիստո՛՛ս՝ որ մի՛՛ա՛յնդ ես բազմա՛դութ թո՛՛ղութեամբ՝ ո՛՛ղո՛՛րմեա՛ ինձ Ա՛՛ստուա՛ծ։ Դո՛՛ւ Տէ՛՛ր ո՛ր ճշմա՛՛րտութեա՛՛նց ես սիրո՛՛ղ և քննո՛՛ղ ըզծա՛՛ծո՛՛ւկըս գաղտնեա՛ց սի՛՛րտի՛՛ իմո՛՛յ.

ո՛՛ղո՛՛րմ՛։ Տո՛՛ւր ի՛՛նձ ցընծութի՛՛ւն փրկութեա՛՛ն. և՝ հո՛՛գւով ա՛՛զրութեա՛՛նդդ քո՛՛ հաստա՛՛տեա՛՛ զիս՝ և ո՛՛ղո՛՛րմ՛։

Ա՛՛լեւք յա՛՛նցա՛՛նաց զի՛՛ս ա՛՛լէկոծեա՛՛ն՝. և մե՛՛ղք ի՛՛մ բա՛՛զո՛՛ւմ զի՛՛ս յա՛՛նդիմա՛՛նեա՛՛ն։ Ըրդ զինչ ա՛՛բա՛՛րիւց մե՛՛ղո՛՛ւցեալ անձա՛՛մբս. որ չեմ ա՛՛պրե՛՛լոց յա՛՛հա՛՛պին հ՛՛ըրո՛՛յն։ Ա՛՛եղա՛՛յ քեզ Քրիստո՛՛ս Ա՛՛ըդի՛՛ Աստուա՛՛ծ՝. շնո՛՛րհեա՛՛ զթո՛՛ղութի՛՛ւն բա՛՛զում յա՛՛նցա՛՛նաց իմո՛՛ց։

Տէ՛՛ր ո՛՛ր ի՛՛ մէ՛՛ջ լերի՛՛ն. ա՛՛ղբերա՛՛ցո՛՛ւցը ընդ՛՛ջո՛՛ւրն ի՛՛ վի՛՛մէ՛՛ն։ Տէ՛՛ր ի՛՛ սի՛՛րտ իմմէ՛՛. հա՛՛ն ի՛՛նձ ա՛՛րտասո՛՛ւս ա՛՛պա՛՛շխարո՛՛ւթեա՛՛ն։ Օ՛՛ի կե՛՛ցի՛՛ց և ա՛՛պաշխարո՛՛ւթեամբ ապրեցայց. ի՛՛ հա՛՛նդե՛՛րձեալ քո՛՛ց դա՛՛տաստա՛՛նաց։

Ա՛՛ղո՛՛ւցե՛՛ալ անձա՛՛մբ կա՛՛րծա՛՛մ ա՛՛ռ քե՛՛զ ՚ա՛՛յլ երկնա՛՛ւոր. օ՛՛գնեա՛՛ ի՛՛նձ ի՛՛ նեղո՛՛ւթեա՛՛նս՝. ո՛՛ր մե՛՛ղո՛՛քս ե՛՛մ մեռեա՛՛լ օ՛՛գնեա՛՛ ի՛՛նձ։ Ա՛՛ի՛՛րաւո՛՛րեցա՛՛յ ես յա՛՛նե՛՛րևո՛՛յթ թըշնամո՛՛ւն ըզ՛՛ժի՛՛շկ հի՛՛ւա՛՛նդաց ըզ՛՛ժըշկեա՛՛ զիս զհի՛՛ւա՛՛նդո՛՛ւթի՛՛ւնս՝. ո՛՛ր մե՛՛ղո՛՛քս ե՛՛մ մեռ՛՛։ Ա՛՛՛ո՛՛ղորեցա՛՛յ ես որպէ՛՛ս զընչա՛՛ր կորուսեա՛՛լ խո՛՛ղո՛՛ւդ զ՛՛երեսից. խո՛՛ղդրեա՛՛ զիս ընդմի՛՛ջորեա՛՛ս. ո՛՛ր մեղո՛՛քս ե՛՛մ մեռ՛՛։

Ա՛՛եղա՛՛յ քեզ Տէ՛՛ր՝ քա՛՛՛

մեան ինձ Աստուած։ Ո՛չհաւր եմ բանաւոր
հօտի քո և առ քեզ ապաւինիմ հովիւ բարի
խընդրեա՛ զիս ըզմոլորեալս. և՝ դարմանա ինձ
Աստուած։ Ի ծովու մեղաց անկեալ եմ և՛
առ քեզ աղաղակեմ նաւապետ բարի՝ փըր-
կեա՛ զիս ի վտանգէս. և դարո՛ր"։

Ձարհուրեալ դողացա՛ ես ամե՛նամեղ
անձն իմ։ յանէ՛ղ քոց դատաստանացդ յան-
ներելի տանջանացն։ Ռանզի կամաւ մե՛ռե-
ցա՛ ես ի մե՛ղս մե՛ծամե՛ծս. արդ կա՛յ և՛
ինայ ինձ աններելի պատուհասն։ Ըրդ ան-
կեա՛լ աղաչե՛մ փըրկիչ և բարերար. խնա-
յեա՛ց յիս ի մե՛ղուցեալս. և դարմանա՛ց ինձ
բազմամե՛ղիս։

Ը՛մե՛նայական քաւեա՛ զմե՛ղս իմ։ զի Ա-
ստուած ես ապաշխարողաց։ Ե՛ւ զո՛գիդ սուրբ՝
մի՛ հա՛ներ յինէն. զի՛ Աստո՛ւած"։ Ե՛ւ փրկեա՛
զնա յահա՛գին տըրոյն. զի՛ Աստուա՛ծ"։

Հանգամեան։

Ես անա՛ցի՝ ես դարմանա հնգետյ իմով բազ-
մամեղ. որ բնակեա՛լդ ես ի յերկինս և՛ յան-
մարմնոյ փառաբանի՛ս. յիս մարդասիրեա
բազմագութ փըրկիչ՝ և՛ փարատեցո զցաս

անձին իմոյ։ Պականեցայ յազգատոհմէ. լը-
քեալ թողի զկեանս աշխարհի. և՛ մնրմի՛ն
ունայնութեան դարձա՛ ի հող ուստի ստեղծա՛.
յիս մարդ"։ Յաւուր՝ յայնմի՛կ մա՛տնեցայ
ի ձեռս ահե՛ղ հրապարակին. և՛ առ քե՛զ ա-
պաւինիմ՝ ստեղծո՛ղ բնաւից Տէր բոլորից. յիս
մարդա՛։ Հայեցա՛ ի բարձունս՝ ա՛ռ քեզ կա-
րո՛ղ յամենայնի. ընկալ՝ զիս յարկս ա՛րդարոց
ամրա՛ծածո՛ւկ աջովդ քո՛. յիս մարդա՛"։ Ը՛նդ
ի խաղաղութիւն՝ դարձայ ի հո՛ղ յորմէ ստեղ-
ծայ. նորո՛գող ճարտարապետ պարգևա՛տո՛ւ
ո՛ղորմութեան. յիս մար՛"։ Ը՛յժ կենդանի՛քս
օրհնե՛մք ըզքեզ՝ Քրիստոս թագաւո՛ր յաւի-
տենից. որ փառո՛ք փառաւորիս ի յերկնայնո՛ց
և յերկրայնոց. յիս մարդասիրեա բազմագութ
փըրկիչ՝ և՛"։

Աստուածածնի։

Ի՛ քեզ եմք ապաւինեալ. Քրիստոսի մայր
Ը՛ստուա՛ծոյ մե՛րոյ։ Ո՛ր քան զերկի՛նըս բարձրա-
գո՛յն Ա՛րիամ պարծանք ե՛կեղեցւոյ. Քրիստո-
սի մայր։ Ո՛ր քան զարեգա՛կըն պայծառագո՛յն
Ա՛րիամ։ մի՛ դադարի՛ր բարեխօսե՛լ վասն մե՛ր.
Քրիստոսի՛ մայր Ը՛ստուա՛ծոյ մե՛րոյ։

Քահանայաթաղ առնելոյ։

Խալի։

Սո՛ւրբ զեա՛ւ քո շնորհեցեր զէն եկե՛ղեցւո՛յ քո՛ւմ սրբո՛յ· ո՛րո՛վ դատապա՛րտեաք պա՛րտեցա՛ւ թո՛ղնաքին։ Սո՛վա՛ւ պահպա՛նեա՛ զոժո՛ղովո՛ւրդս քո Քրիստոս ո՛րո՛վ [երկընպա՛գեմք քե՛զ ընդ հո՛ր և՛ հոգւո՛յն։ Ի՛ քե՛զ ապա՛շինմք Քրիստո՛ս· ո՛ր գալո՛ցդ [ես խաչիւ· ո՛րպէս զի փրկեսցես զմե՛զ յայնմ աւո՛ւր ա՛հե՛զ ա՛ահեղի՛ն։ Փառք հո՛ր։ Ընդ սուրբս քո դասեա՛· և ընդ արդա՛րսն պրսակեա՛· ի՛ տեղի՛ ա՛նկեալոց հրեշտակաց ըզնընջեցեալսն մեր կա՛րգաւո՛րեա՛· որ ողո՛րմածդ ես՝։

Քահա՛ն՝ վա՛ան գտանելոյ մեզ զնորհս։

Աղօ՛թ։

Գոհանամք զքէն Տէր Ա՛ստուած մեր, որ զարթուցեր զմեզ ի հանգստեանէ քնոյ հնորհիւ ողորմութեան քո։ Օ՛գնեա՛ զմիտս [մեր [արդարութեամբ առ քեզ Տէր Ա՛ստուած մեր· զի տեսցեն աչք մեր զփրկութի՛ւն քո· եկեսցէ՛ և բնակեսցի առ մեզ Ա՛ստուածութիւն քո· և ողորմութիւն քո հովանի և պահապան լեցի ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ զծառայս քո արժանի արա՛ ի տուէ և ի պիշերի· և յա-

Տա՛ն կարգն է։

մենայն ժամու միշտ խորհիլ ի սէր պատուի՛րանաց քոց։ Եւ գոհանալով փառաւորեսցուք զհա՛յր և զՈ՛ր՝։

Խաղաղո՛ւթի՛ն ա՛ննէցո՛ւն

Աստո՛ւծոյ էրկրպագեսցո՛ւք։

Կենդանարար զօրութիւն և աղբիւր անմահութեան դու ես Քրիստոս Ա՛ստուած փրկիչ մեր· որ հնորհեցեր մեզ ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինիլ առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քոյ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր Ա՛ստուած մեր, արա զմեզ արթուն և պատրաստս ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հո՛ր և ընդ հոգւոյդ սրբոյ· այժմ՝։

Հոգւոցն հանդ՝։ Վ՛ասն հանդ՝։ Քրիստոս Որդի՝ հա՛յր մեր որ՝։

Եւ ապա լուացցեն քահանայք ի ծածուկ տեղւոջ, և թէ կրօնաւոր է՝ կրօնաւորք լուացցեն. և կին մի՛ մերձեսցի։ Եւ ի լուանալն, կատարի այս կարգ։ Շարական գձ։

Վերաձգողն երկնից։ Լեց պո՛ն։ Եւ ապա Սպո՛ղ պղե՛ւյան։ Յօղեա՛ յիս մշակա՛՝։ Ողորմեա՛ ինձ Ա՛ստուա՛ծ՝։ Ինձ՛ նայն պո՛ն, Յօղեա՛ յիս՝։

Քահանայաթաղ առնելոյ։

Ընթերցուածս յեզեկիէլէ մարգարէ է։

Այսպէս ասէ Տէր Աստուած։ Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ. և սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց. և յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ։ Եւ տացէ ձեզ [զսիրտ նոր. և հոգի նոր նորոգեցից ի ձեզ. և հանիցէ զսիրտն քարեղէն ի մարմնոց ձերոց. և տացէ ձեզ զսիրտ մարմնեղէն։ Եւ զհոգի իմ տացէ ձեզ. և արարից, զի յարդարութիւնս իմ գնայցէք, և զբերանս իմ պահիցէք. և առնիցէք գնոսա։ Եւ բնակիցիք յերկրին՝ զոր ետու հարցն ձերոց. և եղիցիք ինձ ի ժողովուրդ. և ես եղէց ձեզ Աստուած։

Պօղոսի առաքելոյն յերրայեցւոց թղթոյն է ընթերցուածս։

Ունիմք այսուհետև եղբարք զհամարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի։ Որ նորոգեաց մեզ զճանապարհ նորոգ և կենդանի ի ձեռն վարագուրին՝ այսինքն է, մարմնոյ իւրոյ։ Եւ քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ։ Մատիցուք ճշմարիտ սրտիւ լրութեամբ հաւատոց. լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց. և մկրտեալ զմարմինս ի ջուր սրբութեան։ Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն. զի հաւատարիմ է որ խոստացաւն։ Եւ զգուշացարուք միմեանց յորդորմամբ սիրոյ և գործոց բարեաց։ Եւ մի՛ թողցուք զժողովս միմեանց. որպէս և սովոր են ոմանք։ Այլ մխիթարեսցուք և այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ։

Եւ յետ լուացմանն պատեսցեն՝ այսու օրինակաւ։ Ագուցանեն պարեգօտ սպիտակ և անդրավարդիս ի ներքոյ. և օգ ի յոտն. և գօտի ընդ մէջն. և կնկուղ սպիտակ ի գլուխն. և փակեղն զուսովն. և փիլոն սպիտակ շուրջն. և զալ ափն ի վեր. և գիր դնեն ի ձեռն, այսինքն՝ յաւետարանէն մէկ տուն սկիզբն, մէկ տուն վերջն. Եկի ի հօրէ եւ եկի յաշխարհ, դարձեալ մեղումբ դաշխարհ, եւ երթամ առ Հայր։ և փոքր գաստառակաւ խունկ դիցեն։ Եւ եթէ կրօնաւոր իցէ՝ իւր զգեստին պարտէ դնել։ Եւ ապա ասեն Սաղմոս, ՃԼ. Յիշեա՛ Տէր զԴաւի՛թ։ Որպէս երդուաւ Տեառն՝։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։

Ասէր Յիսուս՝ զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա։ Եւ թէ յԱստուծոյ ել՝ և առ Աստուած երթայ։ Յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձն. և առեալ դրենջակ մի՝ սփածաւ։ Եւ ապա առեալ զջուր՝ էարկ ի կոնք. և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն. և սրբէր դրենջականն՝ զոր սփածեալն էր։ Գայ առ Սիմոն Պետրոս. և նա ասէ ցնա, Տէր, դու զիմ զոտս լուանաս։ Պատասխանի եաս նմա Յիսուս և ասէ. զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես. բայց յապա գիտասջիր։ Ասէ ցնա Պետրոս. ոչ լուացես զոտս իմ յաւիտեան. պատասխանի եաս նմա Յիսուս. եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդիս մասն։ Ասէ

Տէն կորգն է։

ցնա Սիմոն Պետրոս։ Տէր, միմիայն զոտս իմ, այլև զձեռս՝ և զգլուխս։ Ասէ ցնա Յիսուս։ լուացելոյն չէ՛ ինչ պիտոյ՝ բայց զի զոտն լուա- նայցէ։ քանզի ամենևին սուրբ է։ և դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքին։

Բարող՝ վասն գոանելոյ։

Ե— ասէ Վ.պօ.

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ի ժամանակի փրկագործ անօրէնութեան քոյ ի սուրբ վերնատանն անճառելի խոնարհու- թեամբ՝ առեալ զջուր քոյով ամենասուրբ ձե- ռօքդ արկեր ի կոնք և լուացեր զոտս աշա- կերտացդ՝ մաքրելով զնոսա յամենայն հաղթից և յարատոյ մեղաց։ և զարդարեցեր զնոսա պատրաստութեամբ աւետարանին խաղաղու- թեան։ գնալ ի յերկիր ուղեղ։ Երդ՝ և մեք ծառայքս քո ժողովեալք առ հանդուցեալ (այս անուն) ծառայս քո՝ կատարեմք զնոյն մաք- րարար խորհուրդն քո։ Ա՛ստորոյ աղաչեմք զքեզ մարդասէր Տէր, առաքեա՛ ի մեզ և ի ջուրս յայս զնոյն մաքրարար շնորհս քո՝ և օրհնեա՛ և սրբեա՛ զսա, որով լուացեալ զմար- մին սորա։ սրբեսցի յամենայն արատոյ մե- ղաց և ի խաբէութենէ աշխարհիս։ և ազու- ցեալ ոտիւք պատրաստութեամբ աւետարանիդ

խաղաղութեան՝ եկեսցէ առ քեզ ճշմարիտ սրտիւ, լրութեամբ հաւատոյ, և լուացեալ զգ- միտս իւր յամենայն խղճէ չարեաց։ և մոցէ ի յառագաստ երկնաւոր փեսայիդ ընդ սրբոց քոց առաքելոց։ Ընդ որում և մեք գոհու- թեամբ փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և՛՛։

Ալէլո-ւյա։ Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն։ էզերծ յինէն զքուրձ։ և ինձ զգեցոյց զուրախութիւն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ամէն ամէն ասեմ քեզ։ զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր՝ և երթա- յիր, յո և կամէիր։ և յորժամ ծերասցիս, ձեռս ի վեր կալցիս։ և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին ուր ոչ կամիցիս։ Զայս ասաց նը- շանակեալ թէ որով մահու փառաւոր առնի- ցէ զԱստուած։

Ե— ապա Հոգովքեալք երկու- պատ։ և ձէկ պատ երգէ։ Հոգւոյն հան- գուա՛։ և Հայր մեր՛՛։

Եւ ապա ամիսփեսցեն զնեղով անդրէն ի մահիճան ուր վախճանե- ցաւն։ զերեսն յարևելս՝ և զաչսն յերկինս։ և գասք պաշտօնէիցն պար առեալ զվախճանեղովն, ասացեն Սաղմոս։ երկիրք պատմին։ (Զկանոնն ի լման ասա։) Կանոնագլուխ՝ Դատեա՛ Տէր զայնոսիկ։ Զկնի՝ եւ եւս խաղաղութեան՛՛։ Որինութիւն եւ փառք Հօր՛՛։ Եւ ապա շարական առ։ Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո՛՛։ (Մէկ շարական Աստուածածնի։ և մէկ Խաչի։) Փառք Հօր եւ՛՛։

Ե— առլիս։ տարղէ։

Վ՚ան խոստովանող Հոգւոյս որ Հրաժա-
րեաց ի մէնջ զՏէր աղաչեացուք։ Վ՚ան քա-
ւութեան և թողութեան մեղաց սորա և մեր
ամենեցուն, զՏէր աղա՛՛։ Վ՚ան առաջնորդե-
լոյ սմա Հրեշտակին խաղաղութեան յօթևանս
սրբոց, զՏէր աղա՛՛։ Վ՚ան պարգևելոյ սմա
մասն և բաժին ընդ ժառանգորդս արքայու-
թեան երկնից, զՏէր աղա՛՛։ Վ՚ան ընդունե-
լոյ զաղաչանս միաբան ժողովելոցս՝ որք խնդ-
րեն ի Տեառնէ զթողութիւն մեղաց սորա, ըզ-
Տէր աղա՛՛։ Վ՚ան Հոգւոցն Հանգուցելոց՝ որք
ճշմարիտ և ուղիղ Հաւատով ի Քրիստոս նըն-
ջեցին, զՏէր աղա՛՛։ Ու ևս միաբան՛՛։ Ո՚ան-
ձինս մեր՛՛։ Ողորմեայ մեզ՛՛։

Ե— առ պՒղօՐ։

Տէր մեր և Ընտուած՝ յոյս ամենեցուն. որ
նախ յաթոռս քերօբէականս՝ և երկրպագիս
ի սրբոց Հրեշտակապետաց. և ընդունիս զաղա-
չանս մարդկան, և զթաս ի Հոգիս ննջեցելոցն
ի Հաւատացեալս ամենասրբոյ Երրորդութեանդ.
և զքահանայս զոր ընտրեցեր ի սպասաւորու-
թիւն սրբոյ եկեղեցւոյ ի հաճոյս քո պաշտել
զքեզ. և դարձեալ անդրէն կոչեցեր գալ առ
քեզ ուստի ստեղծեր զսա. ըստ բանի քում

զոր ասացեր, Հող էիր և ի Հող դարձցիս։ Ու
այժմ ի ձեռն կոչման քո Տէր՝ զՀանգիստ քո
ընտրեա սմա. և զամենայն մեղս սորա զոր
գործեալ իցէ, զկամայ և զակամայ՝ թո՛ղ սմա.
և զՀոգի սորա խաղաղութեամբ ընկալ յերկ-
նից արքայութիւնդ ի խորանս Քարդարոց։ Ու
զմեզ արժանաւորս արա գոՀանալով փառա-
ւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ
և միշտ և՛՛։

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկնրպագեսցուք։

Սուրբ ես Տէր Ընտուած մեր՝ որ բնակեալդ
ես ի յերկինս և բարեբանիս երեքսրբեան օրհ-
ներգութեամբ. և քաղցրութեամբ քով խնա-
մես զարարածս քո, զոր ընտրեցեր քեզ յա-
մենայն ազգաց ժողովուրդ սուրբ՝ փառաւորել
զանուն քո սուրբ. և խոստացար տալ մեզ զա-
նանց բարութեանց Հանգիստն։ Ընկալ և օրհնեա
և դասաւորեա զՀոգի ծառայիս այսորիկ ընդ ա-
մենայն սուրբս քո որք յաւիտենից Հաճոյ եղեն
քեզ՝ ի խոստացեալ Հանգստեան քում։ Ու զա-
մենայն յանցանս սորա զոր յանցեալ իցէ առա-
ջի քոյ, ներեա և թո՛ղ սմա. և ողորմութեամբ
քով ազատեա զՀոգի սորա յանմաքուր
գործոց և ի կապանաց մեղաց. և Հանգո՛ ի դա-
սս սրբոց քոց։ Ու զմեզ արժանի՛ արա փա-

ռաւորել զ֊Տայր և զՈրդի և զսուրբ ֊Ոգիդ· այժմ և միշտ և՚՚։

֊Ոգւոցն Տանգու՚՚։ Եւ ևս խաղա՚՚։ Վերիս֊տոս Որդի՚՚։

Ե֊ փեռնադզեն ղբին ասելվ։

Ա՛լէլուիայ· ալէլուիայ· ալէլուիայ։ Օ՛րհնեա֊ցի և պահպա՛նեսցի դի՛ Տանգուցեալ Տէր (այս անուն եպիսկոպոսի, կամ վարդապետի, կամ տահանայի.) այս նշանաւ սուրբ խաչի՛ն և սուրբ աւետարանա֊լըս և աւո՛ւրս շնորհիւ· անուամբ ֊Օր և Որդւոյ և ֊Ոգւոյն սրբոյ· այժմ և միշտ և յաւի՚՚։

Երկար կրկնէ։

Օ՛րհնութիւն և փառք ֊Օր և Որդւոյ և ֊Ոգւոյն սրբոյ· այժմ և՚՚։

֊Տայր մեր որ յերկինս՚՚։

Եւ ապա այս կանոն կատարի։ Շարական ակ· Արարիչ Աստուած։ Աստուածածնի և խաչի, և փառք։ Սաղմոս լը։

Ահա չափով եղեր զաւուրս իմ։ Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ։ (Զփոխն լման ասա)։

Ընթերցուածս ի ծննդոց։

Եւ այս են ամք աւուրց կենացն Երրահամու զորս եկաց՝ Հարիւր և եօթանասուն և հինգ ամ։ Եւ պակասեալ Երրահամու մեռաւ

ի բարւոք ծերութեան ալեւորեալ և լի աւուրբք· և յաւելաւ առ ժողովուրդ իւր։ Եւ թաղեցին զնա Իսահակ և Իսմայել որդիք նորա յայրի անդ ի կրկնուս· յագարակին Եփրոնի որդւոյ Սահառայ Քեւտացւոյ· որ է յանդիման Մամբրէի։ Ագարակն և այրն զոր ստացաւ Երրահամ յորդւոցն Քեթայ· անդ թաղեցին զԵրրահամ և զՍառայ զկին նորա։ Եւ եղև յետ մահուանն Երրահամու, օրհնեաց Աստուած զԻսահակ առ Ջհոռի տեսլեանն։ Եւնդ թաղեցին զԻսահակ, և զՌեբեկայ զկին նորա· անդ թաղեցին զԼիայ։ Եւ դադարեաց Յակոբ ի պատուիրելոյ որդւոցն իւրոց· և առեալ զոտն իւր անդրեն ի մահիճս իւր պակասեցաւ· և յաւելաւ առ ժողովուրդ իւր։ Եւ անկեալ Յովսէփ ի վերայ երեսաց Հօր իւրոյ ելաց զնա· և համբուրեաց զնա։ Եւ հրամայեաց Յովսէփ ծառայից իւրոց դիազարդաց, պատել զՀայրն։ Եւ պատեցին դիապատիկքն զԻսրայէլ· և տարան զնա որդիքն իւր յերկիրն Քանանացւոց և թաղեցին յայրին կրկնուս։ Եւ խօսեցաւ Յովսէփ ընդ եղբարս իւր՝ և ասէ· ես ահաւասիկ մեռանիմ· այցելութեամբ այց արասցէ Աստուած, և հանցէ զձեզ յերկրէս յայսմանէ· յերկիր, զոր երդուաւ Աստուած տալ Հարցն մերոց· Երրահամու Իսահակայ և Յակոբայ։

Եւ երդմնեցոյց Յովսէփ զորդիսն Իսրայէլի և ասէ. յայցելութեանն յորում առնիցէ Ձեզ Աստուածն, հանջի՛ք և զիմ ոսկերս աստի ընդ Ձեզ։ Եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր և տասանց. և թաղեցին զնա. և եդին զնա ի տապանի Եգիպտոս։

Ընթերցուածս Յովսեայ։

Բերան խոնարհաց խօսի զնմանութիւն։ Պատարելութիւն ուղղոց առաջնորդեսցէ նոցա. և գայթակղութիւն արհամարհողաց աւերեսցէ զնոսա։ Ոչինչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութեան. այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ։ Ա՛եռաւ արդարն, և եթո՛ղ զղջումն յոյժ. յանդուգնն՝ և ոտնհարութեամբ լինի կորուստ ամբարշտաց։ Երդարութիւն անարատի ուղղէ զճանապարհս. և յամբարշտութիւնս արկանէ անիրաւութիւն։ Երդարութիւն արանց ուղղոց փրկէ զնոսա. անմտութեամբ կորնչին անօրէնք։ Ի վախճանիլ առն արդարոյ ոչ կորնչի յոյս. բայց պարծանք ամբարշտաց կորնչին։ Երդարն յորսողաց փրծանի. և փոխանակ նորա մատնի ամբարիշտն։ Ի բերանս ամբարշտաց՝ որոգայթ քաղաքակցաց. խմաստութիւն արդարոց յաջողեալ է։

Ընթերցուածս յնոյեայ մարգարէէ։

Բայց դուք քահանայք Տեառն կոչիջիք՝ և պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանիջիք. զգօրութիւնս ազգաց կերիջիք. և մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք։ Փոխանակ ամօթոյն ձերոյ կրկին ուրախութիւն. և փոխանակ անարգանաց ձերոց ցնծութիւն. և ապա ժառանգեսցեն զերկիրն յերկրորդում։ Երկիրն յերկրորդում ժառանգեսցեն. և ուրախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա։ Զի ես եմ Տէր՝ որ սիրեմ զարդարութիւն. ևատեմ զյափշտակութիւնս յանիրաւութենէ. և տացե զվաստակս նոցա արդարոց։ և ուխտ յաւիտենից ուխտեցից ընդ նոսա։ Եւ ծանիցի ի մէջ ազգաց զաւակ նոցա. և ծնունդք նոցա ի մէջ ժողովրդոց։ Ամենեքեան որք տեսանիցեն՝ ճանաչեցին զնոսա. և ասիցեն՝ թէ սոքա են զաւակք օրհնեալք Աստուծոյ. և ուրախութեամբ ուրախ եղեցին ի Տէր։

Պետրոսի առաքելոյն ի Կաթուղիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Կանորոյ եղբարք՝ առաւել փութասջիք. զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումն և զընտրութիւնն պահիջէք. զայս արարեալ ո՛չ երբէք յանցանիցէք։ Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ յաւիտենական

արքայութիւն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Որով պատրաստիցիմ միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին առաւել և պիտակացն՝ և հաստատելոցն եկեալ հասեալ ճշմարտութիւնն։ Քանզի իրաւունս համարիմ մինչդեռ եմ ի մարմնի աստ, զարթուցանել զձեզ յիշատակօք։ Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս. որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ։ Եւ փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել. զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս առնիցէք ըզյիշատակս այսոցիկ։

Ալէլո-էյ։ Որպէս սիրելիք են յարկք քո Տէր զօրութեանց։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ. և Աստուած փառաւորեցաւ ինձմա։ Օ՛ի եթէ Աստուած փառաւորեցաւ ինձմա, և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. և վաղվաղակի փառաւորեսցէ զնա։ Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս. և որպէս ասացի ցՀրէայսն, թէ ուր եմն երթամ, դուք ոչ կարէք գալ. և արդ ձեզ ասեմ։ Պատուիրան նոր տամ ձեզ. զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ. զի և դուք սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գիտասցեն

ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր՝ յո՞վ երթաս, պատասխանի ետ Յիսուս. ուր եմն երթամ, դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ։ Ասէ ցնա Պետրոս. Տէր, ընդէր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եդից ի վերայ քոյ։ Պատասխանի ետ Յիսուս. զանձն քո դիցես ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ. չև իցէ հաւու խօսեալ, մինչ դու երիցս ուրասցիս զիս։ Մի՛ խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք յԱստուած, և յիս հաւատացէք. ի տան Հօր իմոյ օթեվանք բազում են. ապա թէ ոչ ասացեալ էր իմ ձեզ. թէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի։ Եւ եթէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ, և առնում զձեզ առիս. զի ուր եմն իցեմ, և դուք ընդիս իցէք։ Եւ ուր երթամն գիտիցէք. և զճանապարհն գիտիցէք։ Ասէ Թովմաս, Տէր՝ ոչ գիտեմք, յո՞ երթաս. և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ ցնա Յիսուս. ես եմ ճանապարհ, և ճշմարտութիւն, և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինձ։ Եթէ զիս գիտէիք՝ ապա և զՀայրն իմ գիտէիք. և այսուհետև գիտասջիք զնա։

մարմնացաւ ի սուրբ և յանարատ կուսէն Մ՚ա-
րիամայ. զգեցաւ զՆահացեալ մարմին ծառա-
յութեան մերոյ (զոր ծառայեցուցաք մահու
մեղացն տարապրութեամբ ի ձեռն կնոջն դա-
ւաճանութեան.) և ազատեցոյց աստուածու-
թեամբն իւրով՝ ի ձեռն կենարար խաչին իւրոյ
և անապական թաղմամբն իւրով։ Ո՞վ զոր
վասն անսուտ բանի քոյ Հարկիւ պարտ էաք
մեռանիլ, եթարձ սքանչելագործ յարութեամբն
իւրով, և լուսաւորեաց զաչս որդւոց մարդկան
ի նոյն նմանութիւն պատկերի քոյ որով ստեղ-
ծեր զնախնին մեր զՀայր։ և ծանոյց մեզ զա-
նուն քո՝ որով արժանաւորեցաք կոչել զքեզ
Հայր։ Վասն զի նստեալով ընդ աջմէ քումմէ
մարմնովն զոր ի մէնջն էառ, և մեզ խոստա-
ցաւ յարութիւն կենաց ի միւսանգամ գա-
լստեանն իւրոյ ի դատաստան յաւուրն յետ-
նում. և պարգեւեաց մեզ ժամադրութիւն զոր-
ծոց բարեաց զանցաւոր կեանս՝ որով մարթաս-
ցուք գտանել զերկիրն կենդանեաց ի ձեռն վար-
դապետութեան սրբոց առաքելոց իւրոց՝ որովք
եթարձ զկռամոլ կռապաշտութիւն յաշխարհէ։
Եւ այժմ Տէր բարերար և բազումողորմ. ըն-
կալ զՀոգի ծառայիս քոյ, որ ելից զժամանակ
պանդխտութեան նշդեհութեան իւրոյ ի վերայ
երկրի, և ընկալաւ զլուծումն յերկրաւոր աշ-
խատութեանցս, և յաշխարհակոծ պատրոյա-

Սարկաւագն հրոչէ։ Վասն ի վերուստ խաղաղ։

Եւ քահանայն ասէ զԱղօթս։

Աստուած յաւիտենական, անսկիզբն՝ անեղ՝
անխմանալի՝ անհասանելի խորհուրդ. Հայր բա-
րեխնամող և ծնող միածնի Որդւոյ, և բըղ-
խող Հոգւոյդ սրբոյ. որ ի քէն ելանէ և ընու
զամենայն արարածս։ Դու Տէր կարող զօրու-
թեամբ քով, առեալ Հող յերկրէ՝ արարեր
զմարդն և բնակեցուցեր զնա յանցաւ և յա-
նաշխատ և յանախտ կեանս անմահ՝ աստ-
ուածագործ տնկոյն վայելչութեամբ և պա-
տուիրանադրութեամբ քով. զգեցուցեր զնա
անամօթ փառօք ի դրախտին փափկութեան։
Սակայն չարին խանդացեալ ընդ մեծութիւն
պատուոյ նորա զոր ի քումմէ բարերարութե-
նէդ ընկալեալ էր. և պատրեալ զնա յաղագս
անհասին ցանկութեանց. որ և զնէրն զտեղի
փառացն ոչ պահեաց, կամակոր եղեալ յերե-
սաց քոց Տէր։ Իսկ յանցանելն նորա զպա-
տուիրանաւ քով՝ Հանեալ եղեր զնա արտա-
քոյ դրախտին փափկութեան, զգեցուցանելով
նմա զմաշկեղէն Հանդերձն, զտխրալի և զախ-
տաւոր մարմինս. և սահմանեցեր Հողագարձիլ
Հողոյն ի Հող։ Եւ ոչ այնու անտես արարեր,
այլ առաքեցեր զմիածին Որդիդ քո, որ եկեալ

կան խաբէութեանցս. և դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեան քում, ուստի մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք. միշտ յարաղուարձ բերկրանօք պայծառացեալ տեսլեամբ աստուածային փառաց քոց, ուր ուրախանան ամենայն ընտրեալք քո։ Ընդ նոսին դասաւորեա Տէր զհոգի հանգուցելոյս մերոյ. զի և մեք սովաւ հանդերձ փառաւորեսցուք զքեզ Հայր՝ հանդերձ Որդւովդ և Հոգւովդ սրբով։ Այժմ և միշտ և յաւի՛։

Խաղաղութեան աղեխցուն

Աստուածոյ երկնպատեսցուք։

Հայր մեր որ յերկինս և յերկրի, և յամենայնի սուրբ եղիցի անուն քո ի վերայ մեր եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. և փառաւորեսցի անուն քո յաւիտեան։ Որ պատրաստեցեր մեզ հանդիսաւ յերկրաւոր աշխատութեանցս՝ յանցաւ և յանաշխատ ի կեանսդ. որ ի ձեռն միածնի Որդւոյ քո սպաներ զմահ, և լուսաւորեցեր զմեզ ի կեանս և յանեղծութիւն։ Որ փրկեցեր զսուրբս քո յիշխանութենէ խաւարի. և փոխեցեր յարքայութիւն Որդւոյ քոյ սիրելւոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընկալ մարդասէր Տէր աղաչեմք զքեզ՝ և զհոգի սորա ընդ սուրբս քո ի հանգստեանդ արդարոց. և թուեա

ի համարս սրբոց քոց ի ձեռն փրկութեան միածնի քոյ՝ և նորոգութեամբ Հոգւոյդ սրբոյ. որովք փառաւորիս Հայր ամենակալ. այժմ և՛։

Յաւուրս անկանի երէց. և ձի պոռնի. Եւ ձի պոռնի ներփ՝ Հոգւոյ. Հայր մեր որ յերկինս՝։

Եւ դնեն ի դագաղն. և բառնան քահանայք և հանեն ի դուրս. և կատարի այս կարգ առ դրանն. Շարական բձ. Որ կոչեցեր։ Աստուածածնի. և խաչի. Սաղմոս. Տէր ողորմութիւն քո յԱփիսեան զղօրծ՛՛։ Խոտովան եղէց քեզ Տէր՛՛։

Ընթերցուածս ի Թուոց։

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի և ընդ Ահարոնի ի Հովիւ լերինն. ի սահմանս երկրին Եդոմայեցւոց՝ և ասէ։ Յաւելցի Ահարոն առ ժողովուրդ իւր. զի մի՛ մոցէք յերկիրն զոր եառու որդւոցն Իսրայէլի. քանզի բարկացուցիք զիս ի վերայ ջուրցն բամբասանաց։ Ա՛ռ զԱհարոն և զեղիազար զորդի նորա. և հան զնոսա ի Հովիւ լեառն յանդիման ամենայն ժողովրդեանն։ Եւ մերկացո զԱհարոնէ զպատմուճան նորա. և զգեցուսցես Եղիազարու որդւոյ նորա. և Ահարոն յաւելեալ մեռցի անդ։ Եւ արար Մովսէս որպէս և հրամայեաց նմա Տէր. և եհան զնոսա ի Հովիւ լեառն առաջի ամենայն ժողովրդեանն։ Եւ մերկացոյց զԱհարոնէ զպ-

հանդերձս նորա. և զգեցոյց նղեսաղարու որդ-
ւոյ նորա։ Նւ մեռաւ Նհարօն ի գլուխ լերինն.
և իջեն Մովսէս և նղեսաղար ի լեռնէ անտի։
Նւ ետես ամենայն ժողովուրդն թէ վախճա-
նեցաւ Նհարօն. և լացին զՆհարօն զերեսուն
օր ամենայն տունն Իսրայէլի։ Նւ վախճանե-
ցաւ Մովսէս ծառայ Նստուծոյ յերկրին Մօա-
բու ըստ բանին Տեառն։ Նւ թաղեցին զնա
ի գայի մերձ ի տունն Փեղովրայ. և ոչ ոք գի-
տաց զգերեզման նորա մինչև ցայսօր։ Նւ
Մովսէս էր ամաց հարիւր և քսանից ի վախ-
ճանին իւրում. և ոչ վատեցին աչք նորա. և
ոչ խորշոմեցան ծնօտք նորա։ Նւ լացին որ-
դիքն Իսրայէլի զՄովսէս յՈսաբովէթ Մօաբու
առ Յորդանանու յանդիման Երիքովի աւուրս
երեսուն. և կատարեցան աւուրք սգոյ լալեացն
Մովսէսի։ Նւ Յեսու որդի Նաւեայ լցաւ Հոգ-
ւով իմաստութեան՝ զի եդ Մովսէս զձեռն իւր
ի վերայ նորա. և հնազանդեցան նմա որդիքն
Իսրայէլի. և արարին որպէս պատուիրեաց Նս-
տուած Մովսէսի։ Նւ ոչ էս եկաց մարգարէ
Իսրայէլի իբրև զՄովսէս այր. զոր ծանեաւ
Տէր դէմ յանդիման։ Զմենայն նշանօք և ար-
ուեստիւք՝ զոր առաքեաց Նստուած առնել
յերկրին Նգիպտացւոց՝ ի փարաւոն և ի ծա-
ռայս նորա. և յամենայն երկիր նորա զնշանա

մեծամեծս։ Զձեռն հզօր. և զբազուկ բարձր՝
զոր արար Մովսէս առաջի ամենայն որդւոցն
Իսրայէլի։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ ՅԱՌԱԿԱՑ։

Իսկ արդարն եթէ հասցէ ի վախճանիլ՝ ի
հանգստեան եղիցի։ Զի ծերութիւն պատուա-
կան՝ ոչ բազմաժամանակեայն է, և ոչ որ թուով
ամացն չափիցի՝ այլ ալեք իմաստութիւն մար-
դոյ են։ Նւ հասակ ծերութեան կեանք անա-
բատք։ Զի հաճոյ եղեալ Նստուծոյ, սիրեցաւ.
և կենդանւոյն ի միջոյ մեղաւորաց փոխեցաւ։
Յափշտակեցաւ՝ զի մի՛ չարութիւն ինչ ջնջեցէ
զնմաստութիւն իւր. կամ նենգութիւն պար-
տիցէ զանձն նորա։ Զի չարութիւն անբզդա-
մութեան շլացուցանէ զբարիս. և յածուճճ
ցանկութեան խուճապէ զմիտս անմեղս։ Կա-
տարեալ ի սակաւուն, ելից զժամանակս եր-
կայնս։ Զի ցանկալի էր Տեառն անձն նորա.
վասն այնորիկ տագնապեցաւ ի միջոյ չարեաց։
Իսկ ժողովուրդք տեսին և ոչ իմացան և ոչ
եդին ի մտի զայսպիսի ինչ. եթէ իրաւունք
Նստուծոյ ի վերայ սրբոց իւրոց. և այցելու-
թիւն ի վերայ ընտրելոց նորա։ Դատապարտէ
արդար հանգուցեալ զամբարիշտս կենդանիս՝ և
մանկութիւն վաղվաղակի վախճանեալ՝ զբազ-

մամեայ ծերութիւն անիրաւի։ Օվ տեսցին զվախճան իմաստնոց և ոչ իմացին՝ զի՞նչ խորհեցաւ վասն նորա. և առ իմ՞ զգուշացաւ նմա Տէր։

Ընթերցուածս յերեմիայ մարգարէէ։

Ասուած հզօր հայեցաւ յաղքատութիւն իմ, ի ձեռն գաւազանի սրտմտութեան իւրոյ։ Ընկղոյզ զիս. և էած ի վերայ իմ խաւար՝ և ոչ լոյս։ Դայց սակայն դարձոյց ի վերայ իմ զձեռն իւր զօրհանապազ։ Մաշեաց զմորթ իմ և զմարմին իմ։ և զոսկերս իմ փշրեաց առհասարակ։ Շինեաց ի վերայ իմ. և պատեաց ըզպլխով իմով։ Նա ջանացաւ՝ նստոյց զիս ի խաւարի իբրև զմեռեալ յաւիտենից։ Պատեաց ի վերայ իմ։ և ոչ կարեմ խլրտիլ. ծանրացոյց ի վերայ իմ քան զպղինձ։ Նա արար զիս նեոտալից. և եղէ ծաղր ժողովրդեան իմոյ։

Պօղոսի առաքելոյն ի Կարնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Զայս գիտեմք՝ եթէ որ յարոյցն զՅիսուս, և զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ՝ և յանդիման կացուսցէ ձեօք Հանդերձ։ Օվ ամենայն ինչ վասն ձեր է, զի շնորհքն յաճախեալք ի բազմաց գոհութենէ անտի՝ առաւելացին

ի փառս Աստուծոյ։ Վասն որոյ և ոչ ձանձրանամք. այլ թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի՝ այլ ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ։ Օվ առժամայն յաճախութիւն թեթև նեղութեանս մերոյ՝ ի յաւիտենականն առաւելութիւն, զմեծութիւն փառացն գործէ ի մեզ։ Վանզի՝ ոչ դիտեմք զերևելիսս՝ այլ զաներևոյթսն. զի երևելիքս առժամանակ մի են. և աներևոյթքն յաւիտենականք։ Վանզի գիտեմք եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի. զշինուած Աստուծոյ ունիմք. տաճար առանց ձեռագործի, յաւիտենական յերկինս։ Եւ ընդ այս տաղտկամբ. քանզի զբնակութիւն երկնից փափագիմք զգենուլ։ Միայն թէ յորժամ զգենուցումք՝ ոչ մերկք գտանիցիմք։ Վանզի որք եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամբ ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ. այլ զայն ի վերայ այսր զգենուլ. զի ընկղմեսցի մահկանացուս ի կենաց անտի։ Այլ որ յաջողէն մեզ ի սոյն Աստուած է. որ եառ մեզ զառհաւատչեայ հոգւոյն։ Ընդ համարձակիմք յամենայն ժամ՝ և գիտեմք, եթէ որչափ յամեմք ի մարմնի աստ՝ օտարացեալ նամք ի Տեառնէ։ Օվ հաւատովք գնամք և ոչ կարծեօք։ Այլ համարձակիմք՝ և առաւել ևս հաճեալ եմք ելանել ի մարմնոյ աստի՝ և

մտանել առ Ստուած։ Ալան որոյ և առա-
տանամք. զի եթէ յամիցեմք և եթէ ելանի-
ցեմք՝ հաճոյ և եթ իցեմք նմա։ Ուրանզի ամե-
նեցուն մեզ յանդիման լինիլ կայ առաջի ա-
տենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր
իւրով մարմնովն զոր ինչ գործեաց յառաջ
եթէ բարի և եթէ չար։

Ալէլ-է։ Հաւատացի զոր և խոսեցայ. և ես խո՛։ Ես ասացի
ի զարմանալ իմում. թէ ամե՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պա-
հեսջիք։ Ես ես աղաչեցից զՀայր. և այլ մխի-
թարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցի
ի յաւիտեան։ ԶՀոգին ճշմարտութեան. զոր
աշխարհս ոչ կարէ ընդունիլ. զի ոչ տեսանէ
զնա. և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանա-
չէք զնա. զի առ ձեզ բնակեսցի և ընդ ձեզ
եղիցի։ Ո՛չ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։
Փոքր միւս ևս, և աշխարհս ոչ ևս տեսանէ
զիս. բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կեն-
դանի եմ. և դուք կենդանի լինելոց էք։ Յայնմ
աւուր գիտասջիք դուք՝ զի ես ի Հօր իմում, և
դուք յիս, և ես ի ձեզ։ Որ ունի զպատուիրա-
նսս իմ, և պահէ զնոսա. նա է որ սիրէ զիս. և

որ սիրեն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ և ես սիրե-
ցից զնա. և երևեցուցից նմա զիս։ Ասէ ցնա
Յուդա ոչ Իսկարիովտացին. Տէր, զի՞ եղև՝ զի
մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի։ Պա-
տասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. եթէ ոք սիրէ
զիս՝ զբանն իմ պահեսցէ. և Հայր իմ սիրեսցէ
զնա. և առ նա եկեսցուք և օթեվանս առ նմա
արասցուք։ Ընդ որ ոչն սիրէ զիս՝ զբանն իմ ոչ
պահէ. և բանն իմ, զոր լսէք՝ ոչ է իմ. այլ Հօրն,
որ առաքեացն զիս։

Սալա-ոքն փոյղէ։ Վասն ի գիշերի և ի տուրն՛։

Եւ քահանայն ասէ զՀաղօթս։

Օրհնեալ ես արդար դատաւոր և ողորմած
Ստուած. որոյ ճշմարտութիւնդ անպատում է,
և ողորմութեանդ ոչ գոյ թիւ. և վասն արդար
դատաստանի քոյ, լուծեր ի հոգ գընչաւոր մար-
մինս մեր զպատրեալս ի բանսարկուէն՝ ասելով
հոգ էիր և ի հոգ դարձիս. ըստ որում խոնար-
հեցան անձինք մեր՝ և յերկիր մաճան մէջք մեր։
Իսկ վասն բազում ողորմութեան քոյ մարդասէր
Տէր, խոնարհեցար միւսանգամ նորոգել ի մար-
մին հոգևոր. առաքեցար զու առ մեզ ինքնին
միածինդ Հօր, և տպաւորեցեր յանձին քում
կամաւորութեամբ զմեր մահս. եղար ի գերեզ-
մանի. համարեցար ընդ մեռեալս, յարուցեալ

Համբարձար փառօք՝ նստար ընդ աջմէ Հօր· և զնկակիցս մահու քոյ, խոստացար առնել ըստ նմանութեան քոյ՝ զսիրելիս քո· և զմարմին խոնարհութեան նոցա կերպարանակից առնել մարմնոյ փառաց քոց յերկիւղ յայտնութեան քոյ ի փող յետին՝ յորժամ գայցես տալ նոցա վարձս։ Ո՛ անսուրց աղաչեմք զքեզ Տէր բարեբար· արա և զսա արժանի փառաւոր յարութեանդ ընդ սուրբս քո, յաւուր յայնմիկ հանդիպիլ քեզ ամպովք յօդս· որպէս զի զուարթերես կացցէ յաջակողման ընդ ընտրելոց քոց, և զնոցա խոստացեալ բարիսն ժառանգեսցէ· և զոհանալով փառաւորեսցէ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ· այժմ և՚։

Յաղագս-ընդ-ամենայնի

Աստուածոյ երկրպագելոյ։

Որ յերկնային զինուորութեանցն անդադար փառաբանիս սրբասացութեամբ ի հրեշտակացն, աթոռոց՝ զօրութեանց՝ տէրութեանց՝ պետութեանց՝ իշխանութեանց՝ սերովբէից և քերովբէից, որք անլռելի պարակցութեամբ հանապազ զքեզ գովեալ փառաւորեն, հաճեցար և ի սուրբսդ առնուլ զքեզ երկրպագութիւնս։ Դու՛ Տէր՝ անսուտ բանիւ քով խոստացար և ասացեր· եթէ որ հաւատայ յիս, զմա՛ մի՛

տեսցէ ի յաւիտեան· և զփոխուսն որպէս ի մահուանէ ի կեանս օրինադրեցեր, կոչելով զքեզ Աստուած կենդանեաց· վասն զի ամենեքեան քեզ կենդանիք են։ Ընկալ մարդասէր Տէր, աղաչեմք զքեզ զնդրուածս մեր· և դասաւորեա զհոգի հանգուցելոյս (պայս անուն) քահանայի ի քեզ ճշմարիտ հաւատով ընդ ամենայն սուրբս քո՝ յաւաջագահ դասուն ի միւնանգամ քո գալստեանդ· զի և սա արժանաւոր եղեցի զոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ· այժմ և՚։

ՅԱյսօրէնէ ի յաւ. և յաւիտ. Հոգւոց՚· Հայր մեր՚։

Եւ բառնան առանին դէպ յեկեղեցին· բայց ի ճանապարհին ի չորս տեղւոջ հանգիստ առնեն։ Յառաջին հանգիստն այս կարգ կատարի։ Շարական առ. Այսօր գոլով ի Բեթանիայ՚։ երեք տուն։

Ընթերցուածս յհինգերորդ մարգարէէ։

Որ արձակեաց Տէր ի վերայ Յակոբայ· եկն՝ և եհաս ի վերայ Իսրայէլի։ Եւ ծանիցեն ամենայն ժողովուրդք Եփրեմեան՝ և որ նստին ի Սամարիայ· որք հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ սրտից խօսեցան և ասեն։ Աղիւսք անկան· այլ եկայք վէմս տաշեսցուք՝ զմայրս և զեղևնափայտս հարցուք· և շինեսցուք մեզ աշտարակ։ Եւ կործանեսցէ Աս-

տուած գյարուցեալն ի վերայ լերին սիօնի. և զԹշնամիս մեր ցրուեսցէ։ Ձատորեստանն յե-
լեցն արևու. և զՅոյնան ի մուիցն արևու. զոր ուտէին զարայել բերանալեր ամենայն բերա-
նով. ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ բար-
կութիւնն, այլ տակաւին ձեռն իւր բարձրա-
ցեալ է։

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին Թղթոյն է ընթերցուածս։

Բայց զայս ասեմք Տեառն բանիւ՝ եթէ մեք՝ որք կենդանիքս մնացեալ եմք՝ ի գալստեան Տեառն ոչ ժամանեմք զննջեցելոցն։ Ձի ինք-
նին Տէր հրամանաւ և ի ձայն հրեշտակապետի՝ և ի փող Աստուծոյ՝ իջանէ յերկնից. և մե-
ռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք որք կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակիցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։ Ընդունեալ միխիթա-
րեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

Ալ-լ-էյ։ Էհան զիս ի գբոյ տառապանաց ի կա՞։

Արբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Եւ իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն։ Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ա-

պարիսօք ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն։ Եւ ի չորրորդ պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով ի վերայ ծովուն։ Իբրև տեսին զնա աշակերտքն՝ զի գնայր ի վե-
րայ ծովուն, խռովեցան. և առ ահին աղաղա-
կեցին։ Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ. քաջալերացարուք՝ ես եմ, մի՛ երկնչիք։ Պատասխանի եւ նմա Պետրոս և ասէ. Տէր, եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ ջրոցս։ Եւ նա ասէ՝ եկ. և իջեալ ի նաւէն Պետրոս գնաց ի վերայ ջրոցն՝ և եկն առ Յիսուս։ Եւ տեսեալ զհողմն սաս-
տիկ՝ երկեաւ. և իբրև սկսաւ ընկղմիլ՝ աղա-
ղակեաց և ասէ, Տէր փրկեա զիս։ Եւ վաղ-
վաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա և ասէ. Թերահաւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր։ Եւ իբրև ելին ի նաւն՝ հանդարտեցաւ հողմն։ Եւ որք ի նաւին էին՝ մատեան և երկիրպագին նմա և ասեն՝ արդարև Որդի Աստուծոյ ես դու։ Եւ անցեալ ի ցամաք՝ եկին ի Գեննեսարէթ։ Եւ իբրև ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ և ածին առ նա զամենայն հիւանդս։ Եւ աղաչէին զնա, զի զգանե միայն ի քղանցս հանդերձի նորա մերձենացին. և որք միանգամ մերձեցան փրկեցան։

Սաբէաՙ-ափն ֆարողէ: Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցո՛ւք. ընկալ կեցո և ողորմեա:

Ե- ֆհնդ. ասէ էրէֆ Տէր ողորմեա, և ապա ընթեռնու զԱղօթս:

Որ թագաւորդ ես յաւիտենից և ևս, որ առնես զամենայն ինչ առաւել քան զոր խնդրէմք և իմանամք. որ զամենայն ինչ ի բարի մատակարարեցեր որդւոց մարդկան: Ընկալ զՀոգի քահանայիս (այս անուն.) և հանգո՛ ընդ սուրբս քո՝ որք ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ: Ընկալ զսա ընդ արդարս քո. և ի խորանս սիրողաց քոց բնակեցո՛ զսա: Եւ եթէ մարդկօրէն ինչ յանցեալ իցէ սորա, բանիւ՝ կամ գործով՝ կամ մտածութեամբ, Դու որպէս բարերար և մարդասէր և ողորմած Աստուած թողութիւն շնորհեա սմա: Եւ զմեր ամենեցուն եղիս յաշխարհէս խաղաղութեամբ յայղոլեա, լինիլ ժառանգորդ երկնից արքայութեանդ: Օ՛ի և մեք յամենայն ժամ փառաւորեսցուք զ՚Այր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և՚: Հոգւոց՚: Ա՚ան հանգ՚: Քրիստոս Որդի՚: Հայր մեր՚:

Եւ բարձեալ տանիցեն մինչև ի յերկրորդ Հանգիստն: Եւ անդ դարձեալ սկսանին Շարական ած. կենդանութեանդ բաշխող Քրիստոս ի բնութիւնս՚: Երեք տուն:

Ընթերցուածս յՀայոցէ մարգարէ է:

Ա՚ան այսորիկ այսպէս ասէ Տէր ի վերայ տանդ Յակոբայ զոր ընտրեաց յԱբրահամէ. ո՛չ այժմ ինչ ամաչեսցէ Յակոբ. և ո՛չ զերեսս այլափոխեսցէ Իսրայէլ: Այլ յորժամ տեսցեն որդիք նոցա զգործս իմ, ա՚ան իմ սուրբ առասցեն զանուն իմ. և սուրբ արասցեն զսուրբն Յակոբայ. և երկիցեն յԱստուծոյ Իսրայէլի: Եւ ծանիցեն մոլորեալքն զիմաստութիւն. և տրտնջողքն ուսցին զհնազանդութիւն. և լեզուք թոթովախօսք ուսցին խօսիլ զխաղաղութիւն:

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս:

Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զիմաստութիւն, ո՛չ զաշխարհիս այսորիկ. և ո՛չ զիշխանաց աշխարհիս այսորիկ զնախանձելեացս: Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով. զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ի փառս մեր: Օ՚որ ո՛չ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ.

զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն փա-
ռաց ի խաչ հանէին։ Այլ որպէս և գրեալ է.
զոր ակն ոչ ետես. և ունկն ոչ լուաւ. և ի սիրտ
մարդոյ ոչ անկաւ. զոր պատրաստեաց Ա-
ստուած սիրելեաց իւրոց։ Այլ մեզ յայտնեաց
Աստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամե-
նայն քննէ՝ և զխորս Աստուծոյ։

Ալէլ-նյ։ Փրկէ Տէր զանձինս Ծառայից իւրոց, և մի՛ զըղ-
ջասցին ամենեքեան որք յուսացեալ են ի նա։

Արքայ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Ականջ առէք ցնա Պետրոս. ահաւասիկ մեք
թողաք զամենայն և եկաք զկնի քոյ։ Պատաս-
խանի եւ Յիսուս և ասէ. ամէն ասեմ՛ ձեզ.
ոչ ոք է որ եթող զտուն՝ կամ զեղբարս՝ կամ
զքոյր՝ կամ զՀայր՝ կամ զմայր՝ կամ զորդիս՝
կամ զագարակս վասն իմ՝ կամ վասն աւե-
տարանին։ Եթէ ոչ առնուցու հարիւրապա-
տիկ այժմ ի ժամանակի յայսմիկ տունս՝ և
զեղբարս՝ և քոյրս՝ և զմայրս՝ և որդիս՝ և
ագարակս՝ հալածանօք հանդերձ. և յաշխար-
հին որ գալոցն է զկեանսն յաւիտենականս։
Այլ բազումք եղեցին առաջինք յետինք՝ և յե-
տինք առաջինք։

Սարկաւագն ասդին։ Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք՝
ընկալ՝ կեցո և ողորմեա։ Ի— Տահանայն առ երէս պէչ պղպջէ։

Եւ ասէ զՎաղծիս։

Տէր տերանց՝ Աստուած աստուածոց՝ արարիչ
ամենայն արարածոց, Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի. որ օրհնեալդ ես և փառա-
ւորեալ յաւիտեան։ Դու Տէր կարող յամե-
նայնի, նայեա ի մեզ՝ և ողորմեա մեզ. և մի՛
անտես առներ զստեղծուածս ձեռաց քոց։
Թէպէտ ոկար և անարժան եմք, սակայն յու-
սամք զթողութիւն մեղաց գտանել ի քէն. զի
ողորմութիւն քո յաղթող գտանի ի վերայ բա-
րերար կամաց քոց։ Տէր բարերար և անհա-
կալ. տուր մեզ համարձակութիւն կալ առաջի
աստուածութեանդ քո։ Եւ զոր ընտրեցեր և
կոչեցեր յառաջնորդութիւն՝ այժմ հրաժա-
րեաց ի մէնջ, և գարձաւ ի հող յորմէ ստեղ-
ծեր զդա։ Ա՛նտորոյ մեք ժողովուրդք քո և
գինք արեան միածնի քոյ աղաչեմք զքեզ՝ զի
Հանդուսցես զՀոգի սորա առ ամենայն սրբոց
և սիրողաց անուան քոյ։ Եւ ի միւսանգամ
գալստեանն քոյ յորժամ գայցես տալ վարձս
ծառայից քոց, բարերարեա մարդասէր Տէր
ի ծառայս քո՝ որ այժմ Հանդուցեալս է. և
թո՛ղ սմա զյանցանս իւր և զմեռաւածութիւնս,

որ խորհրդովք և որ գործովք. զկամայ և զա-
կամայ. զգիտութեան և զանգիտութեան: Եւ
Տոզւոյ սորա առաջնորդեա յերկիր ուղիղ՝ որ
տանի ի կեանսն յաւիտենականս: Եւ զմեզ զա-
մենեսեան օրհնեա Տոգևոր օրհնութեամբ քով.
և առաջնորդեա մեզ արժանաւորիլ աղքայու-
թեանդ ընդ ամենայն սուրբս քո: Այլ այժմ
և յամենայն ժամու միշտ գոհանալով փառա-
ւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի.
այժմ և":

Հոգւոց": Ա՛ան Հանգ". Քրիստոս Որդի":
Հայր մեր":

Եւ տարցեն ի Յերրորդ Հանդիսան: և անդ ասեն Շարական բձ.
յԱստուածային ծայնէ": Երեք տուն:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէ է:

Եւ արդ՝ այսպէս ասէ Տէր Աստուած՝ որ
արար զքեզ Յակոբ. և որ ստեղծն զքեզ Իս-
րայէլ. Մի՛ երկնչիր, զի փրկեցի զքեզ. և կո-
չեցի քեզ անուն քո՝ թէ իմ ես: Եւ եթէ
անցանես ընդ ջուրս, ընդ քեզ եմ. և գետք
զքեզ մի՛ ողողեսցեն, և եթէ անցանիցես ընդ
հուր մի՛ այրեսցիս, և բոց նորա զքեզ մի՛
կիզցէ: Այլ ես եմ Տէր Աստուած քո սուրբն

Իսրայէլի՝ որ փրկեմ զքեզ: Ընդարձ փոխանակ
քոյ զԵգիպտոս՝ և զԵթովպիա՝ և զՍուհէն
քեզ փոխանակեցի: Ուստի և պատուական իսկ
եղեր առաջի իմ. փառաւորեցար՝ և ես սիրե-
ցի զքեզ. և տայց զմարդիկ փոխանակ քոյ. և
իշխանս փոխանակ զկեանս քոյ: Մի՛ երկնչեր՝
զի ես ընդ քեզ եմ. յարևելից ածից զզաւակ
քո. և յարևմտից ժողովեցից զքեզ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է
ընթերցուածս:

Այլ ասիցէ ոք. զկնի՞դ յառնեն մեռեալք՝
կամ որո՞վ մարմնով գայցեն: Ընդմիա՝ դու զոր
սերմանեան, ո՛չ կենդանանայ՝ թէ ո՛չ մեռանի-
ցի: Եւ զոր սերմանեան, ո՛չ զնոյն մարմին որ
ծնանելոցն իցէ, սերմանես. այլ հատ մերկ. եթէ
ցորենոյ իցէ՝ և եթէ այլոց սերմանեաց: Եւ
Աստուած տայ նմա զմարմին՝ որպէս և կամի.
և իւրաքանչիւրոց սերմանեացն զնւր մարմին:
Ո՛չ ամենայն մարմին նոյն մարմին է. այլ այլ
մարմին է մարդկան, և այլ մարմին անասնոց.
այլ մարմին թռչնոց՝ և այլ մարմին ձկանց:
Եւ մարմինք երկնաւորք՝ և մարմին երկրաւորք.
այլ այլ փառք երկնաւորաց՝ և այլ փառք եր-
կրաւորաց: Այլ փառք արեգական, և այլ փառք
լուսնի. և այլ փառք աստեղաց. և աստղ. քան
զաստղ առաւել է փառօք: Նոյնպէս և յա-

րութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ՝ և յառնէ առանց ապականութեան։ Սերմանի անարգութեամբ՝ և յառնէ փառօք. սերմանի տկարութեամբ՝ և յառնէ զօրութեամբ։ Սերմանի մարմին հնչաւոր՝ և յառնէ մարմին հոգևոր։

Ահա՛ եմ Դուռ յարուցեալ գիտացիս ի վերայ սիոնի՛"։

Արքայ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Զգոյշ լերուք անձանց. գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ՝ և հոգւոք աշխարհականօք. և յանկարծակի հասանիցի ի վերայ ձեր օրն այն։ Ոչ իբրև զորոգայթ հասանիցի ի վերայ ամենեցուն, որք բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Ընթա՛ն կացէք այսուհետև. յամենայն ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք վերծանիլ յայնմ յամենայնէ, որ լինելոցն է. և կալ առաջի Որդւոյ մարդւոյ։ Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր. և զգիշերս ելեալ ապանիւր ի լերինն՝ որ կոչիւր Ձիթենեաց։ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ի տաճարն լսել ի նմանէ։

Սարկաւագն տպրոցէ։ Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ՝ կեցո՛ և՛"։ Ես տահասցի ասէ երէց տէր ողորմած։

Եւ ասէ զաղօթս։

Որ արարիչդ ես ազգի մարդկան և ստեղծիչ Քրիստոս Աստուած մեր, որ ի ձեռն սուրբ յարութեան քոյ ազատեցեր զմեզ ի ծառայութենէ մահու։ Նոյն ինքն և այժմ Տէր՝ զառ ի յեղս ճանապարհի յաշխարհէս զծառայիս քոյ՝ խաղաղութեամբ յաջողեա՛. և առաջնորդեա՛ սմա ի ձեռն հրեշտակին խաղաղութեան ի յօթևանս սրբոց քոց առաքելոցն։ Ոչ Դո՛ւ ես Տէր Աստուած մեր, և քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ"։

Ո՛ղորմ"։ Ա՛մէն հանգ"։ Քրիստոս Որդի"։ Հայր մեր"։

Ածեն ի չորրորդ Հանգիստն։ Եւ ասեն Շարական դձ. Աղաչեմ անմահութեան բնակել ի բնութ"։ երեք տուն։

Ընթերցուած յԱստուածային մատեանէ։

Լուարո՛ւք ինձ կղզիք, և ունկն դիք հեթանոսք. յետ բազում ժամանակաց հաստատեսցի այդ ասէ Տէր. յարգանդէ կոչեաց զիս Տէր.

և յորովայնէ մօր իմոյ կարդայ զանուն իմ։ Եդ զբերան իմ իբրև զսուսեր սուր· և ընդ հովանեաւ ձեռին իւրոյ թաքոյց զիս· եդ զիս իբրև զնետ մի ընտիր, և ի կապարճս իւր թաքոյց զիս։ Եւ ասէ ցիս· Ծառայ իմ ես դու· և ես ի քեզ փառաւորեցայց։ Եւ ասեմ, ի զուր ուրեմն վաստակեցի ի տարապարտուց· յոչինչ եառու զզօրութիւն իմ· վասն այնորիկ իրաւունք իմ ի Տեառնէ· և վաստակ իմ առաջի Աստուծոյ իմոյ։ Եւ արդ այսպէս ասէ Տէր Աստուած, որ ստեղծն զիս յորովայնէ ծառայ իւր· ժողովել զՅակոբ և զԻսրայէլ առ ինքն· ժողովեցայց, և փառաւորեցայց առաջի Տեառն· և Աստուած իմ է ինձ զօրութիւն։ Եւ ասէ ցիս· Մեծ է քեզ այդ՝ կոչիլդ քեզ ծառայ իմ· հաստատել զազգն Յակոբու՝ և զզրուեալսն Իսրայէլի դարձուցանել· ահաւադիկ եառու զքեզ յուխտ ազգի՝ և ի լոյս հեթանոսաց։

Պօղոսի առաքելոյն ի կողնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Արդ՝ զհորհուրդ մի ասեմ ձեզ· ամենեքեան ննջեցուք, այլ ոչ ամենեքեան նորոգիցուք։ Յանկարծակի յաւուր թօթափել ի փող յետին· քանզի փող հարկանի· և մեռեալք

յարիցեն առանց ապականութեան· և մեք նորոգիցուք։ Օվի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն· և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն։ Այլ յորժամ մահկանացուս այս՝ զգեցցի զանմահութիւն, և ապականացուս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն՝ որ գրեցաւ· Եթէ ընկլաւ մահ ի յաղթութիւն։ Որ է մահ յաղթութիւն քո· ո՛ւր է մահ յաղթութիւն քո· ո՛ւր դժոխք խայթոց քո։ Խայթոց մահու մեղք են, և զօրութիւն մեղաց օրէնք։ Այլ շնորհք Աստուծոյ որ ետ մեզ զյաղթութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի· որում փառք յաւիտեանս ամէն։

Ալէլո-յա։ Տուր զօրութիւն ծառայի քոյ՝։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ես եմ լոյս աշխարհի· որ գայ առիս՝ ի խաւար մի՛ մնասցէ· այլ ընկալցի զլոյսն կենաց։ Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց և ոչ պահիցէ, ես ոչ դատեմ զնա· քանզի ոչ եկի թէ դատեցից զաշխարհ· այլ զի փրկեցից զաշխարհ։ Որ անարգէ զիս, և ոչ ընդունի զբանս իմ, զո՛յ՝ որ դատէ զնա· բանն, զոր ես խօսեցայ, նա դատէ զնա յաւուրն յետնում։ Օվի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ· այլ որ առաքեացն

զնս Հայր, նա՛ ետ ինձ պատուէր՝ զի՞նչ ասացից՝ կամ զի՞նչ խօսեցայց։ Եւ գիտեմ, եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք։ Ո՛րդ՝ զոր եմն խօսիմ, որպէս պատուիրեաց ինձ Հայր, այնպէս խօսիմ։

Սարկաւագն ՚ասէ՝ Եւ մա խաղաղութեան զՏէր աղաչեսցուք՝ ընկալ՚։ Ն՚ահանգն ասէ երէ՛ փէր ողորմեա։

Եւ ասէ զԱղօթս։

Ստուած Հոգւոց և ստեղծիչ մարմնոց՝ որ զմահ խափանեցեր և զսատանայ կոխեցեր՝ և աշխարհի կեանս պարգևեցեր։ Հանդո՛ զՀոգի ծառայիս քո (այս անուն Հանգչէ) ի տեղւոջ լուսոյ և ի տեղւոջ Հանգստեան՝ ուստի փախուցեալ են ամենայն ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք։ Եւ ամենայն մեղաց առ ի սմանէ գործելոյ՝ նեբո՛ւմն արասցես՝ եթէ բանիւ կամ գործով կամ մտածութեամբ՝ դու որպէս բարերար և ողորմած և մարդասէր Ստուած թողութիւն շնորհեա սմա։ Ա՚ստ զի ո՞վ է մարդ՝ որ կեցցէ և ոչ մեղեցէ՝ զի դու միայն ես առանց մեղաց՝ և արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից՝ որ ո՛չ անցանէ՝ և բանք քո ճշմարիտ են։ Ո՚վ դո՛ւ ես կեանք և յարութիւն ամենայն ննջեցելոց։

Եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և՚։

Հոգւոյ՚։ Ա՚ստ Հանգո՛ւ՚։ Վ՚րիստոս որդի՚։ Հայր մեր՚։

Եւ բառնան քահանայքն՝ և բերեն ի դուրս սրահի եկեղեցւոյն։ Իսկ թէ սրահ ո՛չ իցէ՝ այսինքն ծամատուն՝ ածցեն յանդիման դրան եկեղեցւոյն ի բացեայ։ Եւ այս կանոն կատարի։ Շարական բկ։ Ո՛ր որդիդ ես եւ Բանդ Աստուած։ Ա։ շարական Աստուածածնի և ա։ խաչի։ Սաղմոս լգ։ Ա՚յս ապրատ կարդայ առ Ց՚եր՚։ Օրհնեցից զՏէր յամենայն՚։

Ընթերցուած Յեսուայ որդւոյ Նաւեայ։

Եւ պաշտեաց Իսրայէլ զՏէր զամենայն աւուրս Յեսուայ՝ և զամենայն աւուրս ծերոցն՝ որք ձգեցին զժամանակս ընդ Յեսուայ՝ որք և տեսին զամենայն գործս Տեառն՝ զորս արար Իսրայէլ։ Եւ եղև յետ այսորիկ մեռանիլ Յեսուայ որդւոյ Նաւեայ ծառայի Տեառն՝ հասակաւ և տան ամաց։ Եւ թաղեցին զնա առ սահմանօք ժառանգութեան իւրոյ ի Թամնասաքար ի լերինն Եփրեմայ հիւսիսոյ՝ լերինն Գաաշոյ։ Եւ անդ եդին ընդ նմա ուր թաղեցին զնա առ ի չիշատակ՝ զսուրն քարեղէնս՝ որով թլփատեաց Յեսու զորդիսն Իսրայէլի ի Գաղգաղայ՝ յորժամ էհան զնոսա յերկրէն Եգիպտացւոց որպէս հրամայեաց Տէր։ Եւ անդ են մինչև ցայսօր ժամանակի։ Եւ զօսկերան Յով-

սէփու Հանին որդիքն Իսրայէլի Յեգիպտոսէ. և Թաղեցին զնա ի Սիկիմ, ի բաժնի ագարակին զոր առացաւ Յակոբ Յեմօրհացւոցն բնակելոցն ի Սիկիմ որոյց Հարիւրոց. և եա զայն Յովսէփայ ի բաժնի։ Եւ եղև յետ այսորիկ վախճանիլ Եղեազարու քահանայի որդւոյ Ընհարօնի. և Թաղեցաւ ի Գաբաաթ Փենէէսի որդւոյ իւրում, զոր եա նմա ի լերինն Եփրեմայ։ Յաւուրսն յայնոսիկ առեալ որդւոցն Իսրայէլի զտապանակ ուխտին Ընտուածոյ չըՋեցուցանէին ընդ իւրեանս։ Եւ քահանայացաւ Փենէէս փոխանակ Եղեազարու Ընօր իւրոյ. մինչև մեռաւ և Թաղեցաւ յիւրումն Գաբաաթ։ Եւ որդիքն Իսրայէլի գնացին իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց՝ և իւրաքանչիւր ի քաղաքս իւրեանց։

Ընթերցուած յերեմիայ մարգարէ է։

Յիշեա Տէր՝ որ ինչ անցք անցին ընդ մեզ. նայեաց, և տես զնախատինս մեր։ Ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն. և բնակութիւն մեր ի նշդեհութիւն։ Որբ մնացաք՝ և ոչ գոյր մեր հայր. մարք մեր իբրև այրիք ի ժամանակաց մերոց։ Ընչուր մեր գնոյ արբաք. և փայտն մեր առանց փոխանակի։ Նկն ի վերայ պարանոցի մերոյ՝ հալածականք եղաք. և ոչ

գտաք հանգիստ։ Զեռնաձիգք եղեն Եգիպտացիքն՝ և Ընօրեստանեայք, յագեցուցանել հացիւ։ Ընարքն մեր մեղան. և չիք ուրեք ի միջի. և մեղք հարցն ընդ մեզ եղեն։ Ծառայք տիրեցին մեզ. և այն որ փրկէրն զմեզ ի ձեռաց նոցա. չիք ուրեք ի միջի։

Պետրոսի առաքելոյն ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Օրհնեալ է Ընաուած և Ընայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի. ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց։ Յանեղծ՝ և յանարատ՝ և յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս ձեզ։ Որք զօրութեամբն Ընաուածոյ պահեալք էիք հաւատովք ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնիլ ի յետին ժամանակս։ Որով ուրախ լինիջիք՝ որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալ էք ի պէսպէս փորձութիւնս։ Զի հանդէս ձերոց հաւատոցն առաւել քան զոսկի կորստական պատուական է. որ հրով փորձեալ գտաւ ի գովութիւն և ի փառս, և ի պատիւ յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի։ Զոր ոչն տեսիք՝ և սիրեցիք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք՝ բայց

Հաւատացիք. և ուրախ էք անձառ և փառաւորեալ խնդութեամբն։ Ընկալեալ զկատարումն Հաւատոցն ձերոց զոգւոցն փրկութիւն։

Ալէլ-ւյա։ Տէր լոյս իմ և կեանք իմ. ես յոմմէ երկեայց Տէր ապաւէն կենաց իմոց ես՝։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզս եմ։ Եկն ժխտարիչն Հոգին սուրբ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն. և յիշեցուսցէ զամենայն, զոր ինչ ասացի ձեզ։ Խաղաղութիւն թողում ձեզ. զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր. և մի զանպիաեսցեն։ Լուայք, զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ, և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ. զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասացի ձեզ մինչչեւ եղեալ. զի յորժամ լինիցի Հաւատասջիք։ Ոչ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ՝ և ի իս ինչ ոչ գտանէ։ Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զՀայր. և որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ. օն արիք գնասցուք ասէ։

Սրկա-ւեն էոլողէ։ Վասն ուղղելոյ զգնացս մեր՝։

Եւ ասէ զԱղօթս։

Տէր Ստուած փրկիչ մեր մարդասէր. կարդամք զմեծ և զամենասուրբ անունդ քո։ Հանդո զհոգի ծառայիս քոյ (այս անուն) քահանայապետական աղաչանօք սրբուհւոյ Ստուածածնին և ամենայն սրբոց, և որք միաբանեալ հայցեմք ի քո առատ մարդասիրութենէդ՝ շնորհել զթողութիւն մեղաց նորա։ Զի դու Տէր շնորհեցեր ծառայի քում առաջնորդութիւն, հովուել իմաստութեամբ զժողովուրդս քո։ Նոյն ինքնդ և այժմ շնորհեա սմա ընդ երջանիկ հայրապետացն վերադասիլ. զի ընդ նոսին փառաւորեսցէ զՀայր և զՈրդի և՝։

Խաղաղո-ւթի-ւն աջնեցո-ւն

Աւրհո-ւծոյ եղիցի պահե-ցո-ւ։

Ով Տէր ամենեցուն և արարիչ. ով Ստուած ամենեցուն՝ և Տէր, և Հայր, և ուղղիչ։ Ո՞ կենաց և մահու Տէր։ Ո՞ հոգւոց մերոց շահեմարան և բարեգործ. որ առնես զամենայն, և յօրինեալ փոփոխես արուեստաւոր բանիւդ ըստ ժամանակի՝ որպէս դու ինքնին գիտես խորին քոյով իմաստութեամբդ և մա-

տակարարութեամբ։ Ընկալ և այժմ զաղաչանըս մեր, և զՀոգի սորա հանգո՛ն ընդ սուրբս քո ի խորանս սիրողաց անուան քոյ։ և արժանի արա՛ վերստին նորոգման։ ի լսել զձայն առատութեանդ փողոյն՝ ընդ առաջ ելանել քեզ փառօք։ զի կացցէ առաջի քոյ զուարթերես և պայծառ։ Ընկալցիս և զմեզ յետոյ ի դէպ ժամանակի, ընորհօք և մարդասիրութեամբ Տեառնդ մերոյ և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի։ որում վայելէ փառք իշխա՛։

Ե– ասէն Շարական դկ։ Ա յսոր անձառ լուսոյն ծա՛։ Վէց տո–ն։ ԵՒ Ջկ տո–ն երգ։

Հոգւոյ՛։ վասն հանգուա՛։ Քրիստոս Որդի՛։ Հայր մեր՛։

Եւ բառնան քահանայքն, և երթեն ի Ժամատունն, կամ մերձ առ Դուռն եկեղեցւոյն։ Եւ ասեն Շարական գձ։ Հայր բարիգութի՛։ Մէկ Շարական Աստուածածնին, և մէկ խաչի։ Սաղմոս քսան և հինգ։ Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ՛։ Դմա արա՛ ինձ Տէր, զի ես յոյսիդու՛։

Ընթերցուած յԵրրորդ Թագաւորութեանց։

Եւ մերձեցան աւուրք Դաւթի մեռանելոյ։ և պատուիրեաց որդւոյ իւրում Սողոմոնի՝ և ասէ։ Ես երթամ զճանապարհ ամենայն երկրի։ և դու զօրասցիս՝ և եղիցիս յայր։ Եւ պահեսցես զպահպանութիւնս Տեառն Աստուծոյ քոյ գնալ ի ճանապարհս նորա։ և պահել զպատուիրանս

նորա՝ և զիրաւունս՝ և զդատաստանս՝ և զվկայութիւնս նորա, զգրեալս յօրէնս Մովսէսի։ զի ի միտ առնուցու՝ զոր առնիցես։ ըստ ամենայնի զոր պատուիրեմ քեզ։ Զի հաստատեսցէ Տէր զբան իւր։ զոր խօսեցաւ վասն իմ և ասէ։ եթէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց գնալ առաջի իմ ճշմարտութեամբ յամենայն սրտէ իւրեանց՝ և յամենայն անձնէ իւրեանց որպէս գնացեր դու, ասէ։ մի՛ պակասեսցի քո այր յաթոռոյ Իսրայէլի։ Եւ ննջեաց Դաւիթ ընդ հարս իւր՝ և թաղեցաւ ի քաղաքի Դաւթի։

Ընթերցուած յեզեկիէլէ մարգարէէ։

Եւ տարաւ զիս ի սրահն ներքին։ և ահա երկու պատշկամբք էին ի ներքոյ սրահին։ մի ընդ հարաւոյ դրանն որ հայէր ընդ հիւսիսի, և հանէր ընդ հարաւ։ և միւս ընդ հիւսիսոյ դրանն որ հայէր ընդ հարաւ, և հանէր ընդ հիւսիսի։ Եւ ասէ ցիս։ այս պաշտկամբ՝ որ հայի ընդ կողմն հարաւոյ՝ քահանայիցն եղեցի, որք պահեն զպահպանութիւնս տանն։ Եւ պատշկամբն՝ որ հայի ընդ հիւսիսի՝ քահանայիցն եղեցի, որք պահեն զպահպանութիւնս սեղանոյն։ նոքա են որդիք Սադովկայ՝ որք մերձենան ի Ղևտացւոց առտի պաշտել զՏէր։

Դարձեալ յղեկիելէ մարգարէ է։

Եւ եղեցի ի մատանել քահանայիցն ընդ դուռն սրահին ի ներքնոյ՝ զգեցցին զպատմուճանս կտաւիս. և մի՛ զգենուցուն ասուիս ի պաշտամանն իւրեանց ի դրանէ սրահին ներքնոյ։ Եւ խոյրս կտաւիս ունիցին ի գլուխս իւրեանց. և անդրավարտիս կտաւիս յերանս իւրեանց. և ոչ զգենուցուն ի բռնութեան։ Եւ յելանելն իւրեանց յարտաքին սրահն առ ժողովուրդն՝ մերկասցին զպատմուճանս իւրեանց որով պաշտիցեն. և դիցեն զնոսա ի սենեակս սրբութեանցն, և զգեցցին այլ պատմուճանս. և մի՛ սրբեսցեն զժողովուրդն պատմուճանօք իւրեանց։ Եւ գլուխս իւրեանց մի՛ գերծցեն. և գվարս իւրեանց մի՛ անօսրացուսցեն. ծածկելով ծածկեսցեն գգլուխս իւրեանց։ Եւ գինի մի՛ արբցեն ամենայն քահանայքն ի մտանելն իւրեանց ի ներքին սրահն։

Պօղոսի առաքելոյն յերրայեցւոց թղթոյն է ընթերցուածս։

Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց. և հպատակ կացէք նոցա։ Զի նոքա աչխին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն՝ և մի՛ յոգւոց հանելով, զի այն ոչ յօգուտ ձեր է։ Աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ

գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք. յամենայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել։ Եւ առաւել աղաչեմք, զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց ձեզ։ Եւ Աստուած խաղաղութեան՝ որ էհան ի մեռելոց զհովիւն հօտից զմեծն արեամբ յաւիտենականի ուխտին զՏէր մեր Յիսուս Քրիստոս։ Հաստատեսցէ զձեզ ի գործս բարութեան՝ առնել զկամն նորա. և արասցէ ի մեզ զհաճոյն առաջի իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս։ Ամէն։

Ալէլ-կայ։ Յիշեայ ողորմութեամբ իւրով զՅակոբ. ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայէլի. և աւեթին՝։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Զայս խօսեցայ ընդ ձեզ. զի ուրախութիւնն իմ ի ձեզ իցէ. և ձեր ուրախութիւնն լցեալ եղեցի։ Ա՛յս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի։ Ա՛ծ և քան զայս սէր ոչ ոք ունի եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ. եթէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ։ Ո՛չ և կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամե-

նայն, զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Ո՛չ եթէ դուք ընտրեցիք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, և եդի զձեզ. զի դուք երթայցէք՝ և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կայցէ. և զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս։ Եթէ աշխարհ զձեզ ատեայ. գիտասջիք զի նախ զիս ատեաց։ Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սիրէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ։ Յիշեցէք զբանն՝ զոր ասացի ձեզ. եթէ ոչ է ծառայ մեծ քան զՏէր իւր. եթէ զիս հալածեցին. ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն։ Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ. զի ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս։ Եւ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չեն պատճառ վասն մեղաց իւրեանց։ Որ զիս ատեայ՝ և զՀայրն իմ ատեայ։ Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ տեսին, և ատեցին. և զիս և զՀայր իմ։ Այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է. թէ ատեցին զիս ի տարապատուոյց։ Բայց յորժամ եկեսցէ Մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ՝

զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ։ Եւ դուք վկայէք՝ զի ի սկզբանէ ընդիս էք։ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթակղեսջիք։ Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ. քանզի ոչ ծանեան զՀայր՝ և ոչ զիս։ Այլև զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշեցէք՝ թէ ես ասացի ձեզ։ Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ. քանզի ընդ ձեզ էի։

Ե- Սարկաւագն Տարօնէ։ Վասն գոհանելոյ մեզ զՆորին։

Ե- Քահանայն ասէ ղԱղօթս։

Հովուապետ բարի Քրիստոս, գտող կորուսելոց և խնդրող մոլորելոցս. որ եղբարս քեզ անուանեցեր ի հողեղինաց զստուերք առաքեալն. և նոքօք որսացեր զմարդիկք ի կեանն յաւիտենականս։ Եւ այժմ ծառայս քո որ աւանդեաց զՀոգի իւր ի ձեռս քո. զի և սա եղև փոքր ի շատէ սպասաւոր Տէրութեանդ քո, յիշեա զՀոգի սորա և զմարմին որ կայ առաջի քոյ. և թո՛ղ զմեղս սորա զկամայ և զակամայ. ի ձեռն կենսատեր խաչի քո. բարեխօ-

սուրբեամբ սրբուհւոյ Աստուածածնիդ և ամենայն սրբոց քոց. և հան մասն և բաժին ընդ սուրբս քո յարքայութեան քում։ Եւ զմեզ արժանաւորեա գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և''։

Խաղաղութիւն աՂեցաւ

Աստուծոյ երկրպագեցուք։

Գարձեալ մատուցանեմք զմաղթանս մեր առ դրան սրբոյ եկեղեցւոյ քոյ քահանայքս և ժողովուրդքս. մի՛ թողուր զմեզ ի ձեռանէ քումմէ. և մի՛ տար օտարաց զժառանգութիւնս քո։ Եւ ի կատարման ծառայիս քո (այս անուն) քահանայի, յանձն արա զմեզ ուղղափառ հովուի. զի ի կեանս սորա դու պահէիր զմեզ և պահեցեր. և այժմ ևս սուրբ Հոգւովդ և խաչիւդ քով սրբով պահեա զմեզ։ Եւ զվերակացուս մեր որ փոխեցաւ ի մէնջ ի յաշխարհէս՝ դասակից արա և աթոռակից սուրբ Հայրապետացն և Հարց. զի ահաւասիկ հրաժարեալ ի մէնջ ողջունի՝ և լսատ հրամանի քում գառնայ ի հող ուստի առեղծեր զսա։ Դու Տէր՝ եղեցիս պահապան մարմնոյ սորա, և հանդիստ հոգւոյ սորա. յոյս յարութեան ի մեծի աւուր գալստեանն, յորժամ գաս ժողովել զկենդանիս և զմեռեալս Քրիստոս յոյս մեր և պսակ պարծանաց հաւատացելոց քոց։ Յիշեա զծառայս քո զվախճանեալս. և կացո յաջակողմեանդ քո՝ ընդ սիրելիս երկնաւոր Հօրդ ի ժառանգութիւն, ի ձեռն նորոգող Հոգւոյդ սրբոյ։ Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ''։

Ե- ամէն։ Էլից զօրէնոն Մոսկոսի. վէց պո-ն. և մէկ պո-ն եղե։ Հոգւոյ''։ Հայր մեր''։

Ապա տարեալ ի դուռն եկեղեցւոյն՝ ասացեն Սաղմոս, Բացէք ինձ դրունս արդարութեան։ Խոտովան եղերուք Տեառն զի բարի է. մինչև ցայն տեղին որ ասէ. Բացէք ինձ դրունս։ Եւ բանան զդուռն և տանին յեկեղեցին, ասելով շարական. Ջողորմութեան քո դրուռն բաց մեզ։ Աստուածածնի և Խաչի, և փառք։ Եւ դնեն ի մէջ եկեղեցւոյն առաջի բեմին, և այս կանոն կատարի։

Ընթերցուած ի Ծննդոց։

Եւ ել Յակոբ ի Ջհորոյ անտի երդման. և գնաց ի Խառան։ Եւ եհաս ի տեղի մի՛ և նընջեաց անդ. զի արևն ի մուտս էր. և էառ ի քարանց տեղւոյն. եդ ընդ մնարս իւր և նընջեաց ի տեղւոյն յայնմ։ Եւ եառես տեսիլ. և ահա սանդուղք հաստատեալ յերկրի. որոյ գլուխն հասանէր յերկինս. և հրեշտակք Աստուծոյ ելանէին՝ և իջանէին ընդ նա։ Եւ Տէր հաստատեալ կայր ի նմա. և ասէ. ես եմ Տէր Աստուած Աբրահամու հօր քոյ և Աստուած

Լսահակայ. մի՛ երկնչիր. զի զերկիրդ յորում դու ննջեցեր. քեզ տացդդա՝ և զաւակի քումդ։ Եւ եղեցի զաւակ քո իբրև զաւազ երկրի. և ընդարձակեսցի ի ծովակողմն. և ընդ արևելս. և ընդ հիւսիս. և ընդ հարաւ. և օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի՝ և ի զաւակի քումդ։ Եւ ես ահաւասիկ ընդ քեզ եմ պահել զքեզ յամենայն ճանապարհս քո՝ յոր գնասցես. և դարձուցից զքեզ յերկիրս յայս. զի ոչ թողից զքեզ մինչև արարից զամենայն ինչ զոր խօսեցայ ընդ քեզ։

Ընթերցուածս յետոյեայ մարգարէէ։

Իբրև զի գեղեցիկք են ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւոյն խաղաղութեան. իբրև աւետարանչի բարութեանց. զի լսելի արարից զփրկութիւն քո. ասել ցսիօն թէ թագաւորեսցէ քեզ Աստուած։ Ձի ձայն պահապանաց քոց բարձրացաւ. և ի նոյն բարբառ առ հասարակ ցնծասցեն. զի դէմ յանդիման տեսցեն զժամանակն՝ յորում ողորմեսցի Տէր սիօնի։ Լերինք գոչեսցեն աւետարկօքն հանդերձ նրուաղէմի զփրկութիւն. զի ողորմեցաւ նմա Տէր. և փրկեաց զնրուսաղէմ։ Եւ յայտնի արասցէ Տէր զբազուկ իւր սուրբ յառաջի ամենայն ազգաց. և տեսցեն ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Ընթերցուած ի Մաղաքիայ մարգարէէ։

Ասպէս ասէ Տէր. ուխտն իմ, որ էր ընդ նմա կենաց և խաղաղութեան. ես եւոու նմա զերկիւղ երկնչել յինէն՝ և յերեսաց անուան իմոյ խորշել։ Օրէնք ճշմարտութեան էին ի բերան նորա. և անիրաւութիւն ոչ գտաւ ի շրթունս նորա. խաղաղութեամբ և ուղղութեամբ գնաց ընդիս. և զբազումս դարձոյց յանիրաւութենէ։ Ձի շրթունք քահանային զգուշասցին գիտութեան. և օրէնս խնդրեսցեն ի բերանոյ նորա. զի հրեշտակ Տեառն ամենակալի է։

Պետրոսի առաքելոյն ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Զերիցուս այսուհետև աղաչեմ. իբրև երիցակից՝ և վկայ չարչարանացն Քրիստոսի. որ և հանդերձելոց փառացն յայտնելոց հաղորդ։ Ընծեցէք՝ որ ի ձեզ հօտ է Աստուծոյ. վերակացու լինիլ՝ մի՛ իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ. այլ յօժարութեամբ։ Ա՛ի իբրև տիրելով վիճակացն. այլ լինիլ օրինակ հօտին. զի յերևիլ հովուապետին ընդունիջիք զանթառամ փառացն պսակ։

Ալէլո-է՛այ։ Ողորմեա՛ ինձ Աստուա՛ծ ըստ մեծի ողորմութեան՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Հայց արդ երթամ՝ ես առ առաքիչն իմ, և ո՛չ ոք ի ձէնջ հարցանիցէ ցիս, թէ յո՞ երթաս։ Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ՝ տրտմութիւն եղեց զսիրտս ձեր։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ո՛չ երթայց՝ մխիթարիչն ո՛չ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ։ Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ, վասն մեղաց՝ և վասն արդարութեան՝ և վասն դատաստանի։ Վասն մեղաց՝ զի ո՛չ հաւատան յիս։ Վասն արդարութեան՝ զի առ Հայր իմ երթամ. և ո՛չ ևս տեսանէք զիս։ Վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է։ Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ո՛չ կարէք հանդարտիլ այժմիկ։ Յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան՝ առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիցի. այլ զոր լսիցէ՝ խօսիցի. և զգալոցն պատմեսցէ ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ՝ զի յիմմէ առնուցու և պատմեսցէ ձեզ։ Ամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ առնուցու և պատմեսցէ ձեզ։

Փոքր մի, և ո՛չ ևս տեսանէք զիս. և ապա սակաւիկ մի, և տեսանիցէք զիս. և զի ես երթամ առ Հայր։ Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. զի՞նչ է այս՝ զոր ասես ցմեզ։ Թէ փոքր մի, և ո՛չ տեսանէք զիս. և դարձեալ սակաւիկ մի, և տեսանիցէք զիս. և թէ ես առ Հայր երթամ։ Եւ ասէին զի՞նչ իցէ այն փոքր միւս ևս. չգիտեմք զինչ խօսի։ Գիտաց Յիսուս եթէ կամէին ցնա հարցանել. և ասէ ցնոսա՝ վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի ասացի թէ փոքր մի, և ո՛չ տեսանէք զիս. և դարձեալ սակաւիկ միւս ևս, տեսանիցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի լացջիք և ողբասջիք դուք՝ և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք՝ այլ տրտմութիւնն ձեր յուրախութիւն եղեցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տըրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ո՛չ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեան. զի ծնաւ մարդ յաշխարհ։ Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ՝ և ուրախ լեցին սիրտք ձեր. և զուրախութիւն ձեր՝ ո՛չ ոք հանիցէ ի ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ո՛չ հարցանիցէք. ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Մինչև ցայժմ ոչինչ խնդրեցիք յանուն իմ, խնդրեցէ՛ք, և առնուցուք. զի ու-

թախանձիւն ձեր լցեալ եղեցի։ Ո՛այս առաքօք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ո՛չ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զ՚Հօրէ պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ո՛չ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զ՚Հայր վասն ձեր։ Ո՛չ ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս սիրեցիք. և հաւատացիք, եթէ ես Յ՚Ատուծոյ ելի։ Ելի ի Հօրէ՝ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր։

Հոգւոյ՚՚։ Հայր մեր՚՚։ Ե- է վերայ դնոյն դէպեն զա-եփօրեան, և վա-եսպեն ղըշ- ա-ընդէք։ Ե- ապա արդիւնի խաղաղո-ենօք, և երկնեսպեն է փեղկս է-բնեանց։

Իսկ է գիշերին մինչ գան է կոպտել զկնի գիշերային պաշտօնեան, կացցեն ընդ հանապազ յարկն և յահեկէ ննջեցելոցն, և ընդնեանո-ո-ն ղընդեսպեն ա-եփօրեան քնըքաղէս, այսինքն՝ զՄաթկէոսէն, զՄարկոսէն, զՂ-ւկասո-ն, և զՅովհաննո-ն։ Ե- է վճռեսը, ասացեն Հոգւոյ՚՚։ և Հայր մեր՚՚։

Եւ մինչ մատչիցի սուրբ Պատարագն, ի ժամ ողջունին առաջի բեմին այս կարգ կատարի։

ՔՒՐՂԷ ՍՒՐԲ-ՍՓՆ։

Վասն քաւութեան և թողութեան մեղաց հոգւոյ հանգուցելոյս, զՏէր աղաչեա՚՚։ Վ՚ասն առաջնորդելոյ սմա ընդ նեղ դուռն անձկացեալ ճանապարհին, զՏէր աղաչեա՚՚։ Վ՚ասն ընդունելոյ զՀոգի սորա ի խորանս սրբոցն, զՏէր աղա՚՚։ Վ՚ասն առաջնորդելոյ սմա ընդ առաջ փրկչին, զՏէր աղաչեա՚՚։ Վ՚ասն դասելոյ սմա յաջակողման դասուն յանբաւ ուրախութիւնն, զՏէր աղա՚՚։ Վ՚ասն արժանի լինելոյ սմա անթառամ պսակացն, զՏէր աղա՚՚։ Վ՚ասն պարգևելոյ սմա հանդիստ յերկնից արքայութեան, զՏէր աղաչեա՚՚։ Վ՚ասն վերադասելոյ սմա ի տեղի անկելոց հրեշտակացն, զՏէր աղաչեա՚՚։ Վ՚ասն Հոգւոցն՚՚։ Եւ ևս միա՚՚։ Ո՛ղորմեա՚՚։ Ո՛ղորմեաց՚՚։

Եւ ասէ զՒղօթս։

Տէր Յ՚Ատուած փրկիչ մեր, Յ՚Ատուած յաւիտենական՝ արարիչ և իշխան հրեշտակաց և մարդկան. դատաւոր կենդանեաց և մեռելոց. օրհնեմք զքո մարդասիրութիւնդ՝ որ վասն բազում ողորմութեանդ քո՝ ո՛չ կարացեր անտես

առնել զտեղծուածս ձեռաց քոց, զվերաւո-
րեալս ի բանսարկուէ թշնամւոյն. այլ կամաւ
Հօր և հաճութեամբ սրբոյ Հոգւոյն, խոնար-
հեցար յարգանդ սրբուհւոյ կուսին. և հրաշա-
փառ սուրբ ծննդեամբ քով զանիծիցն լուծեր
զդատաւինիք։ Ցմենամեծդ Ըստուած՝ որ վասն
մեր աղքատացար, փառաւորեմք զքո անմահ
թագաւորութիւնդ. զի զկերպարանս ծառայի
առեր. և բևեռեցար ի վերայ խաչին. և սուրբ
և պատուական արեամբ քով՝ զգերեալսն ի
ծառայութենէ թշնամւոյն ազատեցեր ի կեանս։
Երկրպագութիւն և փառս մատուցանեմք քեզ՝
հովիւ բանաւոր հօտի, Տէր մեր և փրկիչ Յի-
սուս Քրիստոս. որ զգրուեալսն յաներևոյթ և
յանմարմին դիւէն ժողովեցեր առ բնակութիւն
սրբոց հրեշտակաց. և պարապեալ սուրբ խա-
չիդ նշանաւն, կարգեցեր տեսուչ և առաջնորդ՝
հովուել իմաստութեամբ զժողովուրդս քո։ Իսկ
ծառայս քո՝ զոր շնորհեցեր մեզ առաջնորդ
ի ձեռն սրբոց առաքելոց քոց, այսօր հրաժա-
րեցաւ ի մէնջ. և դարձաւ ի հող ըստ հրամանի
քում։ Եւ մեք ժողովուրդք քո և ծառայք
քո՝ ի տաճարի փառաց սրբութեան քոյ աղա-
չեմք և խնդրեմք ի քէն. բարեխօսութեամբ
սրբուհւոյ Ըստուածածնիդ և ամենայն սրբոց
քոց որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ՝ ընկալ
զբանս ողջունի սորա ի սուրբ եկեղեցւոջս ա-

ռաջի սրբոյ սեղանոյ քոյ. և հանգիր զհոգի ծա-
ռային քոյ ի խորանս սիրողաց անուան քոյ։
Թող սմա Տէր ողորմած զյանցանս և զմոռա-
ցութիւնս, որք գործովք և խորհրդովք. զի
դու Տէր միայն կարող ես թողուլ զմեղս։
Շնորհեա սմա յարդար դատաւորութեան քում
ընդ պետրոսեան ամբոխակցութենանցն վերա-
պատուիլ։ Եւ զմեզ զամենեսեան օրհնեա հո-
գևոր օրհնութեամբ քով. զի սրբեալք ի յան-
ցանաց՝ գոհանալով փառաւորեսցուք զՀայր և
զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ՝։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիւղածութիւն։

Ի մէջ եկեղեցւոյս և առաջի սրբոյ սեղանոյ
քոյ՝ քեզ երկիրպագանեմք և աղաչեմք զան-
հաս գթութիւնդ քո. որ ես առ ամենեսեան
երկայնամիտ Քրիստոս Ըստուած մեր։ Ընկալ
Տէր և այժմ բարերարութեամբ քով զերկն-
դրուածս մեր. և հեղ աղբիւրաբար զառատա-
բուղս շնորհս Հոգւոյդ սրբոյ ի գանձս յայս
պատուական. որ է տաճար կամաց քոց սրբոց։
Օի ի ձեռն օծմանս այսորիկ զոր յանուն քո
օծանեմք սուրբ խղովս այսուիկ, ընկալցին սուրբ
նշխարքս ոսկերաց սորա զօրութիւն բժշկու-
թեանց. և զհալածումն սնոտղունդ դիւաց. և
մեծ պարծանս կենաց. և յոյս մեծապէս սուրբ

խոստովանութեամբ, որ ի Հայր և յՈրդիդ և ի Հոգիդ սուրբ։ Որով ընկալեալ սորա զսուրբ օծումնս, և այդր ևս ճշմարտապէս գահակալեցէ։ և ընդ այլ ճշմարիտ հովիւն զբարեբիոնն յաղթութեան ընկալցի ի քէն Քրիստոս։ և ամենայն սրբովք ուրախացեալ՝ փառաւորեսցէ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ։ այժմ և"։

Եւ թէ ննջեցեալն Կաթուղիկոս էցէ, զայս Աղօթս ևս հանդերձ կցորդիւն կարդայ։

Որհնեալ ես Տէր Աստուած ամենակալ՝ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ որ ըստ բազում ողորմութեան քում առեր զմեզ ի հեթանոսաց՝ և անուանեցեր զմեզ անուամբ միածնիդ քոյ։ Որ մարմնացար ի մերմէ բնութենէս։ և մահուամբ եբարձ ի մէնջ զմեղս անիծաբերս և մահածինս յարութեամբ իւրով։ ծնար զմեզ ի յոյն կենդանի յանեղծ և յանարատ ժառանգութիւնդ և յանթառամ պըսակացն ուրախութիւն որ պահեալ է մեզ յերկինս։ Որոց առհասատչեայ ընորհեցեր մեզ լըսել Հոգիդ քո սուրբ՝ որով ընկալաք զընորհս որդեգրութեան քոյ։ որով եղեր յեկեղեցւոջս առաքեալս և մարգարէս և աւետարանիչս՝ հովիւս և վարդապետս։ ի հաստատութիւն հաւատոյ, ի գործ պաշտաման փառաւոր սեղանոյ քոյ, և ի շինուած մարմնոյ սիրելւոյ Որդւոյ քոյ՝ որ զլըուսն մեօք առնու։ Յոր պատիւ և զծառայս քո (պայ անուն) արժանաւորեցեր, ամբառնալով քոյին ընորհօք ի բարձրագոյն և ի ծայրագոյնն աստիճան առաքելական և քահանայապետական, և ընտրելով զսա ի բազմաց՝ յատկացուցեր յատկականաւ ընորհիւ։ Եւ կարգեցեր զսա գլուխ և այցելու եկեղեցւոյ քում սրբոյ։ յանձնելով ի սա զամենայն խորհուրդս՝ զգործս և զպաշտօնս փրկարարս աւանդեցեալս յՈրդւոյ քումմէ ի սուրբ եկեղեցիս քոյ։ Որպէս զի յիջանել աստուածայնոյ իւղոյ Հոգւոյդ սրբոյ, և ի ծագիլ պէսպէս ընորհացդ լուսափայլութեանց ի գլուխ, և անտի ի ստորինս տարածեսցի ըստ մարգարէին։ ի լըուսն և ի շնուիլն ըստ իւրաքանչիւրոցն արժանաւորութեան ի փառս ամենասրբոյ անուանդ քոյ։ և զօրացուցեալ պահպանեցեր մինչև ցայսօր։ Որ և այժմ ըստ արարչագիր սահմանադրութեան քոյ կոչեցեր ի հանգիստ յերկրաւոր աշխատութենէս ի տրտմալից կենցաղոյս այսորիկ։ Ոյոն որոյ աղաչեմք զքեզ Հայր գթած՝ ի յարկի փառաց սրբութեան քոյ՝ ուստի բաշխես զքաւութիւն կենդանեաց և մեռելոց։ զի ողորմեցիս ծառայիս քոյ այսմիկ, և անտես արասցես զոր ինչ յանցեալ իցէ սորա ի մարդկային

աղաւեղութենէ։ Եւ զհեղգութիւն սորա եթէ
ինչ լեալ ի սպասաւորութեան սեղանոյ քոյ՝
մոռացիս վասն մարդասիրութեան քոյ։ Կամ
թէ անփոյթ արարեալ է զկորատեամբ ուրուք,
կամ թէ ծուլացեալ ինչ քարոզել զպատուի-
րանս քո ի խրատել զժողովուրդս քո, զամե-
նայն թողցես սմա անոխակալ միմութեամբդ
քո. քաւիչ լեցիս բովանդակ սխալանաց սորա
քաղցր և բարերար շնորհօք քո։ Եւ զմեղս և
զանօրէնութիւնս սորա որ վասն կարեաց և
փառաց մարմնոյ, և կամ վասն սիրոյ և ամօ-
թոյ և երկիւղիս մարդկան, մի՛ ևս յիշեսցես.
այլ յամենայնի փրկեա զՀոգի ծառայիս քոյ.
և արժանաւորեա համարձակապէս մատանել
առաջի քոյ դէմ յանդիման. և ուրախու-
թեամբ կալ յանդիման փառաւոր աթոռոյ քոյ.
արդարութեամբ երևիլ երեսաց քոց. յարդիլ
յերևման մեծի և վայելուչ փառաց քոց. և ըն-
ծայել բերկրանօք զերկրպագութիւն ամենա-
սուրբ Երրորդութեանդ մատուցանել յօթե-
ւան հանգստեան ի տեղւոջ բնակութեան սըր-
բոց արդարոցն. և ընդ նոսին զուարճանալ ու-
րախարար յուսով։ Ընդ որոց և սմա շնորհես
ցես ժառանգութիւն զարքայութիւն Քրիս-
տոսի Աստուծոյ մերոյ, ընդ որում քեզ՝ օր
բարերարի և՝ Հոգւոյդ սրբոյ վայել փառք պա-
տիւ և իշխանութիւն. այժմ և՛։

Խաղաղ-ըն-ա ամենեցուն

Ա.պտո-ծոյ երկիւղածութե-ւ։

Քեզ Թադաւորի անմահի և մարդասիրի,
ամենեքեան միաբան ամենայորդոր փութով
երկրպագութիւնս վերառաքեմք ի վերայ ծա-
ռայիս քոյ այսորիկ զոր ընտրեցեր ի վիճակ
առաքելական. զքեզ ինքնին ընկալեալ սորա
բաժին և ժառանգութիւն կալ առաջի մեծու-
թեան քոյ և աղօթս մատուցանել յանուն քո
ահաւոր՝ և պաշտել զսեղանս քո փառաւոր.
և ի հովուել զՀօտ քո բանաւոր. և ծնանիլ
վերստին զմարդիկ աւազանաւն յորդեգրութիւն
քեզ. և զպատրաստեալ բարիս միածնիդ քոյ
վայելել և վայելեցուցանել զբազումս. ունիլ
իշխանութիւն ի կապել և յարձակել յերկինս
և յերկրի. և տալ թողութիւն մեղաց կենդա-
նեաց և մեռելոց։ Եւ այժմ հրամայեցեր գալ
առ քեզ. և հանդչիլ ի հոգոց իւրոց, և աղա-
տանալ ի տառապանաց կենցաղոյս, և առնուլ
զկեանսդ՝ յորմէ մերժեալ են ցաւք և տրըտ-
մութիւնք և չեծութիւնք։ Եւ արդ՝ Տէր ողոր-
մած և մարդասէր. հաւատարիմ լեցի ամենայն
գործ սորա Հոգևոր՝ որ ի սուրբ եկեղեցիս և
ի ժողովուրդս քո։ Յիշեալք և ընդունելիք
եղեցին առաջի քոյ Տէր՝ աղօթք, պատարագք
և նուէրք կենդանեաց և մեռելոց՝ մատուցեալք

ի ձեռն սորա յանուն քո, ի շարժել զգուլթ ողորմութեան քոյ յայնոսիկ՝ յորոց ընծայեցան. որպէս պի և սա անդատապարտ գտանիցի ի նոցին պարտուց՝ առնլով զմեծ ողորմութիւն յամենառատ վարձատուէդ։ Եւ թէ պակասումն լեալ իցէ սորա ի հեղգութենէ, լնապէս կատարումն պարգևեսցես. և ներեսցես սմա զոր սխալեաց իբրև զմարդ. քանզի քեզ Երարչեդ յայտնի է տկարութիւնս մեր. և դու Տէր հրեշտակաց ներես բազում անգամ. զի ոչ ոք է առանց մեղաց. բայց միայն սուրբ Երրորդութիւնդ՝ որ ամենեցուն քաւիչ ես. որ և պարգևեսցես զքաւութիւն ծառայիս քոյ այսմիկ՝ և ամենեցուն որք յուսացան ի ձեռն սորա քաւութեան հասանիլ։ Եւ զամենեսեան զլուսաւորեալքս՝ և զօրհնեալքս՝ և զխրատեալքս բանիւ վարդապետութեան սորա՝ խնամեսցես. և պահեսցես հաստատուն առանց դայթակղութեան ի պարծանս սորա յաւուրն ահեղին։ Ողաչեմք զքեզ Տէր Ստուած արարիչ հոգւոց և մարմնոց ամենայն կենդանեաց ստեղծուածոց. մի՛ երբէք ընդ վայր հարցես զհօտս սորա և զհաւատացեալս քո հօտ՝ թողլով անհովիւս. այլ տացես այր ի վերայ ժողովրդեան քոյ՝ զոր և լցուսցես Հոգւովդ քով սրբով. լինիլ նոցա հովիւ ըստ սրտի քում, հովուել զնոսա իմաստութեամբ։ Եւ մխիթարեա զհոգի

սորա զոր աւանդեաց ի քեզ. և հանգուսցես ի դասս պաշտօնէից քոց արժանաւորաց՝ որք յամենայն սրտէ իւրեանց ծառայեցին քեզ և պահեցին զպատուիրանս քո յամենայն ի կեանսս իւրեանց. և ընդ նոսին շնորհեսցես զուրախարար կեանսն ի մէջ սրբոց հրեշտակաց։ Եւ յաւուրն վերջնում, յորժամ առաքես զՈրդի քո սիրելի առնուլ համարս ի ծառայից քոց և հատուցանել ըստ իւրաքանչիւր վաստակոց, արա և զսա կերպարանակից մարմնոյ փառաց միածնի Որդւոյ քոյ, լինիլ արժանի և հաղորդ նորին արքայութեան՝ ժառանգաւոր կենացն յաւիտենից։ Օ՛ի թէպէտ և մեք որք հայցեմք՝ անարժան եմք, դու Տէր ոդեսէր՝ բարեխօսութեամբ և հեղմամբ արեան սրբոյն Ստեփաննոսի առաջնոյ պաշտօնէի սրբոյ սեղանոյ քոյ՝ և աղաչանօք սրբոց առաքելոց քոց և սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ (որոց յաջորդ կարգեցեր զսա,) և ամենայն հաճոյական ծառայից քոց՝ տուր սմա զամենայն հայցուածս նուաստութեան մերոյ։ Եւ զմեզ օրհնեա ամենայն հոգևոր օրհնութեամբ. և մխիթարեա շնորհօք սուրբ Հոգւոյդ. որով զօրացեալք՝ արժանի լեցուք փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ե– քառասն քահանայից, և հանեն ի քէնէ առաջի սրբոյ սեղանոյն։ ե– ասէն Սաղմոս իբ. է ընէ–. Տէր հոտուեսցէ զիս՝՝։ (Մինչև ցհինգ տուն։) կացուբ սղբոյնն։

Պատրաստ առաքեր առաջի իմ քզսեզամ իսն ամէն յանդիմանն նեղչաց իմոց։ (երկու երինեա զաղմոս և զկացուբս զայս)։ Դարձեալ Սաղմոս է ընէ–. Տէր հոտուեսցէ զիս՝՝։ (Մինչև ցվեց տուն)։ Կացուբ սղբոյնն։

Օ՞ճառ մարդ իւղով ըզգլուխս իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։ (երկու երինեա նայնպէս զաղմոս և զկացուբս)։ Շարական գձ. Առաքելոյ ասաւ՝՝։

Եւ ապա տեառնադրէ քահանայն։ Եւ առեալ զսուրբ մեռոնն, օծցէ նախ զճակատն, և ապա զաջոյ ձեռն։ (Որպէս և սուրբն Դիոնէսիոս Աթենացի պատուիրէ. որ է աշակերտ սրբոյ առաքելոյն Պօղոսի։ Եւ այն Դիոնէսիոս կարգաւ մեկնէ զհոգևորդն զոր ունիմք այսպիսի կարգ քրիստոնէութեան. զի մի հեթանոսական գարշանօք ինչ աղարտեսցէ զք. զի առաքելական է կանոնս։) Եւ համբուրեն զսուրբ սեղանն որպէս յերեսաց վախճանելոյն. և զխորանն, և զամենայն սրբութիւնն։ Եւ զսուրբ աւետարանն դնեն ի գիրկն և համբուրեն։

Եւ ասեն Սաղմոս ճիա. Ուրախ եղէ ես ոյք ասէին՝՝։

Ո՞վքո՞ն քեզ սուրբ եկեղեցի։ Ո՞վքո՞ն քեզ սեղան սքրբութեան։ Ո՞վքո՞ն ձեզ զաւազ քահանայութեան. ես ճանապարհորդեցի առ արարիչն իմ։

և– առնեն պռա– պռա– զղջոյնն, մինչև վճարի սաղմոս։ և– համբո–րեն պետրոս եկեղեցին, և դարձեալ երթան առաջի սրբոյ սեղանոյն։

(Զերեսին սաղմոսաբս և զղջոյնն ասելով շուրջ ածեն զննջեցեալն երից անգամ զսեղանովն, կամ թէ ի մէջ եկեղեցւոյն ընդ չորս

անկիւնսն. որ նշանակէ՝ զհամբուրելն նորին զսեղանն և զբոլոր եկեղեցին և զսրբութիւնսն աւետեան, և զհրաժարական ողջոյնն տալն։) Եւ համբուրեն զմիմեանս քահանայքն. և երկրպագեն վանճանելոյն. և համբուրեն զխաչն և զաւետարանն և զաջն։ Եւ ապա իջուցանեն ի բեմէն, փոխելով զսաղմոսն և զողջոյնն։

Սաղմոս ձզ. Հիմունք նորա ի լեառն սուրբ նորա՝՝։

Ո՞վ ըզհ՞ն ձեզ մանկունք եկեղեցւոյ։ Ո՞վ ըզհ՞ն ձեզ հաւատացեալ եղբարք իմ ի Քրիստոս։ Ո՞վ ըզհ՞ն ձեզ համօրէն ժողովրդական՝. ես ճանապարհորդեցի առ Քրիստոս յոյն ամենեցունն։

Սաղմոս ճլը. Տէր փորձեցեր զիս և ծանեար զիս՝՝։

Ո՞համ հրաժարիմ ի քէն՝ սուրբ եկեղեցի։ Ո՞համ մեկնիմ ի ձէնջ սիրելի՝ եղբարք. ի կոչումն վերանորոգողին Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Սաղմոս. Պահեա զիս Տէր ի ձեռաց մեղաւորի. և՝՝։

Ո՞ղո՞թս արարէք վասն իմ հարք իմ եղբարք և՝ որդիք. և՝ օրհնեսցէ զձեզ Քրիստոս փրկիչ մե՛ր. պահեսցէ հաստատուն ի հաւատս իւր՝ մինչև ի սահմանեալ կէտ կոչմանս

այսորիկ. և՝ խաղաղութիւն Տեառն եղեցի ընդ ձեզ յաւիտենից յաւիտեանս ամէն։

և՝ ապա դառն զղջային։ և՝ աչեանն ժողովուրդն հայհոյեցին զաջ հանգուցեալն՝ որպէս և տահանայքն. և գնեն ի չէջ պաճարին. և մտալ պապասգն։

Իսկ զկնի Պատարագին սկսանիցին ասել. Խնամով սիրոյն"։

Եւ Սարկաւագն քարոզէ։

Միսբան աղաչեացուք զմարդասէրն Աստուած յաղագս ննջեցեալ քահանային այսորիկ. զՏէր աղաչեացուք։ Սրբասէր քահանայք և բազմամբոխ ժողովուրդք, հայցեցէք ի Քրիստոսէ զի ընդունեցէ սմա զթողութիւն մեղաց. զՏէր։ Օ՛ի հանգուցեալ զհոգի սորա յերկնային խորանն յանապատ ուրախութիւնն. զՏէր"։ Յառաջնումն համարեացի զսա ընդ Մովսէսի և ընդ այլ մարգարէիցն. զՏէր"։ Յերկրորդումն համարեացի զսա ընդ Պետրոսի և ընդ Պօղոսի և ընդ այլոց սրբոց առաքելոցն. և զաղաչանս մեղուցելոյս ընկալցի ի յիշատակ հոգւոց ննջեցելոցն ընդ սուրբս դասելով. զՏէր"։ Եւ ևս միսբան"։ Օ՛անձինս"։ Ողորմեաց մեզ Տէր Աստուած"։

Եւ քահանայն ասէ զԱղօթս։

Արարչագործ Աստուած՝ որ ի ձեռն աստուածային խորհրդոյ քոյ, զառաջնաստեղծ մարդն կերպարանակից և նմանակից քեզ արարեր. և լուսեղէն փառօք զարդարեցեր. և արարեր զնա հողեղէն պատկերաւն՝ փառակից հրեղինացն. և ծածկեցեր զհողեղէն մարմինն լուսեղէն փառօք։ Ընդ որ խանդացեալ թշնամոյն, մահաբեր պտղոյն ճաշակմամբ խաբեաց զնա և ընկէց ի փառացն։ Իսկ նորա տեսեալ զինքն մերկացեալ ի լուսեղէն զգեստուցն, սաղարթապատ լինէր ընդ տնկովին ի դրախտին։ Եւ գոլով նորա լուծեալ ի պատուիրանէն և արուսաքսեալ ի դրախտէն, ոչ գտանէր զմխիթարութիւն վշտակրութեան. եթէ ոչ էր ասացեալ քոյ կենարարիդ՝ եթէ հողէիր և ի հող դարձցիս։ Ապա այնուհետև ցանկայր մահու հասանիլ, զի մահուամբն զկենդանութիւն գտցէ։ Իսկ դու Տէր՝ զթացար յանարատ ձեռաց քոց ստեղծուածն, ոչ կարացեր տեսանել զկորուստ նմանակից քոյ պատկերին նախաստեղծ մարդոյն. խոնարհեցար յերկնից ի հայրական ծոցոյ, և զմարմինն ծառայի ի կուսէն ճշմարտապէս յանձն առեր. հողաստեղծին կերպարանաւ ծածկեցեր զլուսեղէն Աստուածութիւնդ զհողեղէն կերպարանս

նմանակից քեզ արարեր. զքոյինասատեղծ պատկերն՝ զպատրեալն ի պատրողէն, առաջին ըզպեցմամբն նորոգեցեր. և զմեզ նորոգեցեր ընդ նախահօրն մերում Ադամայ ի վերայ կենարար փայտին. և արբուցեր մեզ յանմահարար բաժակէդ ի կողահոս աղբերէդ. զմեռելումիւնս մեր նորոգեցեր անշնչումեամբ քով ի խաչին. և իջանելով քոյ ի գերեզման՝ և յարութեամբ քով ի մեռելոց, զարգելեալսն ի մեղսասէր բանտին ի բանսարկուէն ազատեցեր. և զկարծիս կարծեալ իշխանին լուծեր, և զըմբռնեալսն ի նմանէ արժանաւորեցեր անեղաշէն դրախտին կենաց։ Եւ զմեզ կարգեցեր քահանայս ի տաճարի փառաց սրբութեան քոյ՝ զոր հիմնեցուցեր ի վերայ առաքելական վեմի խոստմամբ Կեփային, եթէ դու ես վէմ, և ի վերայ այդր վեմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց չնահանդիպիցին։ Որպէս և զձառայս քո՝ զոր արժանաւորեցեր առնուլ զպատիւ քահանայութեան և զպսակ պարծանաց և ընտրեցեր զսա լինիլ քեզ սպասաւոր ընդ որդիսն Որոտմանն։ Ուստի՝ նմանեցաւ սա Մելքիսեդեկի՝ լցեալ շնորհօք Հոգւոյդ սրբոյ։ Սա՝ նմանեալ Մովսիսի նախամարգարէին, առաջնորդ լինելով ժողովրդեանն ի մրրկապատեալ մեղացն Եգիպտական. մուծանելով ի տուն Տեառնդ և ի գաւիթս Հաստուծոյդ։ Սա՝ նմանեալ Հարօնի

վկայասակիր պատմուճանաւն. և ոչ ակամբք երկոտասանիւք ընդելուզեալ, այլ երկոտասան առաքելոցն փառատրութեամբ համեմատեալ. և ոչ զակունս յանդիմանութեան ի վկասին կրելով՝ որով զմահ և զկեանս ժողովրդեանն ճանաչէր, այլ զմարմին և զարիւն Որդւոյդ Աստուծոյ ի վերայ բազկացն կրելով՝ որով զմեղս և զանօրէնութիւնս ժողովրդեան քոյ քաւէր, և ոչ արեամբ ցլուց և զուարակաց, այլ արեամբն Քրիստոսի Հաստուծոյդ մերոյ մտանէր ի սրբութիւն սրբութեանցն։ Սա՝ նմանեալ Սամուէլի՝ արկեալ զեւրեաւ կրկնոց և զեփուտ քահանայութեանն յանշարժ տապանակի, հովուէր զժողովուրդ քոյ։ Սա՝ տաճարի Տեառնդ գործող։ Սա՝ սեղանոյ Տեառնդ պաշտօնեայ։ Սա՝ պատարագիչ Քրիստոսիդ։ Սա՝ բաշխող մարմնոյ և արեան Տեառնդ։ Սա՝ մկրտիչ ծնեցելոցն առ ազանին ջրով և Հոգւով։ Սա՝ պսակիչ զուգակցելոցն յամուսնութիւն, տեառնապրութեամբ սուրբ խաչին և բոլոր պսակաւն։ Սա՝ մեղաւորաց զարձուցիչ՝ որ կոչէր յապաշխարութիւն քաղցրալուր բարբառովն։ Սա՝ ընթերցող մարգարէական և առաքելական տառից։ Սա՝ քարոզող ժողովրդեանն նմանեալ առաքելոցն։ Սա՝ տօնախմբող մարտիրոսացն. յիշատակող սրբոց ճրագնաւորացն։ Սա՝ յիշատակող ննջեցելոցն հաշ-

տարար սուրբ պատարագան։ Սա՝ փառաբա-
նիչ սրբոյ Երրորդութեանդ վերնայնոցն նմա-
նեալ։ Եւ այժմ Տէր բարերար՝ զսա առ քեզ
կոչեցեր. և խափանեցաւ պաշտօն սորա յեկե-
ղեցւոյ քումմէ՝ և ի ժողովրդենէ քումմէ։
Վասն որոյ աղաչեմք զքեզ մարդասէր Տէր՝
ընկալ զխոզի սորա ընդ ընտրեալս քո և ընդ
համարաս անուանդ քում սրբոյ՝ և խառնեա
զսա ի թիւ աշակերտաց քոց։ Եւ եթէ յան-
ցեալ ինչ իցէ սորա ըստ մարդկային բնու-
թեանս, թո՛ղ սմա։ Եւ յանճառ և յահեղ
գալստեան քոյ՝ յորժամ նշան սրբոյ խաչիդ
ճառագայթիւք ընդ ամպս երկնից փայլէ
կարապետ գալստեան քոյ, և զօրութիւնք երկ-
նից շարժին, և զօրք հրեշտակաց առաջի ըն-
թանան. և հրեշտակապետն հնչեցուցանէ ըզ-
փողն ազդեցութեանց՝ ազդ առնելով տիեզե-
րաց և յատենից ննջեցելոցն՝ և ի զարթու-
ցանել ի մահահանդիստ քնոյ. և յառնեն մե-
ռեալք ի դերեզմանացն, և հոգիքն զգենուն
զնւրաքանչիւր մարմին, և կան առաջի ահեղ
աթենից, յայնժամ յանուանէ կոչեա զծա-
ռայս քո՝ և ընդ աջմէ քոյ կացո՛. և արա օ-
գաթուիչ թևօք վերամբառնալ ի վերինդ նրու-
սաղէմ ի մայր մեր ամենեցուն, ի լուսեղէն
առագաստն՝ ի յատենական և յանանցա-
նելի լոյն։ Եւ զաշակերտակիցս և զուզաշ-

կաւորք սորա և զյարմարող ծառայս քո հան-
դերձ երկրպագող ժողովրդեամբս՝ արժանա-
ւորեա երանաւէտ կոչմանդ քո Քրիստոս Ա-
ստուած մեր. զի դու ես Տէր կենաց և Ա-
ստուած ողորմութեան։ Եւ քեզ ընդ Հօր և
ընդ Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանու-
թիւն և պատիւ. այժմ և՚՚։

Եւ բառնան քահանայքն, և բերեն ի դուրս ի տաճարէն ի ժամա-
տունն, Իսկ եթէ չիցէ ժամատուն՝ դիցեն ի յեւթին գասն. ասելով
Շարական խաչի, գձ. փայտ կենաց որ փոխա՚՚։ Անուանեալ փայտ դի՚՚։
Եւ թէ յեպիսկոպոսաց իցէ, զաթոռն և զգաւազանն յեկեղեցւոջն
դնեն, մինչև այլ յաջորդի։ Եւ անդէն ի ժամատանն առաջի խաչին
որ ի դրան տաճարին է, կամ թէ ի յեւթին գասն, այս կանոն կա-
տարի։

Սաղմոս ծթ. Եռուր երկիւղածաց քոց նշան՚՚։ փոխ. Ա-
ստուած մերժեցեր և՚՚։

Ընթերցուածս ՅԱռակաց։

Փայտ կենաց է ամենեցուն՝ որք պատսպա-
րին ինա. և որք յենուն ինա իբրև ի Տէր
հաստատութեամբ։ Աստուած իմաստութեամբ
հիմնեաց էարկ երկրի. պատրաստեաց զերկինս
խորհրդով։ Եւ հանճարով իւրով զանդունդս
պատառեաց. և ամպք հոսեցին զանձրև։ Ո՛ր-
դեակ՝ մի՛ լքանիր, պահեա զխորհուրդս իմ և

զիմաստութիւն։ Օվ կեցցէ անձն քո. և շնորհք իցեն ի վերայ պարանոցի քումդ, եղիցի բժշկութիւն մարմնոյ քումդ, և զարմանք ոսկերաց քոց։ Օվ գնասցես յուսով խաղաղութեան յամենայն ճանապարհս քո. և ոտն քո մի՛ գայթակղեսցի։ Օվ եթէ նստիցիս՝ անեղկիւղ իցես. և եթէ ննջիցես՝ քաղցր ի քուն լեցիս։ Եւ ոչ երկիցես ի զարհուրանաց ի վերայ հասելոց ամբարշտաց. և յարշաւանաց ի վերայ եկելոց։ Օվ Տէր եղիցի ի վերայ ամենայն ճանապարհաց քոց, և հաստատեսցէ զոտն քո՝ զի մի՛ սասանեսցի։

Ընթերցուած յետացեալ մարգարէ է։

Այսպէս ասէ Տէր. ըստ աւուրց փայտին կենաց եղիցին աւուրք ժողովրդեան իմոյ. գործք ձեռաց նոցա հնասցին։ Եւ ընտրեալք իմ մի՛ ևս վաստակեսցին ընդունայն՝ և ոչ ևս ծնանիցին որդիս յանէծս. զի զաւակք օրհնեալք են յԱստուծոյ, և ծնունդք նոցա ընդ նոսա։ Եւ եղիցի մինչչև կարդացեալ իցէ նոցա՝ ես լուայց նոցա. և մինչդեռ խօսեսցին, ասացից թէ զի՛նչ խնդրէք։

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Ինձ այսպէս թուի՝ եթէ զմեզ զառաքեալս յետնորդս արար Աստուած իբրև զմահապարտս. զի տեսիլ եղաք աշխարհի, և հրեշտակաց՝ և մարդկան։ Մեք յիմարք վասն Քրիստոսի, և դուք իմաստունք ի Քրիստոս. մեք տկարք՝ և դուք հզօրք. դուք փառաւորեալք՝ և մեք անարգեալք։ Մինչև ցայսօր ժամանակի, և քաղցեցաք՝ և ծարաւեցաք՝ և մերկ գնացաք, և կռփահարեցաք՝ և անհանգիստ եղաք. և աշխատեցաք ձեռօք մերովք։ Րամբասէին զմեզ՝ օրհնէաք. հայհոյէին, աղաչէաք։ Հալածէին յանձն առնուաք. իբրև առակ նշաւակի եղաք ամենայն աշխարհի. ամենեցուն փարելի լինիլ մինչև ցայժմ։ Ո՛չ եթէ յամօթ ինչ առնելով զձեզ գրեմ զայս. այլ իբրև զորդիս սիրելիս խրատեմ։ Թէպէտ և բիւր դաստիարակս ունիցիք ի Քրիստոս՝ այլ ոչ եթէ բազում հարս. զի ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն ես ծնայ զձեզ։ Աղաչեմ զձեզ. նմանողք ինձ եղիջիք՝ որպէս և ես Քրիստոսի։

Քահանայապետ առնելոյ։

Ալէլո-յա։ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոյ"։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի. և լուսինն ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք անկցին յերկնից. և զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ ապա երևեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս. և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. և տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից. զօրութեամբ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ. և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց, ի ծագաց երկնից մինչև ի ծագս նոցա։ Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերևն ցըցւիցի. գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է առ դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամենայն եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն։

Ի դրան տաճարին, կամ թէ ի յետին դասն։

Ե- Սրբո-ւթիւն դարձուք։

Աղաչեսցուք զամենակալն Աստուած. զի պահպանեցուսցէ զմեզ նշանաւ խաչին իւրոյ յերևելի և յաներևոյթ թշնամեն. ամենակալ Տէր Աստուած մեր կե"։

Ճառագայթք համատարած, և աթոռ աստուածային. սպառք եկեղեցւոյ, և անբարբառ բարեխօս, նաւահանգիստ նաւակոծելոց, ճգնաւորաց ժուժկալութիւն, և հրաժարելոց յուզարկիչ։ Ի յահաւոր և ի հրացայտ գալստեան երկնաւոր թագաւորին յորժամ ճառագայթեալ փայլիս ընդ ամպս երկնից հիացուցանող զօրութեամբ. նոյն ինքդ զմարմին սորա ի խարդախող վիշապէն պահեա. և հոգւոյ սորա լեր առաջնորդ։ Որ բացող եղեր դրախտին փակելոյ, բաց սմա զդուռն ողորմութեան տեառն։ Որպէսզի արժանի լինելով սորա մահից դրախտին բացելոյ ի քէն, փառաւորեսցէ զՀայր և զորդի և զսուրբ Հոգին. այժմ և"։

Ի պաղպո-ւնի- ան ազնեցո-ւն

Աստո-ձայ եկկղպաւթեցո-ւթ։

Լուսափայլ աթոռ աստուածային և գաւազան զօրութեան որ ի ձեռն Մովսէսի հերձեր զծովն Կարմիր և զզօրութիւն քո ցուցեր փա-

բաւոնի՝ խորասոյզ ընկղմելով զնա զօրօքն իւրով, և Իսրայէլի առաջնորդեցոյր։ Որ զվէմն հերձեր և զծարաւի ժողովուրդն արբուցեր։ Որ յԱզիպտական սպանող ախտէն ապրեցուցեր զԻսրայէլ. և զթոյնս մահաբեր օձին կապեցեր։ Որ և ի նորումն առաւել փայլեցեալ գերազանց հրաշիւք և անճառ զօրութեամբ՝ երևեալ նշան փրկական ամենայն հաւատացելոց և ախոյեան մշտնջենաւոր, քան ի հնումն ի ձեռն օրինակացն և նմանութեանց՝ որք առժամանակեայք էին և ստուերք ճշմարտութեան։ Ռանզի առարիչն ի վերայ քոյ մնակարեալ բևեռեցաւ. և կանգնելով քոյ ի վերայ պարտեցելոյն գաղթեան Ադամայ, զգլորեալն կանգնեցեր. զվերաւորեալն բժշկեցեր. զախտն որ ի պատրաստէն եղև, լուացեր այնու՝ որ ի կողահոս աղբերէն ի վերայ քոյ հոսեցաւ։ Դու զնաւարարաւէր թշնամին ընկղմեցեր յանդունդս. և կապեցեր յանլոյծ կապանս։ Դու զնիգս դժոխոցն խորտակեցեր, և զարգելեալն որ ի նմա՝ ազատեցեր։ Դու բացեր զդուռն անեղաշէն դրախտեցեր։ Դու բացեր զդուռն անեղաշէն դրախտին. և առաջնորդեցեր աւազակին։ Դու հաւատք և կնիք ցուցար՝ որք ի Քրիստոս դաւանին։ Դու օգնական հաւատացելոց, և պատակ եկեղեցւոյ։ Դու հիմնեցուցիչ հաւատոյ դարձուցիչ մոլորելոց, և ապաւէն վտանգելոց։ Դու հիւանդաց բժիշկ, և ախտացելոց առողջու-

թիւն։ Դու հաւատացելոց պարիսպ, և անհաւատից կոչնանուագ։ Դու հրաւիրեալ ճառագայթ, և կարապետ գալստեանն Քրիստոսի։ Դու կենդանեաց հանգուցիչ, և հանգուցելոց առաջնորդ. առաջնորդեա և այժմ հոգւոյ հանգուցելոյս յօթևանս լուսոյ արգարոցն, և լեր վասն սորա միջնորդ և բարեխօս առ ի քեզ խաչեցեալն Աստուած, զի լուիցէ աղաչանաց միաբան ժողովելոցս, և բացցէ սմա զդուռն կենաց մտին, և հանդուսցէ ի դասս սրբոց և սիրելեաց իւրոց՝ առնելով նոցա հաղորդ և ուրախակից։ Եւ արդ՝ տէր մեր Յիսուս Քրիստոս զամենայատկի նշան սուբ խաչն քոյ բարեխօս ունելով առ քեզ՝ հայցեմք յամենառատ մարդասիրութենէդ քումմէ, զի ի ձեռն սորա առաջնորդեսցես հոգւոյ հրաժարեալ քահանայիս խաղաղութեամբ հասանել ի դրախտն լուսոյ ուր ժողովքն են սրբոց։ Եւ ի միւսանգամ գալստեան քոյ յորժամ գաս ի նորոգել զանարատ ձեռագործ քոյ ստեղծուածս, և փող ազդեցութեան կոչէ, և նորոգին հնացեալ մարմինք. յորժամ նշան տէրունական խաչիդ փայլի ընդ ամպս երկնից ճառագայթիւք աստեղահրաշ լուսով, և դասք սրբոցն սրաթռիչ թևիւք ամփոփին ի լուսոյ ճառագայթիցն, յայնժամ բարերար և մարդասէր Աստուած, արա զսա արժանի ընդ սուրբս քո թևառպարիլ ի լոյս

ձառագայթից սուրբ խաչիդ։ Եւ զմեզ արժանաւորեա փառաւորել զամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ և՛։

Ե՛ ասէն Շաբաւոն. ձառագայթ փառաց էին՛՛։ Մէկ պոռն ելք, Հոգւոյ՛՛։ Հայր մեր՛՛։

Եթէ ի ժամատան իցէ, տարցեն յառաջ դէպ ի դուռն, ջերեսն դէպ յարևելս դնելով։ Իսկ թէ ի յետին դասն է, թողցեն ի նոյն տեղւոջն անշարժ։ Եւ ասեն Շարական գկ. Լուսով ատաուածութեան քոյ Քրիստոս՛՛։

Սաղմոս. ճխբ. Ցնյց ինձ ի ճանապարհ յոր և գնասցիմ՛՛։ փոխ. Տէր լուր աղօթից իմոց ունկն դիր՛՛։

Ընթերցուած ի գործոց Առաքելոց։

Եւ ի Սելևսեայ յղեալ Անփեսոս՝ կոչեաց զերիցունս եկեղեցւոյն։ Եւ իբրև եկին առնա՝ ասէ ցնոսա. դուք ձեզէն գիտէք՝ յօրէ յառաջնմէ յորմէ եկի Ասիայ. որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակս եղէ։ Ծառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ՝ և բազում արտասուօք և փորձութեամբք, որք պատեցան ինձ ի նենգութեանց Հրէից։ Որպէս ոչինչ զանդիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ՝ և

ուսուցանել զձեզ հրապարակաւ և առանձին։ Տալ վկայութիւն Հրէից և հեթանոսաց զապաշխարութեանն որ առ Աստուած, և զհաւատոցն որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Եւ արդ ահաւասիկ ես կապեալ հոգւով երթամ Երուսաղէմ. և որ ինչ անդ ընդիս անց անցանելոց իցէ՝ չգիտեմ։ Բայց զի հոգին սուրբ ըստ քաղաքաց քաղաքաց վկայէ ինձ և ասէ, եթէ կապանք և նեղութիւնք մնան քեզ։ Այլ և ոչ իւիք համարիմ զանձն իմ պատուական՝ որպէս զի կատարեցից զընթացս իմ ուրախութեամբ՝ և զպաշտօնն զոր առի ի Տեառնէ Յիսուսէ վկայ լինիլ աւետարանի շնորհացն Աստուծոյ։ Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ ևս տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան՝ յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն։ Վասն որոյ զվկայութիւն դնեմ ձեզ յաւուրս յայսմիկ, զի սուրբ եմ յարենէ ամենեցուն։ Քանզի ոչ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զամենայն կամն Աստուծոյ։ Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ. յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զԺողովուրդս Տեառն, զոր ապրեցոյց արեամբն իւրով։ Քանզի գիտեմ ես՝ եթէ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ գայցեն գայլք յափշտակողք ի ձեզ, որք ոչ խնայիցեն հօտին։ Եւ ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։

Վ՚ԱՆ ԱՅՆՈՐԻԿ ԱՐԹՒՆՆ ԿԱՑԷՔ· ԶԻ ՁԵՐԿԱՄ ՄԻ ՁԳԱՅՊ ԵՒ ՁԳԵՐԵԿ՝ ՈՉ ԴԱԴԱՐԵՑԻ ԱՐՏԱՍՈՒՕՔ ԽՐԱՏԵԼ ԶՄԻ ՄԻ ԻՐԱՔԱՆՉԻՒՐ։ ՆՒ ԱՐԴ ՅԱՆՁՆ ԱՌՆԵՄ ՁՁԵԶ ՀԱՏՈՒԾՈՅ ԵՒ ԲԱՆԻ ՀՆՈՐՀԱՑ ՆՈՐԱ· ՈՐ ԿԱՐՈՂՆ Է ՀՆՆԵԼ՝ ԵՒ ՏԱԼ ՁԵԶ ՁԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՍՈՒՐԲԱՆ ԱՄԵՆԱՅՆ։ ԸՐԾԱԹՈՅ՝ ԿԱՄ ՈՍԿՈՅ՝ ԿԱՄ ՀԱՆԴԵՐՁԻՑ՝ ՈՉ ՈՐՈՒՔ Ի ՁԷՆՋ ՅԱՆԿԱՑԱՅ։ ԴՈՒՔ ԻՆՔՆԻՆ ԳԻՏԷՔ՝ ԶԻ ՁԱՓԱՍ ԻՄ, ԵՒ ՈՐՈՑ ԸՆԴԻՄ ԷԻՆ՝ ՊԱՀԱՏԵՑԻՆ ՁԵՌՔՍ ԱՅՍ։ ՆՒ ՁԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ ՅՈՒՑԻ ՁԵԶ· ԶԻ ԱՅՍՊԷՍ ՊԱՐՏ Է ՎԱՍՏԱԿԵԼ ԵՒ ԴԱՐՄԱՆԱԼ ՁՔԻԱՆԴԱ· ԵՒ ՅԻՇԵԼ ՁԲԱՆՆ ՏԵԱՌՆ ՅԻՍՈՒՍԻ, ՁՈՐ ԻՆՔՆ ԻՍԿ ԱՍԱՑ՝ ԵՐԱՆԵԼԻՆ Է ՄԱՆԱՒԱՆԴ ՏԱԼՆ ՔԱՆ ԱՌՆՈՒԼՆ։ ՆՒ ՁԱՅՍ ԻՐՐԵՒ ԱՍԱՑ՝ ԵԴԵԱԼ ԾՈՒՆՐ ԱՄԵՆԵՔՈՒՄԲՔ ԵԿԱՑ ՅԱՁՕԹԱ։ ՌԱՁՈՒՄ ԼԱԼԻՆ ԵՂԵ ԱՄԵՆԵՑՈՒՆ· ԵՒ ԱՆԿԵԱԼ ՁԱՊԱՐԱՆՈՑԱՆ ՊՕՂՈՍԻ ՀԱՄԲՈՒՐԷԻՆ ՁՆԱ։ Ա՚ՈՐՄՈՔԷԻՆ ՄԱՆԱՒԱՆԴ Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԻՆ՝ ՁՈՐ ԱԱԷՐ, ԹԷ ՈՉ ԼԱ ՏԵՍԱՆԵԼՈՑ ԵՆ ՁԵՐԵԱՑ ՆՈՐԱ· ԵՒ ՅՈՒՂԱՐԿԵՑԻՆ ՁՆԱ Ի ՆԱՒ ԱՆՂՐ։

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԻՆ Ի ԿՈՂՈՍՈՑԵՑՈՑ ԹՂԹԻՆ Է ԸՆԾԵՐՑՈՒԱԾՈ։

ԵԹԷ ՅԱՐԵԱՑՔ ԸՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ, ԱՊԱ ՁՎԵՐԻՆՆ ԽՆԴՐԵՑՔ՚ՔՈ· ՈՒՐ ՔՐԻՍՏՈՍՆ ՆՍՏԻ ԸՆԴ ԱՋՄԷ ՀԱՏՈՒԾՈՅ։ Ո՚ՎԵՐԻՆՆ ԽՈՐՀԵՑԱՐՈՒՔ ՄԻ՝ ՁԱՅՍ ՈՐ ՅԵՐԿՐԻ ԱՍԱ Է։ Ո՚ԱՆԳԻ ՄԵՌԱՑՔ՝ ԵՒ

ԿԵԱՆՔՆ ՁԵՐ ԾԱԾԿԵԱԼՔ ԵՆ ԸՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՀԱՏՈՒԱԾ։ ԻՍԿ ՅՈՐԺԱՄ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՅԱՏՆԵՑԻ, ԿԵԱՆՔՆ ՁԵՐ· ՅԱՅՆԺԱՄ ԵՒ ԴՈՒՔ ԸՆԴ ՆՄԱ ՅԱՅԱՆԵՍՋԻՔ ՓԱՌՕՔ։

Ալէլ-ույ։ Սաղմոս ՃԲ· Օրհնեա անձն իմ զՏէր· և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա։ Օրհնեա անձն իմ զՏէր· և մի մոռանար զամենայն տուրս նորա։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

ՉԱՅս ԽՕՍԵԱՑԱՅ ԸՆԴ ՁԵԶ· ԶԻ ԸՆԴԻՍ ՁԽԱՂՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՑԻՔ· ՅԱՇԽԱՐՀԻ ԱՍՏ ՁՆԵՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՑԻՔ· ՅԱՅԼ ՔԱՋԱՂԵՐԵՑԱՐՈՒՔ, ԶԻ ԵՍ ՅԱՂԹԵՑԻ ԱՇԽԱՐՀԻ։ ՉԱՅՍ ԻՐՐԵՒ ԽՕՍԵՑԱՒ ՅԻՍՈՒՍ, ՀԱՄԲԱՐՁ ԶԱՉՍ ԻՒՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՒ ԱՍԷ· Հ՚ՕՅՐ՝ ՀԱՍԵԱԼ Է ԺԱՄ· ՓԱՌԱՒՈՐԵԱ ԶՈՐԴԻ ՔՈ· ԶԻ ԵՒ ՈՐԴԻ ՔՈ ՓԱՌԱՒՈՐԵՍՑԷ ԶՔԵԶ։ ՈՐՊԷՍ ԵՒՈՒՐ ՆՄԱ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՄԱՐՄՆՈՅ· ԶԻ ԱՄԵՆԱՅՆԻ, ՁՈՐ ԵՒՈՒՐ ՆՄԱ, ՏԱՑԷ ԶԿԵԱՆՍ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆԱ։ Ը՚ՅԱ ԵՆ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ։ ԶԻ ԾԱՆԻՑԷՆ ԶՔԵԶ ՄԻԱՅՆ ՃՇՄԱՐԻԱ ՀՀԱՏՈՒԱԾ· ԵՒ ՁՈՐ ԱՌԱՔԵՑԵՐ ԶՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ։ ՆՅ ԶՔԵԶ ՓԱՌԱՒՈՐԵՑԻ ՅԵՐԿՐԻ· ՁՈՐԾՄԱՆ ԿԱՏԱՐԵՑԻ, ՁՈՐՍ ԵՒՈՒՐ ՁԻՆ՝ ԶԻ ԱՐԱՐԻՑ։ ՆՒ ԱՅԺՄ ՓԱՌԱՒՈՐԵԱ ՁԵՍ Հ՚ՕՅՐ ԱՒ Ի ՔԷՆ ՓԱՌՕՔՆ՝

զոր ունէի յառաջ քան զլինիլ աշխարհի առ
ի քէն։ Յայտնեցի զանուն քո մարդկան, զորս
եառուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ եառուր
զնոսա. և զբանն քո պահեցին։ Ցդ գիտացին
եթէ զամենայն ինչ զոր եառուր ինձ՝ առ ի քէն
են։ Օվի բանն՝ զոր եառուր ինձ՝ եառու նոցա.
և նոքա ընկալան. և ծանեան ճշմարտութեամբ
եթէ առ ի քէն ելի. և հաւատացին եթէ դու
առաքեցեր զիս։ Ցդ՝ ես վասն նոցա աղաչեմ,
և ոչ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա՝
զորս եառուրն ինձ՝ զի քո են։ Եւ որ ինչ իմ
է՝ ամենայն քո է. և որ ինչ քո է՝ այն իմ է.
և փառաւորեալ եմ ի նոսա։ Եւ ես ոչ ևս եմ
յաշխարհի՝ և նոքա յաշխարհի են. և ես առ
քեզ գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա յա-
նուն քո, որով եառուրն ինձ. զի եղիցին մի,
որպէս և մեք մի եմք։ Ի՝նչ էի յաշխարհի
ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո՝ որով
եառուրն ինձ՝ և պահեցի. և ոչ ոք ի նոցանէ
կորեաւ. բայց որդին կորստեան, զի գիրն լցցի։
Բայց արդ առ քեզ գամ. և զայս խօսիմ
յաշխարհի, զի ունիցին զուրախութիւն իմ
լիով յանձինս իւրեանց։ Ես եառու նոցա զբա-
նըն քո, և աշխարհ ատեաց զնոսա. զի չեն
յաշխարհէ, որպէս և ես չեմ յաշխարհէ։ Ո՛չ
զայս աղաչեմ, զի բարձցես զնոսա յաշխարհէ.
այլ զի պահեցես զնոսա ի չարէ։ Յաշխարհէ

աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ։ Սուրբ
արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո
բանդ ճշմարտութիւն է։ Որպէս զի առաքեցեր
յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ։
Եւ ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ.
զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։
Ցայլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն
ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս։ Օվի
ամենեքեան մի իցեն. որպէս դու Հայր յիս՝ և
ես ի քեզ. զի և նոքա ի մեզ իցեն. զի և աշ-
խարհ հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս։
Եւ ես զփառան զորս եառուր ինձ, եառու նոցա.
զի իցեն մի, որպէս և մեք մի եմք։ Ես ի նոսա՝
և դու յիս. զի եղիցին կատարեալք ի մի. և
գիտասցէ աշխարհ եթէ դու առաքեցեր զիս.
և սիրեցի զնոսա՝ որպէս դու սիրեցեր։ Հայր՝
զորս եառուրն ինձ, կամիմ, զի ուր եան եմ, և
նոքա իցեն ընդիս. զի տեսանիցեն զփառան իմ,
զոր եառուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան
զլինիլ աշխարհի։ Հայր՝ արդարև աշխարհ
զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ. և
նոքա ծանեան եթէ դու առաքեցեր զիս։ Եւ
ծանուցի զանուն քո՝ և ծանուցից. զի սէրն,
զոր սիրեցեր զիս, ի նոսա իցէ՝ և ես ի նոսա։
Օայս իբրև ասաց Յիսուս, ել աշակերտօքն
հանդերձ յայնկոյս ձորոյն կեդրոնի. ուր էր
պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր։

Ապիկ–ափն խոպղէ։ վ.ան ի վերուստ խոզա՛։

Եւ ասէ զԱղօթս։

Եկեալ եմք երկիրպագանել առաջի սուրբ փառաց աթոռոյ քոյ ի խորանս սրբութեան քոյ. և արտասուալից հառաչանօք հայցեմք ի քէն Տէր բարեգութ, դի ընկալցիս զպատարանս մեր՝ զոր մատուցանեմք առաջի քոյ զթութեանդ։ Քանզի ծառայս քո զոր կոչեցեր յառաջնորդութիւն ժողովրդեան քում և ի սպասաւորութիւն սրբոյ եկեղեցւոյ՝ հովուել զժողովուրդս քո, ահա ըստ հրամանի քոյ կատարեալ զժամանակս իւր եկն առ քեզ։ Ընդ՝ քաղցր և բարերար Տէր. զպատարագս և զընծայէս վան մեզաց զոր մատուցեալ է առաջի քոյ, և զյիշատակս ննջեցելոց զոր ի վերայ սեղանոյդ սրբոյ անուանդ քում կատարեալ է, ընկալ ի հաճոյս քեզ. և ողորմեա ըստ մեծի ողորմութեան քում. և հոգւոյ սորա առաջնորդեա ի յերկիր ուղիղ՝ որ տանի ի կեանսն յաւիտենից՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէրդ մեր. որում վայելէ՛։

Լապղա–ըխ–ն ածնէցո–ն
Ա.պա–ձոյ եղիէ–պ–գեացո–ւ։

Յոյս արարածոց և փրկիչ աշխարհի. որ վանս մեղաւորաց խնայարհեցար յանճառ փառաց և

մարմնացար յանարատ կուսէն. եկիր կամաւ ի չարչարանս խաչի. եղար ի գերեզմանի, մտեր ի մէջ դժոխոց, և զթշնամին կապեցեր յանլոյծ կապանս. յարեար ի մեռելոց՝ և մեզ նորոգութիւն խոստացար ի միւսանգամ գալստեանդ։ Յիշեա զծառայս քո զայս՝ որ ի մնոտի կենցաղոյս փոխեցաւ. և զքահանայութիւնս զոր կատարեաց յաշխարհի, ընկալ քեզ ի հաճոյս. և տուր սմա բաժին ընդ արժանաւորս և ընդ սիրելիս անուանդ քում, որք սրբութեամբ պաշտեցին զքեզ։ Եւ զոր ինչ յանցեալ իցէ բանիւք՝ կամ դործովք՝ կամ մտածութեամբ, թող սմա. քանզի դու ես ողորմած և անհաւակալ Տէր. և քեզ վայելէ փառք՝ իշխա՛։

Շապկան, Զար կապանաց մարդկան՛։ Ջկ պա–ն եչփ Հոգւոյ՛։ վ.ան հանգա՛։ Քրիստոս որդի՛։

Ե– փեսա–նափըն պղին ածնայն չահանայփն, և ապա ասէն Հայր մեր՛։

Եւ տանին յԱրևելեան կողմն, ասելով Շարական ած. Որ զանարատ բազուկս քո՛։ Եւ դարձուսցեն զերեսն դէպ յարևմուտս, ապա ասեն Սաղմոս ողբաձայն, ճիգ։

Օգնութի՛ւն է մե՛զ յանուանէ Տեառն. ա՛յն որ արա՛ր զե՛րկի՛նս և զերկիր։ Փա՛ռ։ Եթէ ոչ Տէր էր առ մե՛զ՝։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգական յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։ Դարձեալ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի. զոր գտեալ մարդոյ թաքոյց՝ և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն։ Դարձեալ նմանէ արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, և գնեաց զայն մարգարիտ։ Դարձեալ նման է արքայութիւն երկնից՝ ուռկանի արկելոյ ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ։ Որ իբրև լցաւ, հանեալ ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս՝ և զխոտանն ի բաց ընկեցին։։ Ընդ այսպէս եղիցի ի կատարած աշխարհիս. ելցեն հրեշտակքն՝ և մեկնեացեն զչարս ի միջոյ արդարոց։ Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ՝ անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Ասէ ցնոսա Յիսուս՝ իմացա՞ք զայս ամենայն, ասեն ցնա այո՝ տէր։ Եւ նա ասէ ցնոսա՝ վասն այսորիկ ամենայն դպիր

աշակերտեալ արքայութեան երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին։

Եւ Սաղմոսգն ասէ։ Վասն ի վերուստ՝։

Եւ քահանայն ասէ զՂօրթս։

Աստուած հոգւոց և ստեղծիչ մարմնոց. Տէր ես կենդանեաց և յարութիւն մեռելոց։ Աստուած՝ ի քէն արձակին հոգիք, և քո հրամանաւդ կառավարին մարմինք։ Աստատեցեր զմարդն ընտրօքդ, և ստեղծեր զնա ողորմութեամբ։ Հանդ քո կարգեաց զարարածս, և կազմեաց զաշխարհս։ Զամենայն ինչ արարեր վասն մարդոյ. և զմարդն ի փառս Աստուածոյդ։ Դեղեցիկ կերպարանօք նկարեցեր զմարդն առաջին. զոր հաստատեցեր և արարեր կենդանի և անմահ, և կացուցեր Տէր ամենայնի։ Դատանակալ եղև թշնամին արդարութեան. խաբեալ ընկեց ի փառացն և ի կենացն. և էհան ի դրախտէն փափկութեան։ Եկն միածին Որդի քո սիրելի. և զգեցաւ զմարմին պարտուղ. և նորոգեաց զնա ի կեանս. զկործանեալն կանգնեաց, և զմահկանացուն անմահ արարք. զթշուառացեալն փառաւորեաց, և նստոյց ընդ

աջմէ Հօրդ իւրոյ։ Զանգի ընդ ունկն լսելեացն եմուտ մահ, և ընդ ունկն լսելեացն ծագեաց կեանք· ընդ ունկն Եւայի բարբառ մահու, և ընդ ունկն Մարիամու աւետիք կենաց։ Թագաւորեաց մահ յանցանօք, թագաւորեցին կեանք ընտրհօք· յանհնազանդութենէ եմուտ մահ, և ի հնազանդութենէ գալուստ կենաց· ժպրհեցաւ և յանցեաւ Ադամ, զի եղև ցանկացող աստուածութեան· աստուածութեան ոչ էհաս, և յիւրոցն ևս անկաւ։ Ի մեղս մեր մեռանիմք, և ողորմութեամբ քով յառնեմք· ի յանցանս մեր եղծանիմք, և ի կամս քո նորոգիմք։ Լռեալ դադարին ամենայն մարմինք· իջանեն ի հող և ապականին· սերմանին ի հող՝ նմանութեամբ սերմանեաց երկրի· և ապաւեն անձրևիդ մեծի· զի ելցեն իբրև զթոյս յերկրէ։ Վերանան սուրբքն յերկրէ ի բարձունս, և ճնան մեղաւորքն յերկրի· արդարքն վայելեն ի փառս և ի կեանս, և մեղաւորքն հաշեն և մաշեն ի տանջանս։ Ըրդ՝ յորժամ այս ամենայն լինի, դու բարերար Աստուած, տուր ծառայիս քո (այս անուն) հանգուցեալ քահանայիս, զի յարիցէ աչալրջութեամբ երեսաց· և կացցէ ընդ աջմէ քումմէ և ժառանգեսցէ զարքայութիւնդ· ի վայելել զանապատ ուրախութիւնսդ ընդ սուրբս քո՝ և ընդ նոսին փառաւորել զամենասուրբ

զՔրրորդութիւնդ· այժմ և միշտ և յաւիտեանս յաւի՛ն։

Շարական· Տարածեալ ձեռք բնդ ձե՛։ Մէկ պսա՛ն երգէ։ Հոգւոց՛։ վասն հանգ՛։ Քրիստոս Որդի՛։

Եւ պետրոսաբջնն զբնն ասէնայն տահանային, և ապա ասէն՝ Հայր մեր՛։

Եւ ապա տանին ի կողմն Հիւսիսոյ՝ ասելով Շարական խաչի· ակ. նաչ քո հզիցի մոզ ապաւէն՛։ Եւ գարձուսցեն զերեսն դէպ ի Հարաւ։ Եւ ասեն Սաղմոս ողբաձայն, ձևս։

Երանի՛ ազգի որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա՛. և յոյս՛։ Փ.Փ. Օրհնեա՛ անձն իմ զՏէր· օրհնեցից զՏէր՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու՝ ոչ ոք գիտէ· ոչ հրեշտակք յերկինս, և ոչ Որդի· բայց միայն Հայր։ Զգո՛յշ եղերուք· հսկեցէ՛ք՝ և կացէ՛ք յաղօթս՝ զի ոչ գիտէ՛ք երբ ժամանակն իցէ։ Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ, թողուցու զտուն իւր· և տացէ ծառայից իւրոց իշխանութիւն· և իւրաքանչիւր ըստ գործս իւր· և դռնապանին պատուէր տայցէ

զի արթուն լինիցի։ Ա՛րդ՝ արթուն կացէք. զի ո՛չ գիտէք երբ տէր տանն գայցէ, յերեկորեայ՝ եթէ ի մէջ գիշերի՝ եթէ ի հաւախօսի՝ եթէ ընդ առաւօտս։ Դուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ի քուն։ Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ. արթո՛ւն կացէ՛ք։

Սպիտա՛ծն *տպրդէ՝* վասն ի գիշերի և՛։

Եւ քահանայն ասէ զկնդօթս։

Օրհնեալ ես արդարադատ և ողորմած Աստուած. միայն անոխակալ և բարեգութ. որ յակնարկելդ քո՝ հաստատեցան հիմունք երկրի։ Դո՛ ձեռամբդ արարեր զմարդն. և քո նախախնամութեամբդ իշխան և տէր կացուցեր զնա ի դրախտին փափկութեան։ Սակայն չարին մախացեալ ընդ փառս պատուին զոր ի քէն ընկալաւ, էհեղ ի նա զթոյնս դառնութեան. և խաբմամբ օձալեան պատրանօքն եառ նմա ճաշակել ի ծառոյն գիտութեան. որով մերկացեալ ի լուսեղէն փառացն՝ զանիծից և զցաւոց ժառանգեաց զկեանս։ Իսկ դու յառաջատես եղեալ՝ հրամայեցեր մահու փոխել զնա ի զազրալից կենցաղոյս. որպէս զի մի՛ անմահ լեցի չարութիւնն որ ի մեզ սերմանեցաւ։ Ըստ նոյնոյ օրինակի և սպասաւոր սրբոյ սեղանոյ քոյ փո-

խեցաւ ահա առ քեզ՝ ըստ կէտի սահմանադրութեան քոյ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր, կցմրդ լեր և միխիթարիչ ծառայիս քոյ (այս անո՛ւն) հանդուցեալ քահանայիս. զի դու ես կեանք և յարութիւն. զի եթէ մինչ ոչն էր՝ արարեր. զի ա՛րդ եղծանես զպատկեր կերպարանաց քոց։ Ընդաւեմք զքեզ Տէր, նորոգեա զծառայս քո. զի վայելէ իսկ թագաւորիդ նորոգել զպատկեր իւր հնացեալ. նորոգեա Տէր զպատկեր քո որ հնացեալ է ի մեղս. զի մեծ են այս երախտիքս՝ քան զառաջինն պարգևան քո. զի անդ հաստատելով հաստատեցեր, և աստ զհնացեալս նորոգես։ Որպէս զի գտեալ սորա զմեծ զորմութիւն ի քէն, հանցէ զօրհնութիւն և զփառս *Հօր* և Որդւոյ և *Հոգւոյդ* սրբոյ. այժմ և՛։

Շպտ. Նորոգող տիեզերաց՛՛։ Ա՛ր պա՛ռն եղե։ Հոգւոյ՛՛։ Վասն հանգ՛՛։ Բրիտաոս Որդի՛՛։

Եւ պետրոսագրեն ղբին ածնայն *տհանայդ*, և առնէհայր մեր՛՛։

Եւ տաւին ի կողմն Հարաւոյ՝ ասելով Ջարական խաչի, բձ Ա.յոր խնդրի պատուական փայտ խա՛։ Եւ գարձուացն զերեսն դէպ ի հիւսիս։ Եւ ասեն Սաղմոս ողբաձայն. ճլը։

Ո՞նդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն և՞ ըզկեանն յարիւեններից։ Փա. Օի բարի կամ զի վայելուչ՛՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Եւ եղև հակառակութիւն ի մէջ նոցա, թէ ով ինոցանէ համարիցի մեծ։ Եւ նա ասէ ցնոսա. Թագաւորք ազգաց տիրեն նոցա. և որք իշխենն նոցա. բարերարք կոչին։ Ձյլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն. և առաջնորդն իբրև զպաշտաւորն։ Ով է մեծ՝ բազմեաւն եթէ սպասաւորն. ոչ ապաքէն բազմեալն. բայց ես եմ ի միջի ձեռում իբրև սպասաւոր։ Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդիս ի փորձութիւնս իմ։ Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն։ Օի ուտիցէք, և ըմպիցէք ի սեղանն իմ յարքայութեան իմում. և նստիցիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայէլի։

Ե– Սաղա–ափն ֆարվէ։ վան ուղղիլոյ՛՛։

Եւ քահանայն ասէ զնդօթա։

Օրհնեալ ես Տէր Աստուած ամենակալ ա–բարիչ ամենայն արարածոց, գատաւոր կենդա–նեաց և մեռելոց. որ իշխանդ ես հոգւոց և մարմնոց։ Որ մարդասիրապէս զթացար ի տը–կարութիւնս, և յայց եղեր մեզ կորուսելոցս. վերստին կանգնեցեր զմեզ ի գլորմանէ մեղաց մերոց. եղեր զթշնամին ի ներքոյ ոտից մերոց։ Խաչեալ ի վերայ փայտին կենաց, և խաչակ–ցեալ զՏնութիւնս մեր առ ի հերքութիւն ամենա–չար պատրողին, իջեր ի դերեզման. աւերեցեր զդժոխս. եղեր առաջին պտուղ ննջեցելոց քո–յով աստուածահրաշ յարութեամբդ. և վերա–ծեր զատուերանատեալքս ի խաւարի. զմահկա–նացուս անմահացուցեր յուսով ի ձեռն կենսա–բեր յարութեան քոյ։ Ընկալ և այժմ զհոգի ծառայիս քոյ (այս անուն) քահանայիս ի բարի. և զասաւորեա ընդ սուրբս քո։ Թո՛ղ սմա Տէր ողորմած զյանցանս սորա զկամայ և զակա–մայ. զի դու ես քաւիչ մեղաց մերոց և կա–տարիչ խնդրուածոց. և ապաւէն յուսացելոց քոց։ Լո՛ւր մեզ Տէր՝ և ընկալ զհոգի հանգու–ցելոյս մերոյ քոյով զթութեամբ. և գրեա ըզ–յիշատակ սուրբ անմոռաց յիշմամբ առաջի սուրբ փառաց աթոռոյ քոյ. զի արբեալ ի մե–

զաց՝ սուրբ սրտիւ և անկեղծ հաւատով՝ արդարութեամբ և անբծութեամբ, արժանի եղիցի երկնաւոր պարգեւացդ ընդ ամենայն սուրբս քո։ և ընդ նոսին գոհանալով փառաւորեսցէ զքեզ ընդ Որդւոյդ։ այժմ"։

Նոքականն։ Եռուն ըմպել քեզ ղեղի"։ Մէկ պոռն երգէ։ Հոգ ւոյ"։ վասն հանգ"։ Քրիստոս Որդի"։

Ե– Քեռ–նագըն ղըլն աչնայն Հահանայն, և ապա ասէն Հայր մեր որ յերկ։

Եւ տանին ի կողմն Արևմտից՝ ասելով Շարական խաչի, բկ. նայն կենարար որ"։ Եւ գարձուսցեն զերեսն դէպ յարևելս. Եւ ասեն Սաղմոս ողբաձայն, ճղ։

Օ՛րհնեսցէ ըզմե՞զ Տէր ի՛ Սիո՞նէ այն որ բնակեալն է յե՛րուսաղէմ։ Փս. Ը՛սա օրհնեցէք զէք աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ասէ ցնոսա Յիսուս. ես եմ հացն կենաց. որ գայ առիս, ոչ քաղցիցի. և որ հաւատայ յիս, ոչ երբէք ծարաւեսցի։ Այլ ասացի ձեզ՝ թէ տեսանէք զիս, և ոչ հաւատայք։ Զամենայն,

զոր տայ ինձ Հայր, առիս եկեսցէ. և որ գայ առիս, ոչ հանիցս արտաքս։ Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։ Ա՛յս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն զիս. զի զամենայն, զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ. այլ յարուցից զնա յաւուրն յետնում։ Ա՛յս են կամք Հօր իմոյ. զի ամենայն, որ տեսանէ զՈրդի՝ և հաւատայ ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենական. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։

Ե– Սալհա–ագն Հալաղէ։ վասն գառանելոյ մեզ զՀնորհս։

Ե– Քահանայն առէ զՎ.ղօքս։

Յոյս կենաց և ընդունող աղօթից Տէր Աստուած մեր՝ կարդամք և պաղատիմք առաջի քոյ բարերարութեանդ. որ վասն յանցանաց մերոց խոնարհեցար ի փառաց քոց՝ զմերոյս զգեցար մարմին, զի զմեզ ազատեսցես ի յանցանաց մեղաց մերոց։ Որ եկիր ի խնդիր մոլորեալ ոչխարին՝ բառնալով ի վերայ փառաւոր ուսոյդ, զի զառաղջութիւն շնորհեսցես վերաւորելոյն։ Եւ որ կարծեալ իշխանն էր աշխարհի, խաչիւ և մահուամբ բարձեր ի միջոյ. և արարեր խաղաղութիւն յերկինս և յերկրի։

Ի քո անարատ ի կողդ ընկալար զխոցումն գե-
ղարդեանն. որ անպարտաւորելիդ էիր, պար-
տաւորեցար. զի զմեզս կողաճնին չարչարա-
նօք քո բարձցես, և նոյն կենացն հուպ արաս-
ցես։ Ննջեցեր ընդ մեռեալս. անմահդ անշըն-
չացար՝ որ մեռելոց յոյսդ ես՝ և կնիք անլու-
ծանելի մինչև յօր կրկնակի գալստեան քոյ.
ի գերեզմանի եղար ընդ մեռեալսն կնքեալ վի-
մաւ, զի ի հողոյ ի նորոգութիւն կենաց եկես-
ցեն։ Որ խոստացար զարարածս միանգամայն
նորոգել և կեցուցանել. զապականեալն ի հո-
ղոյ առնել անապական, զոր աստուածային բա-
նիւդ ասացեր զյարութիւն շնորհել մեռելոց։
Եւ զսիրելիսն քո՝ որք հաւատացին գալստեան
քոյ առանց երկուանալոյ, և պահեցին զպա-
տուիրանս քո, և հաղորդ եղեն քեզ ի չար-
չարանս և ի մահ, հրաւիրեցեր ի մահուանէ
ի կեանս. ի խաւարէ յանբաւ և յանճառ լոյսդ,
ի վայելել զփառս արքայութեան քոյ. որպէս
և ասացեր, թէ ուր եմն եմ՝ անդ և պաշտօ-
նեայն իմ եղիցի։ Ո՛րդ՝ յիշեա զհոգի ծառա-
յիս քոյ՝ որ ըստ մեծի հրամանացդ քոց, յայ-
սմ կենցաղոյս առ քեզ փոխեցաւ. և եղեց
զժամանակս կենաց աշխարհիս, դառնալ ի նոյն
հող ուստի ստեղծաւ. և եղաւ ի հող մահու՝
որ է մայր մեր ամենեցուն և առագաստ մարմ-
նոց մերոց։ Եւ ի միւսանգամ գալստեանն քոյ

յորժամ երևիս փառօք և թագաւորութեամբդ
քով՝ և ի նոյն հողոյ ստեղծանես անապական
զհողացեալ մարմինս, արժանի արա զսա լսել
զձայն աւետաւոր յարութեան ընդ սրբոցն և
առաքինեաց՝ որք իցեն ընդ աջմէ մեծութեան
փառաց քոց։ Ընդունելի զքեզ և խնդրեմք ի
քէն. մի՛ յանարժանութիւնս մեր հայելով,
արգելցես զշնորհս մարդասիրութեան քոյ. այլ
արասցես ըստ մեծի ողորմութեան քում։
Ջննջեա զձեռադիր յանցանաց հրաժարեալ
(այս անուն) քահանայիս. և թող զմեզս սորա՝
զկամայ և զակամայ, զգիտութեան և զանգի-
տութեան։ Խարեխօսութեամբ սուրբ Աստուա-
ծածնիդ անարատ կուսի և մօր քոյ՝ և ամե-
նայն սրբոց քոց, յիշեա զհրաժարեալ հոգիս
որ առ քեզ փոխեցաւ։ Տէր և դատաւոր, լուր
պաղատանաց պաշտօնէից ժողովրդեանս. և
դասաւորեա զհոգի սորա ի դաս ընտրելոց քոց։
Աստուած և ստեղծիչ ամենայնի. արա զսա
արժանի լսել զձայն աստուածային փողոյ յա-
րութեան. վերանորոգեա վայելչապէս ի հողոյ
ծնանիլ զնոյն մարմին, նորոգիլ ի փառս քո.
զվտանգ մահու զոր թշնամին ապականեաց՝
բարձ ի սմանէ քո անուամբդ մկրտելոյս, որ
ի մէնջ հրաժարեաց առ քեզ գալով. և թող
զմեզս սորա, և թեթևացո զծանրութիւնն բե-
ռին մեղաց սորա։ Եւ թողութիւն շնորհեա

ամենայն ժողովրդեանս, զի օրհնեալքս ի սմանէ և մկրտեալքս՝ արժանաւորք լինիցին արքայութեանդ երկնից։ Զմեղսաքաւիչ պատարագդ մատուցեալ ի սմանէ յաղագս հոգւոց ննջեցելոցն, ընկալցիս՝ և թողութիւն շնորհեցես ամենեցուն առհասարակ։ Ո՛վ Տէր ամենայնի՝ Ստուած և արարիչ բոլորից, տուր միխիթարութիւն և սիրտիանս ժողովրդեանս քահանայիս. որք լալով և արտասուօք մորմոքին վասն հրաժարման սորա։ Եւ զմեզ զհաւատացեալսդ ի քեզ օրհնեա. զի ամենասրբոյ Երրորդութեանդ տացուք ամենեքեան զփառս և զիշխանութիւն և զպատիւ. այժմ և միշտ՝։

Խոպոպութիւն աղնկոյն

Ասոծոյ եղիզպաքեոցոյ։

Օրհնեալ ես Տէր Ստուած արարիչ ամենայն արարածոց. որ արարեր զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա, և դարձեալ առեր զհողն յերկրէ. և ստեղծեր զմարդն կենդանի և խօսուն. և եղեր զնա ի դրախտին փափկութեան գործել զնա և պահել։ Եւ յանցանել նորա զպատուիրանաւ քո՝ մահու տիրացուցեր զնա, ի դառնալ յերկիր ուստի առաւ։ Եւ իջանելով քոյ ի հող մահու՝ վերակոչեցեր զմեռեալ բնութիւնս ի կեանս և յանապակա-

նութիւն։ Եւ այժմ ըստ նոյնոյ աստուածային անդարձ վճռոյ՝ կոչեցեր զծառայս քո դառնալ ի հող յորմէ ստեղծաւ. զի ի միւսանգամ գալստեան քոյ ի հնչել տիեզերալուր բարբառոյ փողոյն աղէեցութեան՝ նորոգեսցի անմահութեամբ ի վերանալ ի կեանս անապականն։ Ո՛ւստի յոյժ աղաչեմք զքեզ մարդասէր Տէր, արա այցելութիւն ծառայիս քոյ այսորիկ ի յայնմ աւուրն մեծի՝ ներելով ամենից սխալանացս սորին, և բանալով սմա զմուտ յաւիտենական կենացդ։ Եւ միխիթարեա զժողովուրդս քո՝ որք եկեալ եմք յուղարկել զսա զհետ ամենայն ննջեցելոց սրբոց։ Եւ այժմ մարդասէր Տէր. տուր համբերութիւն ոգոյ, և միխիթարեա զսոսա ողորմութեամբ քով. և զհոգի ծառայիս քոյ հանգո՛ր ընդ սուրբս քո։ Ստուած յաւիտենական՝ որ արժանի արարեր զծառայս քո դառնալ ի հող ուստի ստեղծեր, հանգո՛ր զհոգի սորա. և պահեա՛ անարատ իբրև զգանձս պատուականս աստուածութեանդ քոյ. զի ծառայ քո է՝ և հաւատացեալ է ի Տէրդ մեր Յիսուս Քրիստոս. յիշեմք զքեզ Տէր ի վերայ հանգուցեալ քահանայիս այսորիկ։ Յիշեա՛ Տէր զհոգի սորա. և խառնեա՛ ի դասս հրեշտակաց քոց, և ի գունդս այնոցիկ՝ որք սիրեցին զօր երևելոյ գալստեան քոյ։ Եւ ի գոչել աստուածայինդ փողոյ երևմամբ սուրբ խա-

էին, ի լուսոյն պայծառասցի· տեսանելով սա զանանց լոյսն և զանապական գեղ կերպարանին. և զուարթերես կացցէ ընդ աջմէ ահաւոր բեմիդ. և առանց ամօթոյ տեսցէ զթագաւորդ երկնաւոր. և լուիցէ զձայնդ աւետաւոր թէ՝ եկայք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէք զըզյաւիտենական ուրախութիւնն. և զոհանալով փառաւորեսցէ զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ· այժմ և՛։

Եթէ վախճանեալն Առաջնորդ էցէ և տէր վիճակի, դայս Աղօթքս ևս կարդայ։ Ի վերայ Կաթուղիկոսի ևս կարդայ։

Աստուած բազումողորմ, Աստուած ապարիչ մխանջենաւոր· որ պատուեցեր զմարդն փառօք· և պահեցեր շնորհօք և իմաստութեամբ· ընտրեցեր Հոգւովդ քով սրբով զմարգարէսն՝ և օծեր իւղով սրբութեան զքահանայս· կոչեցեր զառաքեալսն ի քարոզութիւն աւետարանի փառացդ քոց, և յօրինեցեր զվարդապետս տեսուչս ժողովրդեանն քոյ՝ զոր փրկեցեր արեամբ միածնիդ քո։ Դու Տէր՝ ընտրեցեր (պայս անուն) քահանայ, որ այցելութեամբ Հովուեաց զժողովուրդս քո· և ըստ Հրամանի տեսչութեան կոչեցեր ի հանգիստ քո՝ փոփոխմամբ ժամանակեայ մնհու՝ որով առ քեզ գայ ամենայն

մնեղի։ Ըրդ՝ ահա այժմ հրաժարիմք և հրաժարեցուցանեմք արտաստօք· և աղաչեմք ի մէջ եկեղեցւոյ քոյ սրբոյ· որպէս եառուր զսա մեզ ի սփոփանս և ի վայելչութիւն հոգւոց մերոց, որպէս պահեցեր զմեզ աղօթիւք սորա ի փորձութեանց յերևելեացս և յաներևութից, տուր մեզ և յաջորդող սորին ամենայն ընտրեալ հովիւ՝ և պաշտօնեայ անբիծ և ուղղափառ. և մի՛ թողուր զվիճակ հօտի քոյ ի նախանձամոլ վերակացութենէ Հոգւոյդ սրբոյ։ Եւ զհոգի սորա բնակեցո ի պատրաստեալ օթևանս կամարարաց քոց· և զմարդկօրէն սխալանս սորա անտես արա։ Դու ես քաւիչ մեղաց· որ միայն ունիս պիշխանութիւն արձակել զմեղապեալս ի բանսարկուէն։ Պայծառացո զլիշատակ սորա ի մէջ եկեղեցւոյ քոյ և ժողովրդեանս· և առաջնորդեա սմա Հոգւովդ քով սրբով ի յերկիր ուղիղ՝ որ հանգուցանես զտարժանեալս ի մարմնի։ Դու ես յարութիւն և կեանք ամենեցուն· և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պա՛։

Շարական· Բարբառելով զելի ելին՛։ Մեկ տո՛ն նգե։ Հոգւոյ՛։ Հայր մեր՛։

Ի գերեզմանն տանելոյ կարգ՝ ի ճանապարհին։

Յետ այսորիկ սկսանին ասել զերեք Ամբիծն մինչև ցիշխանք հալածեցինն։ Եւ բառնան քահանայքն՝ և տանին ի հանգստեան վիճն. ասելով Հարական գձ. Ա յսօր ժողովեալ սրբոյն ի միասին"։ Իւր սարօքն ասեն. և թէ ոչ բաւականացի։ զՀանգստեան գձ. ձայնն ևս ասեն, որքան պիտոյ է։ Յորժամ հարկանի փող դալս"։ (և այլն որ գկնի։) Եւ ի ճանապարհին ի չորս տեղիս հանգիստ առնեն, և չորս փոխ Աւետարան կարդան։

Հանգիստ Առաջին։ Ո՛րթիւ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Յայնմ ժամանակի պատասխանի եւս Յիսուս՝ և ասէ. գոհանամ զքէն Հայր՝ Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս իմաստնոց և ի գիտնոց՝ և յայտնեցեր տղայոց։ Այո՛ Հայր՝ զի այսպէս հաճոյ եղև առաջի քոյ։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. և ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր. և ո՛չ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի. և ում որդին կամիցի յայտնել։ Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք՝ և ես հանգուցից զձեզ։ Առէ՛ք զլուծ իմ ի ձեզ. և ուսարո՛ւք յինէն՝ զի հեզ եմ. և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց։ Զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի։

Զկնի ասեն. Հոգւոյ"։ Հայր մեր"։

Ի գերեզմանն տանելոյ կարգն է։

Հանգիստ Երկրորդ։ Ո՛րթիւ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Եւ ասէր՝ այսպէս է արքունիւն Աստուծոյ. որպէս զի այր մի արկանիցէ զսերմանիս յերկիր։ Եւ ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցին. և նա ոչ գիտէ։ Թէ երկիրն ինքնին բերէ զպտուղն. նախ զխոտն՝ և ապա զհասկն՝ ապա զցորեան առատ ի հասկին։ Եւ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ՝ զի հասեալ են հունձք։ Եւ ասէր. ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ. կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա։ Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի՝ փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որք են յերկրի։ Եւ յորժամ սերմանիցի, բուսանի, և լինի մեծ քան զամենայն բանջար. և արձակէ ոստս մեծամեծս մինչև բաւական լինիլ ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակիլ։ Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն. որպէս կարող լինէին լսել։ Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա. բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն։

Հոգւոյ"։ Հայր մեր"։

Քահանայաթաղ առնելոյ։

Հանգիստ երկարէ։ Ողբիւ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն, և արանց լինին։ Իսկ որք արժանի լինիցին այնմ աշխարհի հասանիլ՝ և յարութեանն որ ի մեռելոց, ոչ կանայս առնեն. և ոչ արանց լինին։ Քանզի և ոչ մեռանիլ ևս կարեն. զի հաւասար հրեշտակաց են՝ և որդիք Աստուծոյ. քանզի յարութեան որդիք են։ Այլ զի յառնեն մեռեալք, և Մովսէս դուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ զՏեառնէ Աստուծոյ Աբրահամու. և զԱստուծոյ Իսահակայ. և զԱստուծոյ Յակոբայ։ Նա Աստուած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց. զի ամենեքին նմա կենդանիք են։ Պատասխանի ետուն ոմանք ի դպրացն և ասեն. վարդապետ, բարւոք ասացեր։ Նա ոչ ևս ոք իշխեր հարցանել զնա՝ և ոչինչ։

Հոգւոյ՝ Հայր մեր՝։

Քահանայաթաղ առնելոյ։

Հանգիստ Զատկի։ Ողբիւ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ, և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և Որդին նմին նման գործէ։ Քի Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, զի դուքդ զարմանայք։ Քի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ՝ նոյնպէս և Որդի՝ զորս կամի կենդանի առնէ։ Նա ոչ եթէ Հայր դատէ զոք՝ այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ։ Քի ամենեքեան պատուեսցեն զՈրդին՝ որպէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա։

Հոգւոյ՝ Հայր մեր՝։

Ապա ինդանին Շաբաւան հանգուցեան դէ. Ի հանգիստ քո
[illegible]ՏԷր ուր ամենայն սուրբքդ քո հանգչին"։

Ե– յորժամ ծերչենան ի գերեզմանն ասէն. Ա՛երձեցայ ես
իմ դուռըն գերեզմանին՝ և՝ էհաս ինձ ժամ մանակ մտա"։

Եւ եդեալ զդագաղն յափն գերեզմանին, և պար առեալ շուրջանակի,
ասին Կանոնադլուխ դէ.

Իշեանք հալածեցին զի՛ս ի նանիր. ալէ–
լուիա՛յ. ալէլո՛ւիա՛յ. այլ ի բանից քոց երկեաւ
սիրտ իմ. ալէ։ Ցնծացայ ես ի բա՛նս քո որ–
պէս այն որ գտանէ անար բազում. ալէ։
Օ՛մեղս առեջի և անա՛րգեցի. և զօրէնս քո՝
սիրեցի. ալէ։ Նո՛ր ան անգամ յաւուր օրհնե–
ցի՛ց զքեզ. վասն իրաւանց և արդարութեան
քո՛. ալէ։ Խաղաղութիւն բազում է այնոցիկ
որ սիրեն զօրէնս քո. և ո՛չ պոյ ինոսա գայ–
թակղութիւն. ալէ։ Սպասեցի փրկութեան
քում Տէր. և զպատուիրանս քո՝ սիրեցի.
ալէ։ Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո՝
և սիրեաց զնո՛սա յոյժ. ալէ։ Պահեցի՛ց զք–

պատուիրանս և զվկայութի՛ւնս քո. զի ամե–
նայն ճանապարհք իմ առաջի՛ քո են. ալէ։
Ա՛երձեսցի՛ն խընդրուածք իմ առաջի՛ քո Տէր.
ըստ բանի քում իմաստուն արա զի՛ս. ալէ–
լուիա՛յ. ալէլուիա՛յ. ա՛լէլուիա՛յ։ Մտցե՛ն աղօթք
իմ առաջի՛ քո Տէր. և բանիւ քո՛վ փրկեա
զի՛ս. ալէ։ Խընկեսցե՛ն շրթունք իմ զօրհնու–
թի՛ւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդա–
րութի՛ւնս քո՛. ալէ։ Խօսեսցի՛ լեզու իմ զբ–
բա՛նս քո. զի ամենայն պատուիրանք քո ար–
դարութեամբ են. ալէ։ Նղեցի՛ ձեռն քո ի
կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո՝ ընտ–
րեցի՛. ալէ։ Յանկացայ փրկութեա՛ն քում
Տէր. և օրէնք քո խօսք իմ էին. ալէ։ Կեցցէ՛
անձն իմ օրհնեսցէ՛ զքեզ. և իրաւունքք քո՛
օգնեսցեն ինձ. ալէ։ Մոլորեցայ ես որպէս
ոչխար կո՛րուսեալ. խնդրեա զծա՛ռայս քո. զի
զպատուիրանս քո ես ո՛չ մո՛ռացայ. ալէլու՛։
Փառք Հօր և՝ Որդւոյ և՝ Ս՛յժմ և միշտ՝ ալէլու՛։

Սպիտակ–ափն տպագրէ, եւ ևս խաղաղութեան զՏէր աղա՛։

Ե– տահանայն ասէ՝ Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և՛։

Ե֊ասէն Էլ֊ւ Շաբաւն Ա֊ած օչհնո֊ի֊ան, գի։ Ի վերանալ յինէն աւուրց իմոյ Տէր՛՛։ Ամենասուրբ երրորդութեանդ երկրպագեն՛՛։ Մարգարէն ի փորոյ կիսին՛՛։

Քաղաքէ Սալիա֊ած։

Վան ցօղելոյ ի մեզ զցօղն ողորմութեան. և փրկելոյ զմեզ ի հրոյն յաւիտենից. զՏէր աղաչեսցուք։ Վ֊ան երևելոյ մեզ ճառագայթից սուրբ խաչին որ փայլէ յարևելից ի միւսանգամ գալստեանն Տեառն. զՏէր աղա՛։ Վ֊ան ահագին գոչման փողոյն աւետաւոր հրեշտակին՝ որ ժողովէ զմարդիկ ի կեանն յաւիտենից. զՏէր աղա՛։ Վ֊ան լսելոյ սմա ղճայն երանաւէտ փողոյն որ ասէ՝ եկայք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէ֊ք զարքայութիւնն. զՏէր աղա՛՛։ Վ֊ան Հոգւոցն՛՛։ Եւ ևս միա՛՛։ Ո֊անձինս մեր՛՛։ Ողորմեաց՛՛։

Եւ ասէ Վ֊ղօ֊ած։

Տէր Ընտուած մեր և յոյս՝ որ նատիս յաթոռս քրովբէականս և օրհնիս ի դասուց հրեշտակաց և փառաբանիս ի մարդկանէ. և ծաւալեալ է անուն քո ընդ ամենայն տիեզերս, և ընդունիս զթութեամբ զաղաչանս մարդկան։ Եւ այժմ մարդասիրութեամբ քով թող

զյանցանս տուր զծածուկ և զյայտնի. զի ոչ ոք է առանց մեղաց ի վերայ երկրի. այլ դու որ մեղաց սրբիչ ես և քաւիչ, թող զմեղս և քաւեա զանօրէնութիւնս տուր։ Եւ վասն զի կացուցեր զսա քահանայ և հովիւ ժողովրդեան քում, ուստի՝ դորոյ զմեզս ի ժողովրդենէ քումմէ խնդրուածօք խնդրեալ իցէ տուր ի քէն ի ձեռն սուրբ պատարագին զենման Որդւոյ քոյ ի վերայ սրբոյ սեղանոյն առ ի քաւել, հաշտեա Տէր և թող նոցա՝ որ անկարօտ ես յամենայնի։ Եւ զանուն տուր գրեա ի գլուխ կենաց. և զհոգի տուր ընկալ ի խորանս սրբոց քոց. զի և մեք գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ՛՛։

Խաղաղո֊ի֊ն աշխեցո֊ն։

Ա֊ած֊ած եւկրպագեսցո֊։

Տէր Ընտուած լուսաւորիչ հոգւոց և պահապան մարմնոց. որ և զմարմինս արանց արդարոց փառաւորեցեր՝ որք զքեզ բարեպաշտութեամբ փառաւորեցին. ցուցանելով ամենեցուն, եթէ ոչ միայն յոգիս, այլ և ի մարմինս արդարոց յայտնին զօրութիւնք, առ ի բարեպաշտիլ առ քեզ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ մարդասէր Տէր և բարերար. ընկալ զաղաչանս ժողովրդեան քոյ. և դասաւորեա ի

զասս սրբոց քոց առաքելոց՝ մարգարէից և վարդապետաց։ Եւ զմեզ զամենեսեան զհատ առացեալքս ի քեզ արժանաւորեա փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւի՛ր"։

Ցեւտ այլորիկ ակառնին ասել Սաղմոս ողբաձայն, ՃԺԴ։

Դարձ՛ անձն իմ ի հանգի՛ստ քո՛. զի Տէր կատեաց ընդքե՛զ։ Սիրեցի՛ զե լսի՛ցէ՛ Տէր ըղձից աղօթից իմոց. զի խոնարհեցո՛յց զունկն իւր"։

(ղէչ գոռնն չմն ասա։

Ընթերցուած ի Հոլորդ Թագաւորութեանց։

Եւ Եղիսէէ հիւանդացաւ հիւանդութիւն որով և մեռաւ իսկ. և էջ առ նա Յովաս արքայ Իսրայէլի. և ելաց ի վերայ երեսաց նորա՝ և ասէ, Հայր՝ հայր. կառքդ Իսրայէլի և հեծեալք նորա։ Ասէ ցնա Եղիսէէ. առ դու զաղեղն քո՝ և զնետ քո. և էառ զաղեղնն և զնետս։ Եւ ասէ ցարքայն Իսրայէլի. մնա ընդ աղեղն ձեռօք քովք. և եմուտ ընդ աղեղնն ձեռօք իւրովք. և եդ Եղիսէէ զձեռն իւր ի վերայ ձեռաց արքային։ Եւ ասէ. բա՛ց զպատուհանդ՝ որ է ընդ արեւելս. և եբաց. և ասէ Եղիսէէ. ձգեա՛.

և ձգեաց. և ասէ՝ նետ փրկութեան Տեառն. և նետ փրկութեան ընդդէմ Ասորւոց. և հարցես զԱսորիս յափիկ մինչև իսպառ։ Եւ ասէ ցնա Եղիսէէ. առ դու քեզ նետս. և էառ. և ասէ ցարքային Իսրայէլի. ձգեա՛՝ և հար զձեռն. և ձգեաց. և էհար արքայ երիցս՝ և եկաց։ Եւ տրամեցաւ ի վերայ նորա այրն Աստուծոյ. և ասէ՝ եթէ հարեալ էիր հնդիցս կամ վեցիցս, յայնժամ հարկանէիրզԱսորիս մինչև իսպառ. և արդ երիցս հարցես զԱսորիս։ Եւ մեռաւ Եղիսէէ՝ և թաղեցին զնա. և մեկնազէնքն Մովաբու ելին յերկիրն ի գալ տարւոյն։ Եւ եղև ի թաղել նոցա զայր մի. և ահա տեսին զմեկնազէնան՝ և ընկեցին զայրն ի գերեզմանն Եղիսէի. և գնաց՝ և մերձեցաւ յոսկերան Եղիսէի. և կենդանացաւ՝ և կանգնեցաւ ի վերայ ոտից իւրոց։

Ընթերցուած Յաղագս։

Զի Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութիւն. և ի պատկեր իւրոյ բարերարութեան արար զնա։ Իսկ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ, և փորձեն զնա՝ որք նորա վիճակին սակի են։ Բայց ոչիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են. և ո՛չ մերձեսցի ի նոսա մահ։ Թուեցան յաչս անզգամաց թէ

մեռան. և համարեցան չարչարանք եկք նոցա. և գնան ի մէնջ բեկումն. բայց նոքա են ի խաղաղութեան։ Օ՜ի թէպէտ յաչս մարդկան տանջեցան, այլ յոյս նոցա լի է անմահութեամբ։ Եւ սակաւիկ ինչ խրատեալք գտցեն զմեծ բարութիւնս. զի Աստուած փորձեաց զնոսա և եգիտ իւր արժանիս։ Իբրև ոսկի ի բովս քննեաց զնոսա. և որպէս զող ջահէզս զոհի ընկալաւ զնոսա. և ի ժամանակի այցելութեան իւրեանց պայծառասցին։

Ընթերցուած յետոյեայ մարգարէ է։

Սայսպէս ասէ Տէր. և կատարեսցին աւուրք սգոյ քոյ։ Եւ ժողովուրդ քո ամենևին արդար. և յաւիտեանս ժառանգեսցեն զերկիր. պահել զնորատունկս գործոց ձեռաց իւրեանց ի փառս։ Սակաւուն հազարաւոր եղեցի՝ և կրտսերն յազգ մեծ. զի ես Տէր ընդ ժամանակս ժամանակաց ժողովեցից զնոսա։ Հոգի Տեառն ի վերայ իմ. վասն որոյ և էօծ իակ զես. աւետարանել աղքատաց առաքեաց զես. բժշկել զբեկեալս սրտիւք. քարոզել գերեաց զթողութիւն՝ և կուրաց տեսանել։ Կոչել առ Տեառն ընդունելի. և օր հատուցման Աստուծոյ մերոյ. մխիթարել զամենայն սգաւորս։ Տալ սգաւորաց սիօնի փառս. փոխանակ մոխրոյն

օծումն ուրախութեան. և սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վհատութեան. և կոչեսցին նոքա ազգք արդարութեան՝ տունկ Տեառն ի փառս։ Եւ շինեսցեն զաւերակսն յաւիտենից. և գյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն. և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս յազգաց մինչև յազգս։ Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց. և այլազգիք մաճակալք և այգեպործք քո։ Եայց դուք քահանայք Տեառն կոչիջիք՝ և պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանիջիք. զզօրութիւնս ազգաց կերիջիք. և մեծութեամբ նոցա պարծեսցիք։ Փոխանակ ամօթոյն ձերոյ կրկին ուրախութիւն. և փոխանակ անարգանաց ձերոց ցնծութիւն. և ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն. և ուրախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա։

Ընթերցուած յԵրեմիայ մարգարէ է։

Յիշեցի յաղքատութենէ իմմէ. և ի հալածանաց իմոց՝ դառնութիւն և բարկութիւն։ Յուշ եղեն միանգամայն. ձանձրացաւ յիս անձն իմ։ Օ՜այս ինչ կարպեցի ի սրտի իմում. վասն այնորիկ և համբերեցից նմա։ Ողորմութիւնք Տեառն անապառք են. և ո՛չ նուազին գթութիւնք նորա։ Ի նորոգումն առաւօտու

բազմանայ ճշմարտութիւն քո Տէր։ Ասաց անձն իմ, բա՛ բաժին իմ է նա. վասն այնորիկ ակն կալայց նմա։ Բարերար է Աստուած ի վերայ համբերողաց իւրոց. և անձն՝ որ խնդրէ զնա։ Բարի է՝ որ համբերէ նմա ճշմարտութեամբ. և հանդչի նա ի փրկութեան Տեառն։ Բարի է մարդոյ՝ որ առնու զլուծ խոնարհութեան ի մանկութենէ իւրմէ։ Նստցի միայն լուռ ի տան իւրում. զի անձամբ իւրով էառ յանձն զլուծն քո։ Տացէ հողոյ զբերան իւր. վասն զի կայ յոյս։ Կարզացի զանուն քո Տէր ի գրոյ տառապանաց. և դու լուար ձայնի իմում։ Մի՛ թագուցաներ դունկն քո ի խնդրուածոց իմոց. այլ ընդարձակեա՛ ինձ, փրկեա՛ զիս։ Դու յօգնել ինձ մերձեցար. և ասացեր, բա՛մ՝ յորում աւուր կարզացես առ՛ի մի երկիցես։ Դատեցեր Տէր զդատաստան անձին իմոյ փրկեցեր Տէր զզրկեալն։ Տեսեր Տէր զխռովութիւնս իմ։ դատեցեր Տէր զդատաստանս իմ։ Տեսեր զամենայն իրաւունս իմ. Հայեցար յամենայն խորհուրդս իմ։

Պօղոսի առաքելոյն ի կարնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Արդ՝ զխորհուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան ննջեցուք, այլ ոչ ամենեքեան նորոգի-

ցուք։ Յանկարծակի յական թօթափել ի փող յետին. քանզի փող հարկանի. և մեռեալք յարիցեն առանց ապականութեան. և մեք նորոգիցուք։ Օ՛ի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն. և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն։ Այլ յորժամ մահկանացուս այս՝ զգեցցի զանմահութիւն, և ապականացուս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն՝ որ գրեցաւ. եթէ ընկլաւ մահ ի յաղթութիւն։ Ո՞ւր է մահ յաղթութիւն քո. ո՞ր դժոխք խայթոց քո։ Խայթոց մահու մեղք են, և զօրութիւն մեղաց օրէնք։ Այլ շնորհք Աստուծոյ՝ որ եւս մեզ զյաղթութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս ամէն։

Ալէլ-ւյա։ Սաղմոս Հ. Ի քեզ Տէր յուսացայ մի ամա՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Յայնժամ պատասխանի եւս Պետրոս և ասէ ցնա. ահաւասիկ մեք թողաք զամենայն և եկաք զկնի քոյ. արդ զի՞նչ լինիցի մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս, ամէն ասեմ ձեզ. զի դուք՝ որք եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և դուք յերկոտասան աթոռ դատել

ղերկոտասան աղգս Իսրայէլի։ Եւ ամենայն որ ոք եթող զտուն, կամ զեղբարս՝ կամ զքոյր՝ կամ զՀայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ՝ և զկեանն յաւիտենական ժառանգեսցէ։ Բազումք եղիցին առաջինք յետինք՝ և յետինք առաջինք։

Աղխ-ափն ֆրդղէ, վասն գոանելոյ մեղ՛։

Եւ ասէ զԱղօթս։

Փառք քեզ Թագաւոր յաւիտենական Ընտուած՝ և արարող բոլորից գոյութեանց, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. քեզ խոնարհեցուցանեմք զծունր սրտից մերոց ամենայն միաբան Հաւատացեալքս. և աղաչեմք զանբաւ ողորմութիւն քո։ Հանգո՛ զՀոգի ծառայիս քոյ յարքայութեան քում, ի թիւ այնոցիկ որք կարգեցան յաջակողմեան միածնիդ քոյ. յորժամ կոչես զսա յերկնից ի պատրաստ բնակութենէ քումմէ ի դասուսան յաւուրն յետնում, ուր գեաք հրեղէնք և հեղեղք բոցեղէնք յորդեռանդ բարկութեամբ զամենայն երկիր հրդեհեալ կիզուն։ Յայնմ աւուր բարեգո՛ Տէր՝ գիմա՛ ի գինս արեան միածնի քոյ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի,

որ նորոգեաց զտիեզերս համաւոր խոնարհութեամբ իւրով։ Ընդ որում և որով գոհութիւն և օրհնութիւն վերընծայի քեզ Հօր և կենդանատու սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ՛։

Խաղաղ-ին աղնէցո-ն

Ասպո-ծոյ երկնապետս-ս։

Ասուած ճշմարտութեան և Տէր ողորմութեան, Հայեաց ի պատրաստ բնակութենէ քումմէ ի պաղատանս ժողովրդեան քոյ՝ զոր մատուցանեմք Հաւատով վասն ծառայիս քոյ (այս անուն) քահանայի։ Օ՛ի դու կացուցեր զմարդիկ Հողեղէն սպասաւոր անտեսանելի փառաց էութեան քոյ։ Դու կոչեցեր զնախամարգարէն Մովսէս ի մորենւոյն ձայնիւդ քով, և առաքեցեր զնա փրկիչ ժողովրդեան քոյ։ Դու ընտրեցեր զՀարօն և զորդիս նորա ի պաշտօն սրբութեան, և փառաւորեցեր զնա մեծարեալ օծմամբ և վակասակիր պսակօք. քոյին տեսչութեամբ տրամայեցեր նմա ելանել ի լեառն, և առանձնացեր զՀոգի նորա առ քեզ. և ընդ ամրածածուկ աջովդ քով ամփոփեցեր զմարմին նորա։ Եւ ահա այժմ ծառայս քո և առաջնորդ Հօտի քոյ զոր ընտրեցեր ի գլուխ ժողովրդեան՝ կատարեաց զաստարէզ նախաշաւիղ օրինադրութեան քոյ. և ճեպեաց Հոգի

սորա ըստ հրամանի կոչման քոյ՝ հանգուցեալ ի տաժանմանց մարմնական աղէտից։ Որդ աղաչեմք զքեզ Տէր, ընկալ զսա յանապրտում ուրախութիւնդ. և զուարճացո՛ ըզհոգի սորա յանանց խոստմանց քոց վայելս։ Յիշեա՛ Տէր զուխտ և զժառանգութիւն քո, զոր փրկեցեր արեամբ քով։ Օրհնեա՛ Տէր և և զբնակութիւն սորա և զոսկերս, և պահպանական աջովդ վերակացու լեր հոգւոյ և մարմնոյ սորա. զի դու՛ ես վերակացու և ժողովարան քոյոց կամարարաց՝ և շեմարան անկողոպտելի, որ անփոփես նախագահութեամբ զվաստակաւորս քո. և հանգուցանես ի գրկանըս մշանջենապուարճ փափկութեանդ՝ որ մնայ և պահի յուսացելոց ի Քրիստոս Յիսուս ի Տէրդ մեր։ Եւ զմեզ արժանաւորս սրա գնալ ի ճանապարհս քո, և ի դէպ ժամանակի ընդ սուրբս քո հասանիլ ի խոստացեալ հանգիստն, և ընդ նոսին գոհացողական երգով փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս՛՛։

Շաթլան. Աղբերացն անապական որ յեա՛՛։ Մէկ պատ նէգ։ Հոգւոյ՛՛։ Հայր մեր՛՛։

Ապա առնէ Սաղմոս ճա. Աւուրք իմ որպէս հովանի անցին. և ես որպէս խոտ ցամաքեցայ։ փախ. Տէր լուր աղօթից իմոց աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի դարձուցա՛՛։

Ընթերցուած Յովհաննէս մարգարէէ։

Այսպէս ասէ Տէր։ Սերմանեցէ՛ք ձեզ յարդարութեան. և հնձեցէ՛ք զպտուղ կենաց, լուսաւոր արարէ՛ք ձեզ զլոյս գիտութեան. խնդրեցէ՛ք զՏէր՝ մինչև եկեսցէ առ ձեզ արդիւն արդարութեան։

Մահ Յովհաննէս մարգարէի։

Ովսէ էր ի Յեզրաամլեթայ. ի ցեղէն Իսաքարայ. և շատ մարգարէացաւ ի վերայ Իսրայէլի։ Մնեալ խաղաղութեամբ և թաղեցաւ յերկրի իւրում փառաւորապէս։ Եւ եա՛ նշան՝ թէ եկեսցէ Տէր յերկիր՝ և ընդ մարդկան շրջեսցի. և կաղնին որ ի Սելով՝ բաժանեսցի յերկուասան մասն. և եղեցի երկուասան կաղնի. և զՏէտ երթիցեն և հնազանդեսցին երեւելոյն Աստուծոյ. և նուաւ կեցցէ ամենայն մարդ։

Ընթերցուած Յովհաննէս մարգարէէ։

Այսպէս ասէ Տէր։ Ասեցին ի քրմունս գյանապիմանիչս. և՝ զբանս սուրբս պիղծս արարին։

Վ՚ասն այնորիկ որ իմաստունն է՝ ի ժամանակին յայնմիկ լռեցէ՝ զի ժամանակն չար է։ Խնդրեցէք զբարի և մի՛ զչար՝ զի կեցջիք՝ և եղիցի ընդ ձեզ Տէր Ամենակալ։

Մահ Ամոլայ Մարգարէի։

Ամուս էր ի Թեկուայ. և Ամասիա արքայ բազում անգամ կոչկոճէր դնաս։ Եւ յետոյ ապան գնաս որդի նորա, բակեղը ջախջախեալ գծամեւեան։ Որ ոգւով եկն յերկիր իւր. և յետ սակաւ աւուրց մեռաւ և թաղեցաւ անդ։

Ընթերցուած ի Միքիայ մարգարէէ։

Այլ ես Տեառն ակն կալայց. սպասեցից Աստուծոյ փրկչի իմոյ. և լսիցէ ինձ Տէր Աստուած իմ։ Մի ոան հար լինիր ինձ թշնամի իմ՝ զի գլորեցայ. միւսանգամ կանգնեցայց. զի եթէ նստայց ի խաւարի՝ Տէր է իմ լոյս։ Բարկութեան Տեառն համբերեցից՝ զի մեղայ նմա. մինչև արդարացուսցէ զդատաստան իմ. և արասցէ ինձ իրաւունս. և հանցէ զիս ի լոյս. և տեսից զարդարութիւն նորա։

Մահ Միքիայ Մարգարէի։

Միքիաս էր ի Մոսորոլեթայ, ի ցեղէն Եփրեմի։ Եւ բազում ինչ արարեալ նորա ընդ

Ելքայաք. և յետոյ ապանաւ ի Յովրամայ որդւոյ նորա, ընկեցիկ եղեալ ի վախէ. վասն զի յանդիմանեալ էր գնա ի վերայ ամբարշտութեան Հօր իւրոյ. և թաղեցաւ յերկրի իւրում, մօտ ի շիրիմս Հնաակիմայ։

Ընթերցուած Յովելեայ մարգարէէ։

Եւ արդ ասէ Տէր Աստուած ձեր. դարձարուք առ իս լալով՝ և կոծով։ Պատառեցէք զսիրտս ձեր՝ և մի՛ զհանդերձս. և դարձարուք առ Տէր Աստուած ձեր. զի ողորմած՝ և գթած է, երկայնամիտ՝ և բազումողորմ. որ զղջանայ ի վերայ չարեաց։

Մահ Յովելեայ մարգարէի։

Յովէլ էր յազգէն Ռուբէնի. յագարակէն Ռեթաքուրայ։ Մարգարէացաւ վասն սովու՝ և նուազութեան զոհից. և վասն չարչարանաց մարգարէին արդարոյ. և թէ նովաւ նորոգին ամենայն արարածք ի փրկութիւն։ Մեռաւ խաղաղութեամբ, և թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապէս։

Ընթերցուած յԱբդիու մարգարէ է։

Այսպէս ասէ Տէր։ Եւ եղեն ապրեալք ի լեռնէն սիօնի՝ առնուլ զվէժ ի լեռնէն Եսաւայ. և եղիցի Տեառն արքայութիւն։

Մահ Աբդիու մարգարէի։

Աբդիու էր յերկրէն Սիկիմայ, յազգարակէն Ռեթքարիմայ։ Սա էր աշակերտ Եղեայի, բազում՝ վիշտս կրեաց վասն նորա զի ապրեցուցէ զնա։ Սա էր երրորդ յիսնապետն՝ յոր խըստայեաց Եղեա, և էջ առ Ոքոզիա։ Եւ յետոյ թողեալ զպատասխանութիւն արքային՝ մարգարէանայր։ Մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ առ հարս իւր։

Ընթերցուած և մահ Յովնանու մարգարէի։

Յովնան էր յերկրէն Կարիաթարիմայ, որ է մերձ Յազովա՝ ի քաղաքն այլազգեաց ի ծովեզերին։ Եւ ընկեցիկ եղեալ ի կիտէն արուսաքըս՝ չոգաւ ի Նինուէ։ Եւ անտի դարձեալ՝ ոչ ճնաց յերկրի իւրում. այլ առեալ զմայր իւր՝ չոգաւ պանդխտեցաւ ի Սուր, ի գաւառին այլազգեաց ընդ Հեթանոս։ Վասնզի ասէր՝ թէ այսպէս բարւոյ գնախատինս իմ. զի ստեղծ

ի մարգարէանալն իմում վասն Նինուէի մեծի քաղաքին։ Յայնժամ յանդիմանէր Եղեա զՆ.քայաք՝ և զկին նորա զՆզաբէլ. և կոչեաց սով ի վերայ երկրի։ Ա՛սան որոյ փախուցեալ եկն ի Սարեփթա և եպիտ անդ զայրին Հանդերձ որդւովն, և բնակեցաւ անդ Եղեա քանզի ոչ կամէր լինիլ ընդ անթլփատսն։ Եւ օրհնեաց զնոսա վասն օտարընկալութեանն. քանզի յառաջագոյն ճանաչէր զնոսա ի վաղուց հետէ։ Եւ իբրև մեռաւ Յովնան, յարոյց զնա Աստուած ի ձեռն Եղեայի. և եցոյց նմա, թէ ոչ ոք կարէ փախչիլ ՍԱստուծոյ։ Եւ իբրև յարեաւ Յովնան յետ սովոյն, եկն յերկիրն Յուդայ. և մեռաւ մայր նորա ի ճանապարհին, և թաղեաց զնա մօտ ի կաղնին Դեբօրայ։ Եւ բնակեցաւ Յովնան յերկրին Սարարայ, և մեռաւ անդ՝ և թաղեցաւ յերկրին Կենաղայ դատաւորին, յաւուրս անիշխանութեանն։ Եւ ետ նշան Երուսաղէմի, զի յորժամ տեսցեն զքար զի գոչեսցէ, և զբոտոտ զի ի փայտէ աղաղակեսցէ, մերձ լինիլ փրկութեան։ Յայնժամ տեսցեն զԵրուսաղէմ տապալեալ ի հիմանց. և մոցեն ի նա Հեթանոսք յերկրպագութիւն Տեառն. և առեալ զքարինս նորա դիցեն ի կողմն արևելից. և անդ եղիցի երկրպագութիւն օձելոյն, վասն պղծելոյն Երուսաղէմի և աւերածոյն ի գաղանաց՝ և յամենայն գարշե-

լեաց. և յայնժամ եկեսցէ կատարած ամենայն երկրի։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՆԱՀՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷ Է։

Քաղցր է Տէր՝ որոց ոպասեն նմա յաւուր նեղութեան. և ճանաչէ զերկիւղածս իւր։ Եւ հեղեղաւ ճանապարհաց արասցէ վախճան յաթուցելոց ի վերայ. և զթշնամիս նորա խաւար հալածեսցէ։ Օ՜ինչ խորհիք զՏեառնէ. կատարած ինքն արասցէ. և ոչ խնդրեսցէ կրկին զնոյն վրէժխնդրութիւն ի նեղութեան։

ՄԱՀ ՆԱՀՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ։

Նաւում էր Ելղկասայ՝ որ է յայնկոյս Յորդանանու ի Ռեթաբբայ, ի ցեղէն Շմաւօնի։ Սա հանդերձ Յօնանու եւս նշան Նինուէի. եթէ ի քաղցր ջուր, և ի հրոյ գեհենականէ կորնչէ. որպէս եղեն իսկ։ Օ՜վ ծովային որ շուրջ զնովաւն էր՝ հեղեղեաց և կորոյս զնա. և հուր յանապատէ եկեալ՝ զբարձրաւանդակս նոցա այրեաց։ Սեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ յապարակի իւրում փառաւորապէս։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՄԲԱԿՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷ Է։

Մինչև յերբ Տէր աղաղակիցեմ, և ոչ լսիցես. գոչեցեմ առ քեզ զրկեալ՝ և ոչ փրկիցես։

ցես։ Ընդէր ցուցեր ինձ աշխատութիւնս և վաստակս. տեսանել զթշուառութիւն և զամբարշտութիւն։

ՄԱՀ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ։

Ամբակում էր յազգէն Շմաւօնի, յագարակէն Բեսուքարայ։ Սա եւս յառաջագոյն զգերութիւնն. և վասն աւերածոյն Երուսաղէմի սգացաւ յոյժ։ Եւ յորժամ եկն Նաբուզոդոնոսոր Բերուսաղէմ, փախեաւ Յուստրակինայ՝ և եղև պանդուխտ յերկիրն Իսմայէլի։ Եւ իբրև դարձան Քաղդեացիքն ի տեղիս իւրեանց, և մնացորդք Հրէից որք էին Երուսաղէմ, իջին Եգիպտոս, յայնժամ դարձեալ Ամբակում եկն յերկիր իւր՝ և պաշտէր զՏնձողս ազարակի իւրոյ։ Իբրև էառ զխորտիկն՝ մարգարէացաւ ընտանեաց իւրոց և ասաց, երթամ ես յերկիր Հեռաստան, և վաղվաղակի դառնամ և գամ. և եթէ յամեցից՝ դուք տարբէք ճաշ Տնձողացն։ Եւ երթեալ նորա ի Բաբիլոն ի ձեռն հրեշտակին որ առաջնորդեաց նմա, տարաւ զճաշն Դանիէլի։ Դարձեալ չդտաւ առ Տնձողն՝ և տարաւ նոցա այլ խորտիկս. ոչ յամեալ ինչ զսովորական ժամն։ Եւ իմացաւ թէ վաղվաղակի դարձցի ժողովուրդն ի Բաբիլոնէ. և յետ երկուց ամաց դարձան։

Եւ ետ Ընթակում նշան որոց ի Հրէաստանի, եթէ ի կատարածի մարգարէիցն Որպի Աստուծոյ յարիցէ՝ և ուսուսցէ ի տաճարին. և որք հաւատան ի նա՝ տեսցեն զլոյս. և որք ոչ լսեն նմա՝ եղիցին ի խաւարի։ Եւ վասն վախճանի տաճարին յառաջագոյն ասաց՝ թէ յարևմտից աղբաց աւերեսցի։ Յայնժամ վարագոյր տաճարին ասէ ի մանր ծուէնս պատառեսցի. և ելեալ Հոգւոյն սրբոյ ի տաճարէն, և աղխաւեղագէսք երկուց սեանցն բարձցին և դիցին յանապատն, ուր ի սկզբանէ ցուցաւ խորանն վըկայութեան։ Եւ նոքօք ծանիցի Տէր, և լուսաւորեսցէ զիախուցեալսն յօձէն. և պատրաստարեսցէ զնոսա յարդարութիւն յաւիտենից։ Ա՛եռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ յապարակի իւրում փառաւորապէս։

Ընթերցուած ի Սոփոնիայ մարգարէ է։

Երկերուք յերեսաց Տեառն Աստուծոյ. զի մերձ է օր Տեառն. զի պատրաստեաց Տէր զզոհ իւր. և հրաւիրեաց զկոչնականսն իւր։ Եւ եղեցի յաւուր զոհի Տեառն՝ խնդրեցից զվրէժ յիշխանաց՝ և ի տանէ թագաւորին. և յամենայնէ որք զգեցեալք են զհանդերձս օտարբրս. ասէ Տէր ամենակալ։

Մահ Սոփոնիայ մարգարէի։

Սոփոնիաս է՛ր ի ցեղէն Հ՚մաւծնի, յազգակէն Մարաթայ։ Սա մարգարէացաւ վասն քաղաքին Երուսաղէմի. և վասն փրկութեան մօրն Հեթանոսաց. և վասն ամօթոյ ամբարշտաց, և դատաւորին ամենայն չնչոյ՝ որդւոյն Աստուծոյ։ Ա՛եռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ յապարակի իւրում փառաւորապէս։

Ընթերցուած յԱնգեայ մարգարէ է։

Այսպէս ասէ Տէր ամենակալ. և ի տեղւոջդ այդմիկ տացի խաղաղութիւն՝ ասէ Տէր ամենակալ. և խաղաղութիւն ոչ ոյ ի փրկութիւն ամենայնի՝ որ գործիցէ յարուցանել զտաճարդ զայդ։

Մահ Անգեայ մարգարէի։

Անգէաս մարգարէ է՛ր ի ցեղէն Ղևեայ ի քահանայից անտի. և ծնաւ ի Բաբիլոն։ Եւ մինչդեռ մանուկն էր՝ եկն ի Բաբիլոնէ Երուսաղէմ. և յայնմանէ մարգարէացաւ վասն դարձի ժողովրդեանն. և եռեք զշինուածս տաճարին։ Ա՛եռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ

յերուսաղէմ ի գերեզմանս քահանայիցն փառաւորապէս. քանզի և նա էր յազգէ քահանայիցն։

ընթերցուած ի Զաքարիայ մարգարէ է։

Այսպէս ասէ Տէր ամենակալ. դատաստան արդար դատեցարո՛ւք. և ողորմութիւն և ըզգութիւն արարէք իւրաքանչիւր եղբօր իւրոյ։ Այրին՝ և զորբն՝ և պանդուխտն՝ և զրկանն մի՛ յաղթահարէք. և ոխս չարեաց ընկերի իւր մի՛ ոք կալցի ի սիրտս իւր. ասէ Տէր ամենակալ։

Մահ Զաքարիայ մարգարէին։

Զաքարիաս էր յազգէն Ղեւեայ. և ծնաւ ի Կարգղի յերկրին Բաղդէացւոց։ Ետ մարգարէացաւ վասն ժողովրդեանն. և ետ նշան ի հաստատութիւն բանիցն։ Սա ասաց զՅովսեղեկեայ՝ թէ ծնցի որդի, և յերուսաղէմ քահանայապետի անարատութեամբ՝ յօրինակ ճշմարիտ քահանայապետին։ Սա և զԱաղաթիէլ օրհնեաց, և անուանեաց Օբադիա։ Եւ առ Միւռոսիւ ետ նշան ի յաղթութիւն. և վասն սպասաւորութեան նորա յառաջագոյն ասաց՝ զոր առնելոց էր յերուսաղէմ. և օրհնեաց զնա յոյժ։ Եւ զհանդերձեալն յերուսաղէմ մարգարէացաւ, վասն կատարածի նորին. և սկզբան հեթանոսաց. և վասն դատարկութեան քահանայից՝ և մարգարէից և շաբաթուց։ Եւ վասն կրկին դատաստանին նշանակեաց։ Մեռաւ խաղաղութեամբ ի բարւոք ծերութեանն. և թաղեցաւ մերձ յանդէ։

ընթերցուած ի Մաղաքիայ մարգարէ է։

Այսպէս ասէ Տէր ամենակալ. Որդի փառաւոր առնէ զհայր՝ և ծառայ երկնչի ի Տեառնէ իւրմէ. իսկ արդ եթէ հայր եմ, ո՞ր են փառքն իմ. և եթէ Տէր եմ, ո՞ր է պատիւն իմ, ասէ Տէր ամենակալ։

Մահ Մաղաքիայ մարգարէի։

Մաղաքիաս յետ դարձի գերութեանն ծնաւ ի Սափիրայ՝ յազգէն Ղեւեայ։ Եւ մինչդեռ մանուկն էր՝ բարի վարս եցոյց յանձին. և ամենայն ժողովուրդն պատուէր զնա իբրև զանապատ և զՀեզ. և կոչեցին զնա Մաղաքիաս՝ որ թարգմանի հրեշտակ. քանզի էր գեղեցիկ տեսլեամբ։ Եւ որպէս ինքն ասաց ի մարգարէանալն իւրում, ի նմին աւուր երևեալ հրեշտակ Տեառն՝ երկրորդեր զբանս նորա։ Եւ զհրեշտակն ոչ ոք տեսանէր յանարժանիցն, այլ

զձայնն միայն լսէին. որ եղև յաւուրս անիշխանութեանն. որպէս և գրեալ է ի սփրափտոմին, այսինքն է ի դատաւորացն։ Եւ մինչդեռ մանուկն էր՝ յաւելաւ առ Հարս իւր, և թաղեցաւ յագարակի իւրում։

Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Ապա եթէ Քրիստոս քարոզի եթէ ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ի ձէնջ՝ եթէ յարութիւն մեռելոց չիք։ Եթէ յարութիւն մեռելոց չիք, ապա և Քրիստոս չէ յարուցեալ։ Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր. ընդունայն են և Հաւատքն ձեր։ Եւ գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ. զի վկայեցաք զԱստուծոյ թէ յարոյց զՔրիստոս. զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ մեռեալք ո՛չ յառնեն։ Իսկ եթէ մեռեալք ո՛չ յառնեն՝ ապա և Քրիստոս չէ յարուցեալ։ Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ. ընդունայն են Հաւատքն ձեր. և տակաւին ի նմին մեղս կայէք։ Իսկ արդ՝ որք ննջեցինն ի Քրիստոս, կորեա՞ն արդեօք։ Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելիք եմք քան զամենայն մարդիկք։ Այլ արդ՝ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց։ Վասնզի մարդով եղև մահ,

և մարդով յարութիւն մեռելոց։ Որպէս Ադամն ամենեքեան մեռանին. նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցին։ Իւրաքանչիւր յիւրում կարգի, նախ Քրիստոս, և ապա քրիստոսեանք ի գալստեան նորա. և ապա կատարած։

Ալէլո-ւյա։ Քահանայք քո զգեցցին զարդա՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ՝ և հաւատայ այնմ, որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս. և ի դատաստան ո՛չ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է. յորժամ մեռեալք լուիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ. և որք լսիցեն, կեցցեն։ Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում. նոյնպէս ետ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում. և իշխանութիւն ետ նմա դատաստան առնել։ Եւ զի Որդի մարդոյ է, ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա. և եկեսցեն արտաքս։ Որոց բարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց. և որոց զչար արարեալ՝

ի յարութիւն դատաստանաց։ Ո՛չ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ· այլ որպէս լսեմ, դատեմ. և դատաստան իմ արդար է· զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

Եւ Սարկաւագն քարոզէ։

Վասն հրաժարելոյ անձանց ննջելոց ի Քրիստոս· զՏէր աղա՛։ Վասն որք լքին զպականացու կենցաղս և հետևեցան ի վիճակս արդարոց· զՏէր աղաչեա՛։ Վասն առաջնորդելոյ սմա յանստուեր օթևանս զոր պատրաստեաց ի տան Հօր իւրոյ որդին միածին· զՏէր աղա՛։ Վասն արժանի լինելոյ սմա լսել զձայն կենարար փողոյն և յարիշտակիլ ամպօք ընդառաջ Տեառն յօդս· զՏէր աղաչեսցուք։ Վասն դասելոյ սմա յաջակողմեան դասուն ի դաս առաքելոց և մարգարէից· զՏէր աղա՛։ Վասն հոգւոցն՛։ Եւ ևս միաբան՛։ Ողորմեաց մեզ՛։

Եւ քահանայն ասէ զՎերծիս։

Տէր երկնի և երկրի, որ զամենայն արարածս յոչընչէ արարեր· առեր հոգ յամենասուրբ ձեռս քո, արարեր զմարդն՝ և անուանեցեր զանուն նորա Ադամ· ըստ պատկերի քում և

ըստ նմանութեան արարեր զնա։ Եւ վասն յանցանաց նորա՝ հաներ զնա ի դրախտէն փափկութեան, ասելով՝ հող էիր և ի հող դարձցիս։ Եւ արդ՝ ահաւասիկ ծառայս քո դարձաւ ի հող ըստ հրամանի քում։ Վասն որոյ աղաչեմք զքեզ Տէ՛ր բարերար, առաքեա զՀոգիդ քո սուրբ ի հոգս այս և ի տապանս. և օրհնեա զսա ի բնակութիւն ծառայիս քոյ· զի մտանելով ի սա ոսկերաց սորա, ընկալցի զբարւոք հանգիստն յառաջ բարերարութենէդ քումմէ։ Եւ հանգո՛ զհոգի սորա յօթևանս սրբոց քոց առաքելոց և մարգարէից։ Եւ թո՛ղ սմա զյանցանս իւր զոր մեղաւ առաջի քոյ գիտութեամբ և անգիտութեամբ, զգործոց, զբանից և զմտածութեանց, զի հաւատաց յամենասուրբ Երրորդութիւնդ, ի ձեռն մկրտին Որդւոյ քոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխանութիւն և պա՛։

Շարական. Զհանգուրժեալ բնութեամբ բա՛։ Ա՛ել պո՛ն երփ։ Հոգւոյ՛։ Վասն հանգու՛։ Քրիստոս որդի՛։

Եւ՝ փետրաճերպեն զբին ամենայն հոգեառաջին, և ապա ասէն Հայր մեր՛։

Ցեւտ դնելոյն ի գերեզմանն։

Ասպա առեն Շապուհան Հանգոպեան՝ բա՛. Որ կոչեցեր առ քեզ Տէր զոհերաս ամե՛՝։ Եղե՛ւ պոռն։

Եւ ապա առեալ Քահանային երիցս անգամ զՀոզ ի յափն, Խաչա-կնքէ ասելով՝

Օրհնեա՛ Տէր ողորմութեամբ քով զՀոզս ծառայիս քոյ. և յիշեա՛ զսա, զի Հոզ էր՝ և ըստ հրամանի քում ի Հող դարձաւ։

Արկանէ զՀոզն ի գերեզմանն խաչանման։ Եւ ապա իջուցանեն ըզնընջեցեալն ի գերեզմանն։ Եւ ասեն Սաղմոս.

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի։ Մինչե՛ ցայն պոռնն ընէ՝ Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ՛՝։ և՛ ապա ասէն Մաղնան։ Տէր ուղղեա՛ զգնացս մեր՛՝։ Ի՛ւ Քրիստոսէն և ա՛՛րքե Աղօ՛թն և ա՛՛ոն, և ապա՝ Հայր մեր՛՝։

Յետ այսորիկ ասէն։

Մերձեցաւ անձն իմ ի հո՛՛ղ յերկիր՝ ստեղծա՛ծ՝ քանզի պատուիրանսն մե՛ղայ՝. և՛ ճաշակեցի՛ ըզդատա՛՛ւորութիւն մահու. Տէր յոյս իմ ծգնեա՛ ինձ։

Սաղմոս. Մերձեցաւ անձն իմ ի հող. Տէր կեցո՛ զիս ըստ բա՛՛։ Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լուար ինձ. ուսո՛ ինձ՛՛։ Ի ճանապարհս արդարութեանց քոց խնդասցեն արա՛ զիս. և՛՛։ Տքնեցաւ անձն իմ առ ի ձանձրանալ. հաստատեա՛ զիս ի՛՛։

Քահանայապետ առնելոյ։

Ո՛չ ճանապարհ՛ս քո՛՛ւ եա՛ ոչ պա՛՛հեցի՝, քանզի՝ ոչ՝ ժա՛՛մանեցի՛ ա՛պահչա՛՛րել՝. այլ հեղգացա՛՛յ. այլ առ՝ քե՛՛զ միայն պա՛՛ղատիմ Հա՛՛յր երկնաւո՛՛ր. Տէ՛՛ր յո՛՛յս իմ ո՛՛վ՛՛։

Սաղմոս. Ճանապարհս մեղաց իբաց արա յինէն. և յօրէ՛՛։ Ճանապարհս ճշմարտութեան քոյ ընտրեցի. և զիրաւո՛՛։ Մերձեցայ ես ի վկայութիւնս քո Տէր՝ մի յամօթ առնե՛՛ր՛՛։ Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ. զի անդորր՛՛։

Օ՛՛րէ՛՛նէ՛՛սգէ՛՛տ արա՛՛ զի՛՛ս Տէր՝ ի ճանապա՛՛րհի՛՛ քո՛՛ւմ. քա՛՛նզի խը՛՛նդրեցի՛՛ գա՛՛լ ո՛՛ւ ա՛՛քեզ գտանա՛՛լ անդրէն ի հո՛՛՛ղ յո՛՛րմէ ստեղծա՛՛յ՛՛. այլ առ՝ քե՛՛զ միայն պա՛՛ղատիմ. Հա՛՛յր երկնաւո՛՛ր. Տէ՛՛ր յո՛՛յս իմ օ՛՛գնեա՛՛ ի՛՛նձ։

Սաղմոս. Օրէնսգէտ արա զիս Տէր ի ճանապարհս իրաւանց՛՛։ Խոնարհեցո՛ զսիրտ իմ ի վկայութիւնս քո Տէր. և մի յա՛՛։ Առաջնորդեա՛ ինձ ի շաւիղս պատուիրանաց քոց Տէր. զի՛՛։ Ասպա խփէն գԳէորգեսեանն, պարտնանելով ի Լեռս Ղա՛՛ղա՛՛։ Եւ ասեն Սաղմոս ոգեւոյն։

Նգի՛՛ն զիս ի գբո՛՛ւի նե՛՛ղքնո՛՛ւմն. ի խաւարի՛՛ և ի ստուերս մա՛՛հո՛՛ւ։ Տէ՛՛ր Աստուա՛՛ծ փրկութեան իմոյ. ի տուէ՛՛ կարդացի և ի գի՛՛շերի՛՛ առաջի՛՛ քոյ։ (ի վա՛՛ն ասա՛՛)։

Ի վերայ դերեզմանին։

Ընթերցուած Ցօբայ։

Ո՞ պատմիցէ յանդիման նորա զճանապարհս նորա՝ և զոր ինչ ինքն գործեաց՝ ո՞ հատուսցէ նմա։ Եւ ինքն ի դերեզմանս գնաց· և ի տապանի ոչնեցաւ։ Ջաղջրացան նմա խիճք հեղեղատի· և զհետ նորա ամենայն մարդ գնասցէ· և յառաջ քան զնա անթիւք։

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Ջայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ՝ և Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս, ի յայտնութեան իւրում և յարքայութեան։ Եւ դու քարոզեա զբանն· հաճ ի վերայ ժամու և տարաժամու· յանդիմանեա, սաստեա, մխիթարեա ամենայն երկայնմտութեամբ և վարդապետութեամբ։ Քանզի եկեսցէ ժամանակ, զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսայցեն· այլ ըստ իւրաքանչիւրոց ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց։ Եւ ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս՝ և յառասպելս կործանեսցին։ Այլ դու զուարթ կաց· յամենայնի ճգնեաց՝ զգործս աւետարանչի գործեա· զպաշտօն

Քահանայապետաց առնելոյ։

քո կատարեալ կալ։ Ոչ ես այսուհետև նուիրեալ եմ· և ժամանակ գարձի իմոյ հասեալ կայ։ Ոչ բարւոք պատերազմի պատերազմեցայ· զընթացան կատարեցի· զհաւատոն պահեցի։ Այսուհետև կայ և ինձ պսակ իրաւութեան պահեալն, զոր հատուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր· և ոչ միայն ինձ, այլև ամենեցունց, որք սիրեցին զյայտնութիւն նորա։

Ալէլուիա։ Տէր հան ի բանտէ զանձն իմ գո՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց։ Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք· և մեկնեսցէ զնոսա ի միմեանց՝ որպէս հովիւ զմեկնեսցէ զոչիս յայծեաց։ Եւ կացուսցէ զոչիսն ընդ աջմէ իւրմէ՝ և զայծեան ի ձախմէ իւրմէ։ Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որք ընդ աջմէն իցեն, եկայք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի։ Ոչ քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել· ծարաւեցայ՝ և արբուցիք ինձ· օտար էի՝ և ժողովեցիք զիս։ Մերկ էի՝ և զգեցուցիք զիս· հիւանդ էի՝ և տեսիք զիս՝

ի բանտի էի՝ և եկիք առիս։ Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն. Տէր՝ երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք. կամ ծարաւի, և արբուցաք։ Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք. կամ մերկ, և զգեցուցաք։ Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ի բանտի՝ և եկաք առ քեզ։ Պատասխանի տացէ Թագաւորն՝ և ասասցէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ՝ որովհետև արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք։ Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ՝ որք ընդ ահեկէն իցեն. երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական. որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։ Օ՛ի քաղցեայ, և ո՛չ ետուք ինձ ուտել. ծարաւեցայ, և ո՛չ արբուցիք զիս։ Օտար էի, և ո՛չ ժողովեցիք զիս. մերկ էի, և ո՛չ ըզգեցուցիք զիս. հիւանդ էի և ի բանտի, և ո՛չ տեսիք զիս։ Յայնժամ պատասխանի տացեն նոքա՝ և ասասցեն. Տէ՛ր, երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի՝ կամ օտար՝ կամ մերկ՝ կամ հիւանդ՝ կամ ի բանտի՝ և ո՛չ պաշտեցաք զքեզ։ Յայնժամ պատասխանի տացէ նոցա և ասասցէ. ամէն ասեմ ձեզ՝ որովհետև ո՛չ արարիք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ և ո՛չ ինձ արարիք։ Եւ երթիցեն նոքա ի տանջանս յաւիտենականս. և արդարքն ի կեանսն յաւիտենականս։

Շարական ոտեղծ. Որ յանտուեր ի լուսոյն՝՝։

Մի ոմն ի գլխաւորացն ընթեռնու ի վերայ գերեզմանին։

Հանգիստ երանելւոյն Յօհաննու Աւետարանչին։

Երբ ընդ եղբարս երանելին Յօհաննէս մեծաւ ուրախութեամբ ի Տէր։ Եւ յաւուր միում կերակէր, ընդ ժողովել եղբարցն առնա՝ սկսաւ խօսիլ ընդ նոսա այսպէս։ Եղբարք իմ և ծառայակիցք և ժառանգակիցք և հաղորդք Տեառն արքայութեանն. գիտէ՛ք եթէ ո՛րքան զօրութիւնս ի ձեռն իմ եառ ձեզ Աստուած։ Զա՞նի՛ նշանս. քանի՛ արուեստս. ո՛րչափ շնորհս. ո՛րպիսի վարդապետութիւնս. վերակացութիւնս. հանդիստս. ապաստարութիւնս. փառս. հաւատս. միաբանութիւնս. ձիրս. պարգեւս։ Ո՛րչափ, և քանիցս տեսիք աչօք ձերովք զտուեալսն ձեզ՝ որք ո՛չ երեին աչացս այսոցիկ. և ո՛չ ականջացս այսոցիկ լսելի լինին։ Ո՛րդ՝ հաստատեցարո՛ւք ինա, յիշելով զնա յամենայն գործս ձեր. գիտացէ՛ք զկորհուրդս մատակարարութեանն որ եղև առ մարդիկ, թէ այր աղագաւ արար Տէր։ Ղազէ զձեզ ինքնին Տէր ի ձեռս իմ. և մաղթէ կալ ճնալ ձեզ, առանց թշնամանաց, առանց նենգութեան,

առանց անառակութեան։ Զանգի գիտէ զթըշնամանան որ ի ձէնջ. գիտէ և զանարգութիւնն, գիտէ և զնէնգութիւնն, գիտէ և զանառակութիւնն, ի ստունգանելն ձեր ի սուրբ պատուիրանաց նորա։ Ուրդ՝ մի՛ տրտմեացի ի ձէնջ բարերարն Աստուած. զթած ծն. ողորմած ն. սուրբն. յաւակն. անարատն. անհիւթն, միայնն. մի՛ նն. անփոփոխն. ստոյգն. աննենգն. անցասումն. որ ի վեր է քան զամենայն ասելի և իմանալի անուն Աստուածն իմ Յիսուս։ Ուրախ լեցի ի բարւոք կրօնաւորութեան ձերում. խնդասցէ ի սուրբ կեանս ձեր. հանգիցէ՛ ի պարկեշտ վարս ձեր. անհոգ լեցի ի ժուժկալութեան ձերում. հաճեսցի՛ ի միաբանութեան ձերում. ժպտեսցի՛ ի զգաստութեան ձերում. բերկրեսցի ի սիրեն ձեր զնա։ Զայս այժմ խօսիմ ընդ ձեզ եղբա՛յք, փութասջի՛ք յառաջիկայ գործն ձեր, արդէն իսկ կատարել ի Տէր։ Զանգի զի՞նչ այլ ինչ ունիցիմ ասել ձեզ. ունիք զԱստուծոյ մերոյ զգրաւականն. ունիք զբարերարութեան նորա զտուրս. ունիք զանհրաժեշտ գալուստն նորա։ Զի թէ ո՛չ ևս մեղիցէք, զոր յանդիմանութեանն գործեցիք՝ թողուցու ձեզ. ապա թէ գիտացեալ զնա՝ և ի նմանէ զողորմութիւն գտեալ՝ նո՛յնպէս վարիցիք, և զառաջինն ևս համարեսցի ձեզ. և ո՛չ ընկալջիք զողորմութիւն ի նմանէ։ Եւ զայս ասացեալ առ նոսա,

յաղօթս եկաց այսպէս։ Ո՛ որ զպատակ զայս հիւսեցեր քոյին հիւսմամբդ Յիսուս։ Ո՛ որ ըզբազում ծաղիկս զայս յանթառամելի ծաղկէդ յօդեցեր։ Ո՛ որ սերմանեցեր զկենարար բանս քո զայսոսիկ։ Ո՛ որ միայնդ ես խնամակալ քոյոց ծառայից, և բժիշկ՝ որ ձրի բժշկես։ Ո՛ որ միայնդ ես բարերար և անամբարտաւան։ Ո՛ որ միայնդ ես ողորմած և մարդասէր։ Ո՛ որ միայնդ ես փրկիչ և արդար։ Ո՛ որ միշտ ես և յամենեսեան, և յամենայն ուրեք մերձ ես Աստուած իմ Յիսուս. դու քոյով պարգեւօքդ ծածկեա՛ զամենեսեան ոյք ի քեզ յուսան. զի դու գիտես զչարաճօճին մերոյ յամենայն ուրեք զմեքենայս և զբռնութիւն։ Եւ ապա խնդրեաց հաց՝ և գոհացաւ այսպէս։ Օ՜ր օրհնութիւն, կամ զո՞ր պատարագ, կամ զո՞ր գոհութիւն ի բեկանել հացիս մատուցուք քեզ. այլ միայն զքեզ Տէր Յիսուս անուանեացուք։ Փառաւորեմք Տէր՝ զքո ասացեալդ ՚ի օր զանուն։ Փառաւորեմք զմուտ դրանն քոյ։ Փառաւորեմք զյարութիւնն քո՝ որ քեւ ցուցաւ մեզ։ Փառաւորեմք զճանապարհն քո։ Փառաւորեմք զերծին քո. զբանն, զշնորհն. զհանդն. զայն. զանհաս մարգարիտն. զգանձն. զարծրն. զուռկանն. զմեծութիւնն. զհոնարհութիւնն՝ որ վասն մեր կոչեցար Որդի մարդոյ. զճշմարտութիւնն. զհանգիստն. զգիտութիւնն. զզօրու-

թիւնն. զպատուիրանն. զհամարձակութիւնն. զազատութիւնն. զառ ի քեզ փախուստն: Օ՜ի դու ես Տէր արմատ անմահութեան և աղբիւր անապականութեան, և հիմն յաւիտենից. անուանեալ այսու ամենայնիւ վասն մեր՝ որպէս զի մեր կոչեցեալ զքեզ այսօրիւք՝ գիտասցուք ըզմեծութիւն քո, որ է անտես ի մէնջ ի ժամանակիս յայսմիկ. և սրբոց միայն տեսանելի՝ ի քեզ կերպարանեցելոցն: Եւ բեկեալ զհացն կարկառեաց նոցա, ի վերայ իւրաքանչիւրոցն աղօթս առնելով՝ արժանի լինիլ ընդհացն Տեառն և սրբոյ պոհութեանն. ճաշակեալ և ինքն նոյնպէս, և ասացեալ՝ թէ և ինձ մնան ընդ ձեզ լեցի սիրելիք իմ, և խաղաղութիւն Տեառն ընդ ձեզ: Եւ ասէ ցՒուդաս՝ ահա դու ընդ քեզ երկուս յեղբարցդ հանդերձ երկու որդովք և փայտատովք, և եկ ընդ իմ: Եւ Իուդաս առանց յապաղելոյ արար զոր հրամայեաց նմա ծառայն Աստուծոյ Յովհաննէս: Եւ եղեալ երանելին Յովհաննէս գնայր առաջի դրացն, հրամայեաց բազմութեանն մեկուսանալ յինքենէ: Եւ հասեալ ի շերիմ ինչ եղբօր ուրումն, ասաց ցպատանին, բրեցէ՛ք որդեակք. և նոքա բրեցին: Իսկ նա ատիպեր զնոսա եւասէր, խոբագոյն լեցի բրածդ: Եւ ի բրելն նոցա՝ խօսէր ընդ նոսա զբանն կենաց, և յորդորէր զեկեալսն ընդ նմա ի տանէն. շինելով և հաստա-

տելով զնոսա ի մեծութիւն Տեառն. և աղօթըս առնելով ի վերայ իւրաքանչիւր ուրուք ամենեցուն: Իսկ մեք ոչինչ իմանայաք ամենևին: Եւ իբրև կատարեցին զբրածն պատանիքն շուրջանակաւ որպէս և նա կամէր, մերկանայր երանելին զհանդերձն իւր զոր զգեցեալ էր, և տարածանէր իբրև զանկողին ինչ ի խորութեան բրածին: Եւ միայն նափորատամբըն կացեալ ի խորափորին, համբարձ զձեռս իւր ի վեր. և յաղօթս եկաց այսպէս: Ո՛ր ընտրեցեր զմեզ յաւաքելութիւն հեթանոսաց: Ո՛ր առաքեցեր զմեզ յաշխարհ Աստուած: Ո՛ր ցուցեր զքեզ ի ձեռն մարգարէից քոց: Ո՛ր ոչ դադարիս երբէք ի խնամոց, այլ միշտ կեցուցանես զկորուսեալսն: Ո՛ր ի ձեռն ամենայն բնութեանց զքեզ ծանուցեր: Ո՛ր և անասնոց անդամ քարոզեցար: Ո՛ր զանասպատ և զվայրենի հոգին, զգօն և հանդարտ արարեր: Ո՛ր ծարաւելոյն քոյով բանիւդ զքեզ խմել եւուր: Ո՛ր մեռելոյն արագ յայտնեցար: Ո՛ր ընկղմելոյն յանօրէնութիւն, առագօրէն ցուցար: Ո՛ր հերքելոյն բնաւին ի սատանայէ, ծանուցար փրկիչ: Ո՛ր յաղթեցեր հակառակորդին, տալով զօգնութիւն ի քեզ ապաւինելոյն: Ո՛ր եւուր նմա զքո ձեռնդ՝ և յարուցեր զնա ի գժոխական իրաց: Ո՛ր ոչ թողեր զնա ի մարմնի կրօնաւորիլ: Ո՛ր

ցուցեր նմա զթշնամին իւր։ Ո՛ որ զգիտուԹիւն քո սուրբ ցուցեր սիրելեաց քոց։ Ո՛ որ Հայրդ ես՝ որոց ի վեր քան զերկինս. և Աստուած երկնաւորաց։ Ո՛ որ օրէնքդ ես եւ Թերականաց. և ընԹացք օդականաց. պահապան երկնաւորաց. և երկիւղ սանդարամետականաց։ Ընկալ զհոգի ծառայիս քոյ Յոհաննու՝ Թերևս արժանի եղելոյ ի քէն։ Ո՛ որ զնս պահեցեր մինչև ի ժամանակս յայս անփորձ ի խառնակուԹենէ կանանց։ Ո՛ որ և զհայիլն ինձ ի կին մարդ, ծանր գրեցեր։ Ո՛ որ յառաջ ժամանակեայ պատրանացս փրկեցեր զնս, և ի մշանջենական կեանս առաջնորդեցեր։ Ո՛ որ ի մարմնաւոր ապեղուԹենէ որոշեցեր զնս։ Ո՛ որ ի դառն մահուանէ զերծուցեր զնս, և ի քեզ միայն հաստատեցեր։ Ո՛ որ զծածուկ ախտ հոգւոյ իմոյ սանձեցեր. և զյայտնի գործս սորա խափանեցեր։ Ո՛ որ նեղեցեր և հալածեցեր զնռոմարարն որ յիս։ Ո՛ որ անբիծ զձանապարհս իմ որ առ քեզ հաստատեցեր։ Ո՛ որ առանց սայթաքելոյ պահեցեր զշաւիղս իմ որ առ քեզ։ Ո՛ որ աներկմիտ եռուր զհաւատս իմ որ առ քեզ։ Ո՛ որ զսուրբ գիտուԹիւնն որ ի քեզ՝ սահմանեցեր ինձ։ Ո՛ որ իւրաքանչիւր գործոց արժանաւոր վարձս հատուցանես։ Ո՛ որ եղեր յոգւոյ իմում մի՛ ինչ սահմանաւոր պատուական համարիլ քան զքեզ։ Եւ արդ՝

Տէր իմ Յիսուս Քրիստոս, զմատակարարուԹիւնն զոր ընկալայ ի քէն՝ կատարեցի. արժանի արա զնս քում հանապատանդ. զքո ողորմուԹիւնդ ընդհարևով ինձ, որ է անփախուստ և անճառ փրկուԹիւն։ Եւ ի գալ իմում առ քեզ, ընկրկեսցի հուրն. վանեսցի խաւարն. տկարասցի վիհն. խամրասցի հնոցն. շիջցի պեհեանն. ամաչեսցեն հրեշտակք չարին. երկիցեն գևք. զսմրեսցին իշխանքն. ընկճեսցին զօրուԹիւնք. աջակողմեանքն կացցեն. ձախակողմեանքն մի՛ մնասցեն. բանսարկուն պատանձեսցի. սատանայ զարհուրեսցի. սրտմտուԹիւն նորա տոչորեսցի. մոլորուԹիւն նորա սուզեսցի տանջանարանք նորա խափանեսցին. յարձակմունք նորա տկարասցին. մանկունք նորա չարչարեսցին. և ամենայն արմատք նորա տարակուսեսցին։ Եւ տուր ինձ զձանապարհս իմ որ առ քեզ՝ անբասիր և անբռնադատ վճարել. առնուլ զայն զոր խոստացար այնոցիկ՝ որք սրբուԹեամբ կեցին, և պարկեշտուԹեամբ սիրեցին զքեզ Տէր։ Եւ ասա հնչեալ զինքն՝ ասաց, գոհ լեր ընդիս Տէր իմ Յիսուս Քրիստոս. և կողմնեցաւ ի խորափորին՝ ուր ըզհանդերձն տարածեաց։ Եւ ասաց ցմեզ, խաղաղուԹիւն ընդ ձեզ եղբարք իմ։ Եւ մինչդեռ ուրախ էաք և լայաք, աւանդեաց զհոգին իւր երանելին Յոհաննէս ի ձեռն Տեառն մերոյ Յի-

սուսի Ռբիատոսի. որում փառք յաւիտեանս. ամէն։

Եւ դարձեալ հող օրհնէ քահանայն երեք անգամ, և արկանէ խաչաձև ի վերայ մարմնոյն՝ ասելով.

Օրհնութիւն Աստուածային իջցէ ի հող մահու սորին, և բուսուսցէ յօրն վերջին, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Ապա ծածկէն լիապէս զգերեզմանն՝ ասելով ձայնիւ։

Ողորմած Աստուած քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Հաւատամ՝ ունելով հնազի՛ խաղաղութեան. երթառ արարչին հայցելով. Աստուած իմ հանգո՛։

Ե՛ս ասացի ի զարմանալ իմում թէ՝ ամենայն սուտ է։

Հաւատամ՝ ունելով հնազի՛ խաղաղութեան. երթառ արարչին հայցելով. Աստուած իմ հանգո՛։

Ը՛զձանաձարձս իմ ուղի՛ղ արա ինձ ըստ բանի՛ քում. և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք։

Հաւատամ՝ ունելով հնազի՛ խաղաղութեան. երթառ արարչին հայցելով. Աստուած իմ հան-

գո՛։ Ո՛ր եառնուր հոգի Յիսո՛ւս. ըզսա պահեա՛. զի քոյ խաչի՛ և յարութեա՛նըդ հաւատացի՝ թագաւո՛ր երկնաւո՛ր. հանգո՛ զհո՛գի սորա՛. յի՛շելո՛վ սո՛րա զհաւատոս։ Ի՛ քաղաք Տեառն՛ զօրութե՛անց՝ և՛ ի քանդա՛ք թագաւո՛րին մեծի՛. ո՛ր ժողովք սըրբո՛ց են ի խաղաղութեան՛. գնասցես յուսո՛վ. և հանգիցես ընդ հրեշտակա՛ց դա՛սս. տեսանել ըզլո՛յսըն յաւիտենից։ Ո՛երձեցաւ անձն իմ ի հո՛ղ յորմէ՝ ստեղծե՛ր զի՛ս՝ և՛ հոգւոյս մե՛կնեալ յինէ՛ն. Տէ՛ր զապաւինեալս յիշեա՛ ի քո՛ւմ գալըստեա՛նն։ Ստեղծուա՛ծ եմ անարատ ձեռա՛ց քո՛ց մի՛ անտես առներ. այլ խնայեա՛ յիս յահա՛պին աւուրըն. Տէ՛ր՝։ Յո՛րժամ գան փառօք հօր գաւոել զտիեզե՛րս ամենայն. և հարկանի փո՛ղ հընչմա՛ն յարութեան. Տէ՛ր՝։

Փառք ՚ո՛ր՝։ Ը՛յժմ և միշտ՝։ Ը՛նդ Ռբիատոսի պահելով յաղթո՛ղ լե՛ցուք փոքազին. և՛ ը՛նդ հրեշտակս երգե՛ցուք փառք ի՛ բարձունս Աստո՛ւծոյ։

Եւ ասեն զփառք ի բարձունսն, զի մխիթարեսցին սիրտք վշտացելոցն։

փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն. ի մարդիկ հա՛՝:

Փառ+ պապէ– և էլէպաֆո–ՐԿ–ն չօր՛՝:

Եղիր զիս իպրի ներքնումն՛՝: Տէր Աստուած փրկութեան՛՝:

Ամէն:

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու:

Ի երկնչեր հօտ փոքրիկ՝ զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Ա՛ճառեցէք զինչս ձեր. և տո՛ւք զողորմութիւն. և արարէ՛ք ձեզ քսակս առանց հնանալոյ՝ գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ՝ և ոչ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է՝ անդ և սիրտք ձեր եղիցին: Եղեցին գօտիք ձեր պընդեալ ընդ մէջ՝ և ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանողք մարդկան՝ որք ակն ունիցին Տեառն իւրեանց թէ ե՛րբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ՛ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ՝ և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտեսցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ կամ՛ յերրորդ պահ եկեսցէ և գտցէ այնպէս, երանելիք են ծառայքն այնոքիկ: Այլ զայն գիտասջիք. եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր, և չտայր թողլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք եղերո՛ւք պատրաստք, զի յորում՝ ժամու ո՛չ կարծիցէք, գայ Որդի մարդոյ:

Ե– Սպէս–ափն տպրոլէ:

Վան ի վերուստ պահպանութեան առ ի Տեառնէ անձանց մերոց, և հաճոյական աղօթս առնելոյ. զՏէր աղաչե՛՝: Վ՛ան ընդունելոյ Տեառն զհոգի հանգուցելոյս ի հանդիստն արդարոց. զՏէր աղա՛՝: Վ՛ան արժանի լինելոյ սմա խաղաղութեամբ և մեծաւ յուսով սպասել Տեառնագալուստ փողոյն. զՏէր աղաչե՛՝: Վ՛ան քաղցրաբարբառ լսելոյ սմա ձայն երանաւետ կոչմանն՝ եթէ արի՛ք ահա գայ Քրիստոս. զՏէր աղա՛՝: Վ՛ան համարձակապէս տեսանելոյ սմա զանապական պսակն և զանբաւուեր լոյսն. զՏէր աղա՛՝: Վ՛ան տալոյ սմա տեղի հանգստեան ի հայրական խնամոցն յաջակողմ դասուն. զՏէր աղա՛՝: Վ՛ան պարգևելոյ սմա զերկնային պսակն կենաց և անմահութեան. զՏէր աղա՛՝: Վ՛ան առաքման շնորհաց մեծի և ամենազօր աջոյն Քրիստոսի ի հո-

զանխաթեայ յարկս յայս· զՏէր աղաչեա՛ք։ Ո՞ւմն կնքելոյ զգերեզմանս զայս խաչիւն իւրով մինչև ի գալուստն իւր սուրբ· զՏէր աղա՛։ Ո՞ւմն առաքելոյ զՀնոյնս Հոգւոյն սրբոյ ի սիրտս լսողաց Հաւատացելոց անուան իւրոյ սրբոյ· զՏէր աղաչեա՛ք։ Ո՞ւմ մխիթարելոյ զվշտապնեալս սրտիւք ի ձեռն ողորմութեան իւրոյ· զՏէր աղաչեա՛ք։ Ո՞ւմն Հոգւոյն՝։ Եւ ևս՛։ Ո՞անձինս մեր՛։ Ողորմեաց մեզ՛։

Եւ քահանայն ասէ զԱղօթս։

Գոհանամք զքէն Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի· որ յայց եղեր՝ և արդարութեամբ քով փրկեցեր զմեզ ի մեքենայից սատանայի· զի նախանձեցաւ և էհան զմեզ պատրանօք ի յաւէժական կենացն, արտաստմանելով զմեզ ի կորուստ և յապականութիւն։ Ել դու բարերար և մարդասէր Աստուած· ոչ թողեր զնորա դառնութիւն թիւնիցն ի մեզ յարակայ։ Ո՞ւմն որոյ մահ կոչեցեր և հեղեր ի վերայ արարածոց քոց, զի մի՛ անմահ մնասցէ չարութիւնն պատահեալ· այլ բառնալով զմեզ ի կենացս յայսցանէ, և Հատանելով ի մեղաց՝ եղև փրկութիւն բարերարիդ պատուհասն։ Խակ ի վախճան աւուրցս այսոցիկ առաքեցեր

զՈրդիդ քո սիրելի ի կերպարանս մահու մեղաց· որ և դատապարտեաց զմեզս մարմնով իւրով· և կամաւոր խաչելութեամբն իւրով խորտակեաց զզօրութիւնս դժոխոց· եղև առաջին պտուղ ննջեցելոց· և աստուածահրաշ յարութեամբն իւրով հրաւիրեաց զմեզ յիւր անմահութիւնն։ Յոր Հաւատացեալ ծառայս քո այս՝ մկրտեցաւ ի մահ Քրիստոսի քոյ· և լցեալ ժամանակ կենցաղավարութեան իւրոյ, փոխեցաւ ի կեաս սահմանադրութեան քոյ։ Ո՞ւմն որոյ աղաչեմք զքեզ Հայր սուրբ, միջնորդութեամբ մարմնոյ և արեան Որդւոյ քոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայեաց ի խոստովանողս անուանդ քոյ· և թո՛ղ սմա զամենայն պարտիս՝ զկամայ և զակամայ՝ զոր վերաւորեաց անմարմին թշնամին պատրանօք խաբմամբ· զի դու միայն սուրբ և բարերար Տէր ես։ Եւ որպէս յանգոյութենէ ի գոյութիւն ածեր զամենայն, և այժմ զվերս սորա բժշկեա՛ և խաղաղութեամբ անցո՛ ընդ խաւարային իշխանութիւնսն· զի մի՛ իւրեանց չարութիւնն ի ծառայս քո գտցեն· այլ ընդէա՛ զձեռագիր նոցա ներգործութեանն զոր ի սմա սերմանեցին· և տո՛ւր սմա ճանապարհ բարի։ Որպակայ եղեցի ի սմանէ հրեղէն սուրն՝ որ պահէ զճանապարհ ծառոյն կենաց, պատկառելով ի փրկական նշանէ խաչին, որ զկենաց պտուղն

մեզ ընծայեցոյց՝ առհասատչեայ յաւէժական կենացն և առաջնորդ։ Յոր ապաւինեալ ծառայս քո՝ սովաւ հասցէ ի պահեստ՝ ուր սուրբքըն ամենայն հաւաքեալ՝ սպասեն մեծի հարսանեացն, յերևիլ Որդւոյ քոյ և փրկչի մերոյ Յեսուսի Քրիստոսի ի ձայն փողոյ մեծի։ Որոյ ի յարկնարկելն՝ սասանին տարերեղէնս արարածք և գալարին երկինք, նահանջեն լուսաւորք, թօթափին աստեղք, ցոլանան գետք հրեղէնք՝ և երևին բանակք անմահիցն. սասանի երկիր՝ և բանին կնքեալ գերեզմանք, և շինին հոգւացեալ մարմինք. և հոգիքն ալացեալք իբրև զարծուիս անդր հասանին՝ և զգենուն զանապական մարմին ի վայրկեան ժամանակի, և ժամանեն յիւրաքանչիւր տեղիս։ Ողջեմք զքեզ Տէր՝ ժամանեցո զծառայս քո յանսպառ ուրախութիւնսըդ. և զմեզ զամենեսեան զհաւատացեալս ի քեզ խաղաղութեամբ պահեա և մխիթարեա հոգւով և մարմնով. զի արժանաւոր լիցուք փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և՛։

Խաղաղ-ըն անձնից-ն
Ա՛ստ-ծոյ երկիր պագեցո՛ք։

Օրհնեալ ես Տէր Աստուած մեր՝ որ նեղելոց ես անզորրութիւն. և ընդունող ես հոգւոցն

հանգուցելոց։ Ընկալ զհոգի ծառայիս այսորիկ ի բարի. և փարատեցո զսուգ և զտրտմութիւն ի սիրելեաց սորա՝ որք հետևեցան յուղարկել զսա ընդ երկայնաձիգ ճանապարհն, և մորմոքին ի վերայ անպատնաւի ուղեգնացութեան սորա, և վասն յաւէժ անլռատելոյ ի սմանէ առժամանակ մի՝ մինչչև իւրեանց յուղի անկեալ յայսմ բազմաժողով ծովածուփ կենցաղոյս։ Եւ զչափաւոր արտասուս սոցա ընկալ զեզ ի հաճոյս՝ և մի՛ ի զայրացումն. և մխիթարեալ փոփեա զլքեալ սիրտս սոցա՝ գալստեամբ քոյոյ շնորհիդ. և զօրացուսցես զտարակուսեալ ոգի սոցա առաքմամբ Հոգւոյդ սրբոյ։ Եւ կնքեալ պահեա զգերեզմանս փակեալս յանուն քո սուրբ՝ նշանաւ ամենայաղթ խաչի քոյ՝ մինչև յօր վերջնում մեծի կրկնակի գալստեան քոյ։ Ոչ քո ամենակարող զօրութեամբդ՝ եղեմնապատ և ձիւնաթաղեալ պահպանին ամենայն արմատք. և սերմանիք թաղեալ յերկիր մեռանին՝ մինչև ի ժամանակս գարնանային որոտնդոստ յարութեան զուարճացեալ պայծառանան զորս կարգեցեր մեզ ի սպաս պիտոյից։ Ոյսպէս և դու խոնարհեցար ի հայրական ծոցոյ պատկերակից մեզ լինելով, հատ անմահութեան զմահ յանձն առեր՝ զի բազում արտասես արդիւնս. իջեր ի գերեզման՝ լուծեր զերկունս մահու. զդժոխս աւերեցեր. որ երկրպագիս յերկնաւորաց և յերկ-

բաւորաց և ի սանդարամետականաց. և լի են ամենայն երկինք և երկիր փառօք քովք։ Ա՛րդ՝ պահեա ամենազօր Տէր զՀոգի սորա առ ամենայն սրբոց և սիրողաց անուանդ քում։ Եւ զգերեզմանն ծառայիս քոյ կնքեալ պահեացես, որ փակես զևորս և կնքես ամենազօր աջովդ քով. երկինք՝ և երկնից երկինք և երկիր հաստատեալ կան բանիւ քով. այսպէս անշարժ եղիցի կնիք սերուխեան քոյ ի վերայ բնակութեանս սորա և պահարանի ծառայիս քոյ։ Եւ մի՛ իշխեսցէ մերձենալ ի սա պիղծ և անմաքուր գևն՝ որպէս ի մարմինս և յոգիս հեթանոսաց, որք ոչ ունին զծնունդ սուրբ աւազանին, և զկնիքն ահաւոր և պատկառելի ի վերայ գերեզմանաց իւրեանց։ Վասնզի այս ծառայս քո կոչեցեալ հրաւիրեցաւ ի քոյոց հրաշիրողացն, և հաւատացեալ ի քեզ ի կենդանութեան իւրում՝ թաղեցաւ ընդ քեզ մկրտութեամբ ի մահ. և սերմանեալ պահեցաւ ի քէն անդրէն յերկիր։ Ա՛ման որոյ լուր աղաչանաց մերոց մարդասէր Տէր, և թո՛ղ զամենայն մեղս սորա զոր մեղաւ, և քաւիչ լեր ամենայն սխալանաց սորա, եթէ կամաւ՝ և եթէ ակամայ, եթէ բանիւ՝ և եթէ գործով, եթէ խորհրդով՝ և եթէ մոռացութեամբ, զամենայն կոտակ չարին պատառեա. և զձեռագիրս մեղացն ջնջեա Տէր, և զախտս հնութեանն լուա. զի

անպատկառ լեցի ի մեծի որոտընդոստ աւուրն վերջնում ընդ համօրէն պահպանեցելոցն ի քէն, ընդ առաջ ելանել քեզ Նորափեառս արփիափայլ հրաշիւք՝ զարդարեալ ի զարդ անկողոպտելի. յորժամ գաս Ատուածդ ի մէջ աստուածացելոցն՝ ի բաժանել և որոշել զպատիւ զանապան սիրելեաց քոց։ Եւ զմեզ զամենեսեան զհաւատացեալս ի քեզ արժանի արա զայս ահաւոր և զսոսկալի օրս հանապատ սրապատուրել առաջի աչաց մերոց. ի յամենայն զգալի և աստուրողական կենցաղավարութիւնս պատասխարեա զմիտս և զդպատարանս մեր։ Պատկերացո՛ Տէր զանհրաժեշտ գալուստ քո առաջի աչաց մերոց. քաղցրութեամբ քով քաւիչ լեր գործելոց մեղաց մերոց. ի հանդերձեալ գեհենոյն պահեա զմեզ. և ժամանեցո՛ զմեզ զամենեսեան արժանաւորապէս հանդիպել քում գալստեանդ։ Ամենագութ Տէր՝ նորոգեա զմարմին խոնարհութեան մերոյ ըստ անեղծ փառացդ Քրիստոս Ատուածդ մեր։ Ընդ որում՝ ՚ի՛օր՝ միանգամայն և ՚ո՛ւրդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Եաթական. Տէրն յետ ատեցմանն՝։ փառաց ի փառս՝։ եղէ. ի դնել բեմին՝։ Հոգւոյ՝։ Հայր մեր՝։

Ցեա ծածկելոյն զգերեզմանն ընթեռնուն։

ջինի ասէ. եւ ևս խաղաղութիւն և փառք Հօր՝։

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի գերեզման և ոսկերք ծառայիս Աստուծոյ, նշանաւ սուրբ խաչիս և բանիւ սուրբ աւետարանիս, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և՝։

եւ ևս խաղաղութեան զՏէր աղա՝։ Օրհնութիւն և փառք՝։

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի դամբարան և ոսկերք ծառայիս Աստուծոյ, նշանաւ սուրբ խաչիս և բանիւ սուրբ աւետարանիս, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և՝։

եւ ևս խաղաղութեան զՏէր աղա՝։ Օրհնութիւն և փառք՝։

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի շիրիմ և ոսկերք ծառայիս Աստուծոյ, նշանաւ սուրբ խաչիս և բանիւ սուրբ աւետարանիս, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և՝։

Կեցուսցէ և ողորմեսցի։

Ընդարձակ եղիցի կնիք տէրութեան ի վերայ բնակարանի ծառայիս Աստուծոյ, մինչև եկեալ նորոգողն և Ճարտարապետն ամենեցուն Տէրն մեր Յիսուս Քրիստոս, նորոգեսցէ հայրական փառօք ի փառս։ Ամէն։

Քահանայապաղ առնելոյ։

Սարկաւագն տպրղէ։ եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Խնդրեսցուք հաւատով ի Հօրէ վասն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց. փրկելոյ զմեզ ի վշտաց և ի նեղութեանց. իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ ամենակալին, կեցո՛ և ողորմեա՛։

եւ քահանայն ասէ զվերջս։

Հայր գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց, որ մխիթարես զմեզ յամենայն նեղութիւնս մեր։ Որ հարկանես Տէր՝ և դու ինքնին բժշկես. և ո՛չ երբէք թողուս ի ձեռանէ քումմէ զստեղծուածս քո։ Տո՛ւր մեզ Տէր գթութեամբ քով՝ հոգի զգաստութեան, հոգի մխիթարութեան. քեւ մխիթարեա՛ զվըշտապնեալս սրտիւք, և բժշկեա՛ զվէրս սոցա։ Զի հաստատուն քո յուսովդ առողջացեալք ի սգոյ և ի տրտմութեանց՝ փառաւորեսցեն զամենասուրբ զՅերրորդութիւնդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն՝։

Իսկ յերկրորդում աւուրն երթան ի Հանգիստն։ Եւ յերթալն ասեն զԱմբիծսն, զկնի՝ Ազօթք Յոնանու մարգարէի։ Ինձ ունկնդիր իմում ես առ Տէր կարդացի՛՛։ Ապա ասեն շարական Հանգստեան՝ ըստ կարգի պաշտման։ Զկնի ասեն զփառք ի բարձունսն։ Եւ Հող ընդ ի վերայ դերեզմանին։ Եւ ապա այս կանոն կատարի։

Սաղմոս ԽԹ. կոչէ։ Ընդ երեկոյս Հանգիստեն լսիցէ առաւօ՛՛։ Բարձր առնեմ զքեզ Տէր՝ զի ընկալար զիս՛՛։

Ընթերցուած ի Յոննդոյ։

Եւ ճնաց Յակոբ միայն. և մարտեաւ այր մի ընդ նմա մինչև ցառաւօտս։ Եւ իբրև ետես թէ ոչ յաղթեաց նմա, բուռն էհար զամոլաջլէ զոտի նորա. և ընդարմացոյց զամոլաջիկ զոտին Յակոբայ, ի կռուելն իւրում ընդ նմա։ Եւ ասէ ցնա. արձակեա զիս՝ քանզի այգ եղև. և նա ասէ. ոչ արձակեցից զքեզ՝ թէ ոչ օրհնեացես զիս։ Եւ նա ասէ ցսա՝ զի՞նչ անուն է քո. և սա ասէ ցնա՝ Յակոբ։ Եւ ասէ ցնա. յայսմհետէ ոչ կոչեսցեն զանուն քո Յակոբ. այլ Իսրայէլ եղեցի անուն քո. զի ժուժկալեցեր ընդ Աստուծոյ. և ընդ մարդկան զօրաւոր լիջիր։ Նմարց Յակոբ և ասէ. պատմեա ինձ զանուն քո. և ասէ՝ զի՞ հարցանես զանուանէ

իմմէ. և օրհնեաց զնա անդ։ Եւ կոչեաց Յակոբ զանուն տեղւոյն այնորիկ տեսիլ Աստուծոյ. զի տեսի զԱստուած դէմ յանդիման. և ապրեցաւ անձն իմ։ Եւ ծագեցաւ նմա արև իբրև էանց տեսիլն Աստուծոյ։

Ընթերցուածս յՅոբայեայ մարգարէէ։

Ա յսպէս ասէ Տէր. գամ ժողովել զամենայն ազգս՝ և զլեզուս. եկեսցեն՝ և տեսցեն զփառս իմ։ Եւ թողից ի վերայ նոցա նշան. և առաքեցից ի նոցանէ փրկեալս յազգս. ի Թարսիս. և ի Փուտ. և ի Լուտ. և ի Մոսոք. և ի Թոբէլ. և յԱլլադա. և ի կղզիս հեռաւորս. որոց չիցէ լուեալ զանուն իմ. և ոչ տեսեալ զփառս իմ. և պատմեսցեն զփառս իմ և զանուն իմ ի մէջ ազգաց։ Եւ ածցեն զեղբարս իւրեանց յամենայն ազգաց պատարագ Տեառն. հեծեալս կառսք՝ հանդերձ պալարակապ երիվարօք և հովանոցօք ի տուրբ քաղաքն Երուսաղէմ, ասէ Տէր. որպէս մատուցին որդիքն Իսրայէլի զպատարագս իւրեանց ինձ սաղմոսիւք ի տան Տեառնէ։ Եւ ի նոցանէ առից ինձ ի քահանայս՝ և ի Ղեւտացիս՝ ասէ Տէր։ Զոր օրինակ երկինք նոր՝ և երկիր նոր. զոր եմն առնեմ կալ առաջի իմ՝ ասէ Տէր. նոյնպէս կացցէ զաւակն ձեր։ Եւ եղեցի ամիս յամսոյ՝ և շաբաթ ի շաբաթէ.

եկեսցէ ամենայն մարմին երկիրպագանել առաջի իմ յԵրուսաղէմ՝ ասէ Տէր Ամենայնի։ Եւ ելցեն՝ և տեսցեն զոսկերս մարդկան առիս յանցուցելոց. զի որդն նոցա ոչ վախճանեսցի. և հուր նոցա ոչ շիջցի. և եղիցին ի տեսիլ ամենայն մեղեաց։

Պօղոսի առաքելոյն ի Կաթուղիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Զայս ձեզ սիրելիք երկրորդ թուղթ գրեմ. որովք զարթուցից ի յիշատակ զհաստատումն միտս ձեր։ Յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամն ի սրբոց մարգարէից և յառաքելոցն ձերոց, զպատուէրս Տեառն և փրկչին։ Բայց զայս նախ գիտասջիք՝ զի յաւուրս յետինս եկեսցեն արհամարհողք, այպանողք, որք ըստ իւրեանց ցանկութեանցն գնայցեն։ Եւ ասիցեն, ո՞ւր են աւետիք գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքըն ննջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ ի սկզբանէ արարածոց։ Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որք զայն կամին. եթէ երկինք եղեն ի սկզբանէ՝ և երկիր ի ջրոց. և ջրովք հաստատեալ բանիւն Աստուծոյ։ Ո՛ւստորոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ։ Եւ այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են. հրոյ պահեալք յօրն դատաստանի՝ և կո-

րըստեան ամբարիշտ մարդկան։ Եւ այս ևս մի՛ լեցի ի ձէնջ ծածկեալ՝ սիրելիք. զի մի օր՝ Տեառն իբրև զհազար ամ է. և հազար ամ իբրև զմի օր։ Ո՛չ յամեցուսցէ Տէր վաւերման՝ որպէս ոմանք յամր համարին. այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի եթէ ոք կորիցէ. ամենեցուն հասանիլ յապաշխարութիւն։ Այլ եկեսցէ օր Տեառն իբրև զգող. յորում երկինք տագնապաւ անցցեն. և բնութիւնք հրով կիզեալք լուծցին. և երկիր՝ և որք ի նմա գործք գտանիցին։ Եւ ի լուծանիլ այսպէս այսր ամենայնի, ո՞րպիսի ինչ պարտ իցէ ձեզ գտանել. այլ սուրբ և աստուածապաշտ կարգաւակն ունիլ։ Եւ փութալ հասանիլ գալստեան աւուրն Տեառն. յորում երկինք հրայրեացք լուծանիցին. և բնութիւնք հրդեհեալք հալիցին։ Նորոց երկնից՝ և նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ սպասիցեմք՝ յորս արդարութիւնն բնակի։ Վասն որոյ սիրելիք՝ այսոցիկ սպասեալք՝ փոյթ անձին ունիջիք՝ ամբիծք և անարատք գտանիլ նմա ի խաղաղութեան։ Եւ զՏեառն երկայնմտութիւնն փրկութիւն համարիջիք։

Պօտպահ առաքելոյն ի Թեսաղոնիկեացւոց Թղթոյն է. ընթերցուած։

Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր եղբարք՝ որպէս և արժան իսկ է։ Զի ևս քան զևս աճեն հաւատք ձեր։ և յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ամենեցուն առ միմեանս։ Որպէս և մեզ ձեօք պարծիլ յեկեղեցիսն Աստուծոյ վասն համբերութեան ձերոյ և հաւատոց՝ յամենայն հալածանս ձեր և ի նեղութիւնս, որոց դուքն համբերէք։ Յօրինակ արդար դատաստանին Աստուծոյ. արժանի լինել ձեզ արքայութեանն Աստուծոյ՝ վասն որոյ և զգինուիթիննդ կրէք։ Եթէ պարտ է առաջի Աստուծոյ հատուցանել նեղչացն ձերոց դնեղութիւն։ Եւ ձեզ նեղելոցդ զհանգիստ ընդ մեզ՝ ի յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի յերկնից, հրեշտակօք զօրութեան իւրոյ։ Ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զԱստուած, և որք ոչ հնազանդին աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որք տայցեն վրէժս ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց Տեառն՝ և ի փառաց զօրութեան նորա։ Յորժամ գայցէ փառաւոր լինել ի սէջ սրբոց իւրոց, և սքանչելի ի սէջ ամենայն հաւատացելոց. զի հաւատարիմ եղև վկայութիւնն մեր ի վերայ ձեր յաւուր յայնմիկ։ Յոր և

աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն Աստուած մեր՝ մինչև լցցէ զամենայն հաճութիւն բարութեան. և զգործս հաւատոցն զօրութեամբ։ Զի փառաւորի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեզ՝ և դուք ինձմ. ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Ողջունեմք զձեզ եղբարք՝ վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և մերոյ ժողովելոյն առ նա։ Մի վաղվաղակի խռովիլ ձեզ ի միտս. և մի՛ զարհուրիլ. մի՛ հոգւով՝ և մի՛ բանիւ, և մի՛ թղթով իբրև թէ ի մէնջ. որպէս եթէ եկեալ հասեալ իցէ օրն Տեառն։ Մի ոք զձեզ խաբեսցէ՝ և մի՛ իւիք իրօք։

Ալէլուիա։ Տէր լսեր աղօթից իմոց. և աղաղակ իմ՝։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի. ինքն միայն կեայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր

եան եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Եթէ
ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։
Նայց այժմ անձն իմ խռովեալ է. և զի՞նչ
ասացից. եթէ Հայր ապրեցո զիս ի ժամէ աս-
տի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ես ի
ժամս յայս։ Հայր փառաւորեա զանուն քո.
եկն բարբառ յերկնից՝ և փառաւոր արարի, և
դարձեալ՝ փառաւոր արարից։ Եւ ժողովուրդն
որ կայր և լսէր, ասէին որոտումն լինի. կէսքն
ասէին, հրեշտակ խօսեցաւ ընդ նմա։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ, ոչ վասն իմ ինչ
եկն բարբառս այս, այլ վասն ձեր։ Այժմիկ
դատաստան է աշխարհիս այսորիկ. այժմիկ իշ-
խան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս։ Եւ
ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին
ձգեցից առ իս։ Զայս ասէր, նշանակեալ՝ թէ որով
մահու մեռանելոց իցէ։ Պատասխանի ետ նմա
ժողովուրդն, մեք լուաք յօրինացն եթէ Քրի-
ստոսն յաւիտեան կայ. և դու զիա՞րդ ասես
եթէ պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ. ո՞վ
է այն Որդին մարդոյ։ Ասէ ցնոսա Յիսուս.
փոքր միւս ևս ժամանակ լոյս ընդ ձեզ է. գը-
նացէ՛ք՝ մինչդեռ զլոյսն ունիք. զի մի՛ խաւար
ձեզ հասցի. զի որ գնայ ի խաւարի, ոչ գիտէ
յո՞ երթայ։ Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝
հաւատացէ՛ք ի լոյսն. զի որդիք լուսոյ եղիջիք։

Ե– Ապիա–ափն ժողովէ։ Վասն ի վերուստ խաղալ՝։

Ե– Բահանայն ասէ զվ.ղօքս։

Տէր Ամենակալ յաւիտենական, անսկիզբն և
անպատճառ յամենայնի. կատարեալ զօրու-
թիւն, ինքնագոյ բնութիւն. Հայր ամենակալ՝
հանդերձ միածնիւդ քով և կենդանարար Հոգ-
ւովդ սրբով. միաբուն զօրութեամբ առեալ հոգ
յերկրէ՝ արարեր զմարդն և բնակեցուցեր զնա
ի բարեվայելուչ և ի սաղարթազարդ դրախ-
տին փափկութեան. ուր ոչ գոյր պէտք դեղոց.
զի ոչ գոյին իսկ ախտք հիւանդութեանց և ոչ
մահ. քանզի մերժեալք էին ցաւք և տրտմու-
թիւնք և հեծութիւնք. վասն զի ամենակեցոյց
աչք քո հանապազ ի վերայ նորա հայէին։ Եւ
որս ճոխացեալ Ադամայ՝ մոռացաւ զպատուի-
րանադրութիւն քո զոր եդեր նմա. և հաւա-
նեալ կնոջն գաւաճանութեան օձին ի բանսար-
կուին հնարից, որ խորամանկութեամբն իւրով
ի պատճառս աստուածանալոյ ընկէց զնա ի
փառաց վայելչութեան նորա։ Իսկ դու Տէր
Ամենաւած մեր բարեգութ և ողորմած՝ հանեալ
եդեր զնա արտաքոյ դրախտին փափկութեան
յերկիր ուստի առաւ։ Եւ իբրև տիրեալ այն-
պէս բռնութեան չարին ի բոլոր ազինս՝ որով
ամենեքեան ծառայեցին մահու, ապա զթացար

հայրախնամ ողորմութեամբ քով. ընդ հարսն մեր հաճեցար, և կոչեցեր զքեզ Աստուած Աբրահամու՝ Իսահակայ և Յակոբայ՝ Աստուած կենդանեաց և մեռելոց. վասն զի ամենեքեան քեզ կենդանիք են։ Զանազի տեսեալ ամենաբաւ մարդասիրութիւնդ քո զաշխարհս ամենայն կործանեալ ի պատրող թշնամւոյն, առաքեցեր զմիածին Որդիդ քո մարմնանալ ի մերմէ բնութենէս։ Որոյ եկեալ էառ զկերպարանս ծառայի ի սուրբ և յանշաղախ կուսէն Մարիամայ. և կրեալ ի մարմնի իւրում զամենայն պարտիս մեր՝ զոր պարտ էաք վասն յանցանաց նախահօրն, ելիալ բևեռեցաւ կամօք իւրովք ի վերայ խաչափայտին՝ ընդ որում սպան զթշնամութիւն մեր, և եբարձ զնայելոց մերոց. լինելով ի գերեզման՝ աւերեաց զբռնութիւն մահու հզօր զօրութեամբ իւրով. յարուցեալ յերրորդ աւուր՝ նստաւ ընդ աջմէ քումմէ. և մեզ խոստացաւ յարութիւն՝ հաւատացելոցս յամենատուրը Երրորդութիւնդ՝ ի միասանդամ պատառեանն իւրում փառօք Հօրդ և հրեշտակօք սրբովք ի յաւուրն յեռանումն։ Եւ արդ՝ Տէր Աստուած ամենակալ, գիմ ի ծառայս քո՝ որ եթող զանցաւոր զկեանս իւր քոս հրամանի քով. և զարձաւ ի հող ուստի առեղծաւ։ Խոկ ժողովեալ ծառայքս քո ի տեղի հանգստեան սորա՝ ազաչեմք և խնդրեմք

ի քէն, առաքեա զՀոգիդ քո սուրբ ի վշտացեալս սրտիւք, և բժշկեա զվէրս հոգւոց և մարմնոց. զի դու ես Տէր Աստուած՝ որ հարկանես և բժշկես. և ոչ ոք է որ հանէ զմեզ ի ձեռաց քոց։ Այցելեա Տէր և բարերարեա ի վերայ մեր, ծագելով առ մեզ զառաւօտու զօրմութիւնս քո՝ զգաստացեալ զսուտ լոյս երեկոյին, առ ի ցնծութիւն առաւօտուն մեծի՝ յորժամ կոչես զընտրեալս քո ի մահուանէ ի կեանսդ յաւիտենից։ Ընկալ Տէր և գաստուրեա զծառայս քո ընդ սուրբսդ քո, բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին. զի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և՛։

Աղաչող-ինձ ածնեցո՛ւ
Աստուածոյ եպիսկոպոսե՛ցո՛ւ։

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ վասն ճշմարտութեան քոյ՝ լուծեր ի հող ըզմահկանացու բնութիւնս մեր, զպատրեալս ի բանսարկու թշնամւոյ. որում ասացեր իսկ աստուածային բանիւ քով, եթէ հող էիր և ի հող դարձցիս. ըստ որում խոնարհեցան անձինք մեր, և յերկիր կցեցան ծնգք մեր։ Այլ զի միասանդամ կամեցար նորոգել և կեցուցանել զմեզ, դու ինքնին առաքեցար ի հայրական ծոցոյ. իջեր

ի գերեզմանն՝ և ընդ մեռեալս համարեցար, զի զմեզ նմանակից արասցես քեզ և հաղորդ աստուածութեան քոյ ի փող յետին, յայնմ դիշերի՝ յորում գաս պատկել զաշխատեալքս քո՝ և հատուցանել արդար դատաստանաւ քով։ Յայնմ աւուր գթած ի հոգի հանգուցելոյս՝ և հանգի՛ ընդ սուրբս քո յարքայութեան քում։ Եւ զմեզ արժանի արա փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ այժմ և միշա՛՛։

Ապա ասէն. Աստուած անեղ անմահա՛՛։ ա. պատ. երգէ։ Հոգւոյ՛՛։ և օրհնէն զքրիստոնեան. Օրհնեսցի և հիացեալ պահեսցի՛՛։ (Պրպէս եղեալ գոյ յառաջին աւուրս կրկին ի վերն։) Ձինի ասէ. Հայր մեր որ յերկինս՛՛։

Կանոն Երրորդ աւուրն։ Երթան ի գերեզմանն, և ի գնալն ասեն զԱմբիծան, և զՅօնանաս ի նաղումեանն. (որպէս և յերկրորդ օրն։) Ապա ասեն զՀանգստեան շարական, և զփառք ի բարձունսն, և հող. ընդն ի վերայ գերեզմանին։ Եւ ապա այս կանոն կատարի։

Սաղմոս ճիվ։ Ի խորոց կարդացի առ քեզ Տէր Տէր լսե՛՛։ Եղիցին ականջք քո ի լսել ղձայն՛՛։

Ընթերցուած յԱռաքելոյ մարգարէ է։

Այսպէս ասէ Տէր, մոռասցին զնեղութիւնս առաջինս, և ոչ ևս անկցի ի սիրտս նոցա։ Զի եղեցին երկինք նոր և երկիր նոր. և ոչ ևս յիշեսցեն զառաջինսն, և ոչ ևս անկցի ի սիրտս նոցա. այլ ուրախութիւն և ցնծութիւն գտցեն ինձ՝ զոր ես հաստատեցից։ Եւ զարձցին՝ և եկեսցեն ի սիօն ցնծութեամբ, և ուրախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա. զի ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն և ցնծութիւն, և ուրախութիւն հասցէ նոցա. մերժեցան ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք։

Պօղոսի առաքելոյն ի կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս։

Եթէ յարեայք ընդ Քրիստոսի, ապա լըզվերինն խնդրեցէ՛ք, ուր Քրիստոս նստի ընդ

ամէն Աստուծոյ. Ձվերինն խորհեցարուք, մի՛ զայս՝ որ յերկրի ասա է։ Վասնզի մեռայք՝ և կեանքն ձեր ծածկեալք են ընդ Քրիստոսիւ Աստուածոյ։ Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի, կեանքն ձեր. յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք։

Ալէլո-յա։ Զայնիւ խնդով եւ առ Տէր կարդացի՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ամէն՝ ամէն՝ ասեմ ձեզ՝ որ ամենայն ինչ որ խնդրեսջիք ի Հօրէ յանուն իմում՝ տացէ ձեզ։ Մինչեւ ցայժմ ոչ խնդրեցէք ինչ յանուն իմում։ Խնդրեցէք՝ և առցուք, զի ուրախ լիցի ձեր։ Առակս այսոսիկ խօսեցայ ընդ ձեզ։ Եկեսցէ ժամ՝ յորում ոչ առակս խօսեցայց ընդ ձեզ, այլ յայտնապէս վասն Հաւր աւետեսցեմ ձեզ։ Յայնմ աւուր՝ յանուն իմում խնդրեսջիք, և ոչ ասեմ ձեզ՝ թէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր։ Զի ինքն Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցէք, և հաւատացէք, թէ ես ի Հաւրէ ելի։ Ելի ի Հաւրէ, և եկի յաշխարհս։ Եւ դարձեալ թողից զաշխարհս, և երթիցեմ առ Հայր։ Ասեն ցնա աշակերտքն իւր՝ Ահա արդ յայտնապէս խօսիս, և առակս ոչ ասես։ Արդ գիտեմք, թէ գիտես զամենայն, և ոչ պիտի է քեզ զի հարցանիցէ զքեզ ոք։ Ընդ այսմ հաւատամք, թէ ի Հաւրէ ելեր։ Պատասխանի ետ նոցա Յիսուս՝ Արդ հաւատայք։ Ահա գայ ժամ, և հասեալ է արդ, զի ցրուեսջիք դուք իւրաքանչիւր յիւրոց, և զիս միայն թողուցուք։ Եւ ոչ եմ միայն, զի Հայր ընդ իս է։ Զայս ասացի ձեզ, զի ի ինձ խաղաղութիւն ունիցիք։ Յաշխարհի նեղութիւն կրեսջիք, այլ քաջալերեցարուք, ես յաղթեցի աշխարհի։

Ամէն։

Ամենազօր Տէր՝ որ իշխանդ եւ կենաց և մահու. և մարդասիրաբար խոնարհեցար ի մահկանացու բնութիւնս մեր. մինչև ի գերեզման իջանելով զփշրած առեր անապականն և աստուածային մարմնովդ զմերոյ բնութեանն՝ առանց մեղաց։ Ընդ ընկալ զխոստովանող մարմինս որոշեալ ի հոգ ըստ զարձի մահկանացու բնութեանս, որ ի քէն ընկալաւ զդատաւճիռս։ Եւ ողորմութեամբ քով շնորհեա ժառայիս քոյ յարդար դատաստանիդ բարւոք պատասխանատուութեամբ կալ առաջի ահաւոր բեմբիդ՝ և ընդունիլ զողորմութիւն ընդ սուրբս քո. և փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ՝ այժմ և՛։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աղօթեցարուք։

Որ աղքիւրդ եա կենաց և պարգև՝ որք ճշմարտապէս ճանաչեն զՀոգիդ սուրբ. որով կընքեցեր

կամիմ, զի ուր եմ եմ, և նոքա իցեն ընդիս. զի տեսանիցեն զփառսն իմ զոր ետուրն ցիս, զի սիրեցեր զիս յառաջ քան զլինիլ աշխարհի։

Ֆալպս։ Վասն ուղղելոյ զդնացս մեր՛։

Եւ ասէ զՂօթս։

Ամենազօր Տէր՝ որ իշխանդ եա կենաց և մահու. և մարդասիրաբարձ խոնարհեցար ի մահկանացու բնութիւնս մեր. մինչև ի գերեզման իջանելով զփշրած առեր անապականն և աստուածային մարմնովդ զմերոյ բնութեանն՝ առանց մեղաց։ Ընդ ընկալ զխոստովանող մարմինս որոշեալ ի հոգ ըստ զարձի մահկանացու բնութեանս, որ ի քէն ընկալաւ զդատաստիկս։ Եւ ողորմութեամբ քով շնորհեա ժառայիս քոյ յարդար դատաստանիդ բարւոք պատասխանատուութեամբ կալ առաջի ահաւոր բեմբիդ՝ և ընդունիլ զողորմութիւն ընդ սուրբս քո. և փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ՝ այժմ և՛։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աղօթեցարուք։

Որ աղբիւրդ եա կենաց և պարգև՝ որք ճշմարտապէս ճանաչեն զՀոգիդ սուրբ. որով կընքեցեր

քեցաւ ծառայս քո (այս անուն) քահանայ ի սուրբ աւազանին՝ ղեկնլով զքո ղրոշմ. և պաշտելով զհաւատ սուրբ քրիստոնէութեան՝ արժանի եղև քո առատապարգև շնորհիդ քահանայական կոչմանս այսորիկ. և ի կատարման իւրում յուղարկեցաք քո յուսովդ ի հանդերձեալ յաշխարհն։ Աղաչեմք զքեզ բարերար և բազումողորմ Աստուած Հոգիդ սուրբ. մի՛ թողուր զսա ի պահպանողական զօրութենէդ քումմէ արտաքս. այլ հանդիպեսջէ ի պատրաստ բնակութիւնդ՝ ուր զսուրբս քո ժողովես և հանգուցանես, և պահպանես յանդորրութեան։ Եւ յորժամ առաքիս ի սրբութենէդ քումմէ ի նորոգել զերեսս երկրի, և ստանաս զքո զընտրեալն, խառնեա զսա ի դասս ընտրելոց քոց. անցո՛ զպատուհասիս. զերծո՛ ի դատապարտութենէ մեղաց։ Որպէս զի՝ քեզ յանձն առնելով զհոգի սորա՝ հաւատասցուք լսելի լինիլ աղօթից մերոց. զի դու ես կենդանարար և նորոգիչ հոգւոց մերոց. և քեզ վայելէ փառք հիւանու"։

Ամէն գործեալ"։ Երգ։ Հոգւոյ"։ Ե- կնդեն զգեցեալքն, և ասեն՝ Հայր մեր որ յերկինս ես"։

Կանոն Չորրորդ աւուրն։ Երթան ի գերեզմանն, և ասեն զԱմբիծսն, և զՇարական հանգստեան, և զփառք ի բարձունսն, և Հող ընդ ի վերայ գերեզմանին, (որպէս և յանցեալ աւուրսն։) Եւ այս կանոն կատարի։

Սաղմոս կոչէ. Ձիւք։ Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ"։ Տէր լսեսցէ աղօթից իմոց, ունկն դիր"։

Ընթերցուած յայտնեալ մարգարէ է։

Զարթիր, զարթիր Երուսաղէմ և զգեցիր զզօրութիւն բազկի քոյ՝ զարթիր իբրև յաւուրցն ի սկզբանէ՝ իբրև յազգացն յաւիտենից. ո՞չ դու այն ես՝ որ տաշեցեր զլայնութիւնն, վանեցեր զվիշապն։ Ո՞չ դու այն ես՝ որ աւերեցեր զծովն զբազմութիւն ջուրցն անդընդոց. որ արարեր զխորս ծովու ճանապարհ անցից փրկելոցն և ապրելոց։ Չի ի ցեւառնէ եղեցի դարձ. և եկեսցեն ի սիօն ցնծութեամբ և ուրախութեամբ յաւիտենից. զի ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն. և ուրախութիւն հասցէ նոցա. մերժեցան ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք։

Պօղոսի առաքելոյն ի Փիլիպպեցւոց թղթոյն է ընթերցուածս։

Ամէն որ ինչ ինձ շահն է՝ զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի։ Այլ և համարիմ իսկ զամենայն վնաս վասն առաւել գիտութեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն իմոյ։ Վասն որոյ զամենայնէ զրկեցայ՝ և համարիմ կղկղանս, զի զՔրիստոս շահեցայց և գտայց ի նմա։ Եթէ ոչ եթէ զիմ արդարութիւն, որ յօրինաց անտի է ունիցիմ, այլ զհաւատոցն Քրիստոսի Յիսուսի. որ յԱստուծոյ արդարութիւնն է։ Հաւատովք ճանաչել զնա՝ և զզօրութիւն յարութեան նորա՝ և զհաղորդութիւն չարչարանաց նորա՝ կերպարանակից լինիլ մահու նորա. թէ ուրպէս հասից ի մեռելոցն յարութեան։ Ոչ ասի և փրկչին ակն ունիմք Տեառն Յիսուսի Քրիստոսի. որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ կերպարանակից լինիլ մարմնոյ փառաց իւրոց. ըստ զօրութեան՝ առ ի կարող լինելոյ ինքնագործեցուցանել ընդ իւրև զամենայն։

Ալէլո-նայ։ Սաղմոս ճԺե. Հաւատացի՝ զոր և խօսեցայ՝։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ասէ Յիսուս. եթէ դուք կացջիք ի բանին իմում՝ ճշմարիտ աշակերտք իմ էք. և ծանիջիք զճշմարտութիւնն. և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ։ Պատասխանի ետուն և ասեն. զաւակք Աբրահամու եմք, և ոչ ումեք երբէք ծառայեցաք, զիա՞րդ ասես եթէ ազատք լինիջիք։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ամենայն որ առնէ զմեղս, ծառայէ մեղաց։ Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ ի տան. իսկ որդին յաւիտեան կայ։ Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք։

Փառք. Վասն գտանելոյ մեզ զքնարս՝՝։

Եւ քահանայն ասէ զՎ.զօթս։

Տէր Աստուած մեր, ամենայն իրօք արդարք դասեալք ընդ հրեշտակս՝ զուգահաւասարեալ զքեզ օրհնեն, մինչ հեշտացուցանես զնոսա յաւէժ պայծառութեամբ քով. և իւրաքանչիւր որ պայծառանայ վայելուչ փառօք աստուածութեան քոյ՝ տեսանելով զինքն որպէս զլուսաւոր հրեշտակս. այնուհետև փախստական լինին ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք, պատրաստութեամբ լուսոյ և խընդութեամբ քով Տէր։ Քանզի և Մովսէս ի միում մըն վայրկենի տեսող եղեալ փառաց քոց Տէր ի վերայ երկրի՝ մինչ էր ի մահկանացու մարմնի մեր, ոչ կարէին հայիլ յերեսս նորա. իսկ

որք արժանի լինիցին հայել յերեսս քո Ա-
տուած, որպիսի արդեօք լինիցին։ Ո՛րդ՝ ուրա-
խութեամբ գոհանամք զքէն Տէր, որ արժանի
արարեր զմեզ մասին ժառանգութեան վիճակի
սրբոցն ի լոյս. և փրկեցեր զմեզ յիշխանու-
թենէ խաւարի. և փոխեցեր յարքայութիւն
Որդւոյ քոյ սիրելւոյ Տեառն մերոյ և փրկչին
Յիսուսի Քրիստոսի։ Որում վայելէ փառք
իշխանութիւն և պա՛՛։

Խաղաղ-ընդ-ամենեցուն

Ապա-ձայն երկրպագեսցո՛։

Անկանիմք առաջի քոյ մարդասիրութեանդ,
և աղաչեմք զքո պիտութիւնդ. հայեաց Տէր ո-
ղորմութեամբ քով ի հոգի ննջեցելոյս այսորիկ։
Բազմադթութ Տէր՝ որ յոյսդ ես հաւատացելոց,
ներեա յանցանաց սորա և թող սմա բարե-
խօսութեամբ ընտրելոց քոց. ներող և երկայ-
նամիտ Տէր, քաղցր և բազումողորմ Ա՛ստուած,
ի գալստեան Որդւոյ քոյ՝ որ ճաշակեաց զմահ
և էջ ի գերեզման, զի հանցէ զկապեալսն քա-
ջութեամբ իւրով։ Եւ այժմ Տէր Ա՛ստուած,
զհոգի հանգուցելոյս, և յիշեա զսա յա-
ւուրն այցելութեան. և դասաւորեա ընդ սուրբս
քո։ Ընդ որ օք և մարդասիրութեամբ Տեառն

մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում
վայելէ փառք իշխանութիւն և պա՛՛։

Ձանձ պարհ մեղուցեալ՛՛։ Ելգ։ Հոգւոյ՛՛։ Ե- կին պետեղմանն.
և ասէն՝ Հայր մեր որ յերկինս ես՛՛։

Կանոն Հինգերորդ աւուրն։ Երթան ի գերեզմանն, և ասեն զՄխիթ-
արեան, և զԸարական Հանգստեան, և զփառք ի բարձունսն, և Հող ընդ
ի վերայ գերեզմանին, (որպէս և յանցեալ աւուրսն) Եւ այս կանոն
կատարի։

Սաղմոս՝ Լթ։ Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօ՛՛։ Բարձր
առնեմ զքեզ Տէր. զի ընկալար՛՛։

Ընթերցուածս յՀեսայեայ մարգարէէ։

Այսպէս ասէ Տէր, ո՛չ ևս եղեցի քեզ արե-
գակն ի լոյս տունջեան, և ոչ ծագումն լուսնի
տացէ քեզ զլոյս ի պիշերի. այլ եղեցի քեզ
Տէր լոյս յաւիտենական՝ և փառք քո Ա-
ստուած։ Ո՛չ մոցէ քեզ արեգակն. և լուսին
ի քէն մի՛ պակասեսցի. և եղեցի քեզ Տէր լոյս
յաւիտենական։

Պօղոսի առաքելոյն ի Հռոմայեցւոց Թղթոյն է ընթերցուածս։

Իսկ եթէ Քրիստոս ի ձեզ է՝ ապա մարմին
մեռեալ է վասն մեղաց. և հոգին կենդանի
վասն արդարութեան։ Եթէ հոգի այնորիկ՝ որ

յարոյցն զՅիսուս ի մեռելոց՝ բնակեալ է ի ձեզ. ապա և որ յարոյց զՅիսուս Քրիստոս ի մեռելոց՝ կենդանացուսցէ և զմահկանացու մարմինս ձեր բնակեալ Հոգւովն իւրով ի ձեզ։ Ընդ սուհետև եղբարք՝ պարտապան եմք՝ ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ։ Զի եթէ ըստ մարմնոյ կեցջիք, մեռանելոց էք. իսկ եթէ Հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք։ Զի որք Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ։

Ալէլ-եյ։ Սաղմ. ճԺզ. Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք"։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Զգոյշ լերուք անձանց. գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ և Հոգւոյ աշխարհականօք. և յանկարծակի Հասանիցի ի վերայ ձեր օրն այն։ Զի իբրև որոգայթ Հասանիցի ի վերայ ամենեցուն, որք բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Արթուն կացէք այսուհետև. և յամենայն ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայնմ յամենայնէ, որ լինելոց է. և կալ առաջի Որդւոյ մարդոյ։ Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր. և զգիշերս ելեալ ագանէր

ի լերինն՝ որ կոչիւր ձիթենեաց։ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ի տաճարն լսել ի նմանէ։

Փաթող. Խնդրեսցուք Հաւատով միաբա"։

Եւ քահանայն ասէ զԱղօթս։

Քահանամբ զքէն ճշմարիտ Աստուած, որ ծանուցար ազգի մարդկան՝ զիմաստով ի տեղծուածս անարատ ձեռաց քոց. առաքեցեր զՈրդիդ քո սիրելի, որ եկն և էջ ի գերեզման. զդրունս դժոխոց խորտակեաց կենսաբեր յարութեամբն իւրով. և քաղցր ձայնիւ կոչեաց առ ինքն ասելով, եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք՝ և ես Հանգուցից զձեզ։ Հանգո՛ Տէր Աստուած զննջեցեալս զայս ի ձեռն միածնի քոյ, զհաւատացեալս ի քեզ՝ զոր գնեաց պատուական արեամբն իւրով. և արժանաւորեա յաւուր միանգամ գալստեանդ՝ լսել զձայն երկնաւոր կոչմանդ որ ասէ, եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն։ Եւ զմեզ զժողովուրդս քո՝ որք եկեալ եմք աղաչել զքեզ, պահեա ամենազօր աջովդ քով մինչև յօր կոչման քոյ։ Զի զքեզ փառաւորեսցուք ճշմարիտդ Աստուած՝ Հանդերձ Որդւով և ամենասուրբ Հոգւովդ. այժմ և միշտ և յաւի"։

Հինգերորդ աւուրն Կանոն։

Խաղաղո–ւթի–ն ա–ղաչե–ցո–ւ։

Ա–ռաջ–նոյ էկէղեցւո–յ։

Յիշեա Տէր զՀոգի քահանայիս այսորիկ առաջի սուրբ փառացդ քոց. և եթէ մարդկօրէն ինչ յանցեալ իցէ սորա, բանիւ, կամ գործով, կամ մտածութեամբ, ընդունելո՛ւ յանցանաց սորա զթողութիւն. որ ոչ յումեքէ արգելուս զթողութիւն քո։ Ընկալ զՀոգի սորա ընդ սուրբս քո. և զմեզ արժանի արա փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ՚՚։

Ժողովեալքս՚՚։ Եւթ։ Հոգւոյ՚՚։ Ե–ւ ինչէն զԵկեղեցանն, և առեն՝ Հայր մեր որ յերկինս ես՚՚։



Կանոն Վեցերորդ աւուրն, Երթան ի գերեզմանն, և ասեն զՄխիթարն, և զՇարական Հանգստեան, և զփառս ի բարձունսն, և Հոգ ընդ ի վերայ գերեզմանին, (որպէս և յանցեալ աւուրսն) Եւ այս կանոն կատարի։

Սաղմոս ճԺգ։ Սիրեցի զի լուիցէ Տէր՚՚։ Շրջեցան զինեւ՚՚։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։

Եւ ասասցեն յաւուր յայնմիկ. ահաւասիկ Տէր Աստուած մեր, յոր յուսացեալ էաք. և ապրեցուսցէ զմեզ. զի սա է Տէր. և սպասէաք սմա. և ցնծասցուք՝ և ուրախ եղիցուք ի փրկութեան մերում։ Եւ տացէ մեզ զհանգիստ Աստուած ի լերին սրբութեան իւրոյ. և մոցէ ինձ ժողովուրդ, որ պահէ զարդարութիւն և առնէ զճշմարտութիւն. վերակացու լեցի նոցա, և պահէ ի խաղաղութեան։ Եւ արդ մխիթարեցից զձեզ ասէ Տէր յամենայն տրտմութեանց ձերոց։

Յակոբոս աւետարանչն ի կաթուղիկեայսդ թղթոյն է ընթերցուածս։

Երկայնամի՛տ լերուք եղբարք իմ մինչև ի գալուստն Տեառն. ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչև առցէ զկանուխ և զանապականն։ Երկայնամտեցէ՛ք

և դուք. Հաստատեցէ՛ք զսիրտս ձեր՝ զի գալուստ Տեառն մերձեալ է։ Մի՛ արտմեցուցանէք զմիմեանս եղբարք՝ զի մի՛ դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ դուրս կայ։ Օրինակ առէք եղբարք չարչարանաց և երկայնամտութեան ըզմարգարէսն՝ որք խօսեցան յանուն Տեառն։ Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւնն Յոբայ լուարո՛ւք՝ զկատարումն Տեառն տեսէ՛ք. զի բազմագութ է Տէր և ողորմած։

Ալէլո՛ւյա։ Սաղմոս իԹ. Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկի՛ր։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ. և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց, ի ծագաց երկնից մինչև ի ծագս նոցա։ Ի թզենւոյ անտի ուսարո՛ւք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղեսցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մե՛րձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մե՛րձ է ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամենայն եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն։

Քարոզ, վասն գառանելոյ մեզ զՆոյրն՛։

Եւ ասէ զԱզօխ։

Փառաւորեմք զքեզ փառաց Թագաւոր, յոյս և ակնկալութիւն ամենայն արարածոց. ի քեզ յուսով յուսացաք։ Որ փոխանակ ապականացու կենցաղոյս, զանապական և զանվախճան կեանսդ շնորհեցեր. և փոխանակ մնոտի և արբանական կենացս, պարգեւեցեր մեզ զվերինն երանաւէտ։ Վ՚անորոյ աղաչեմք զքեզ Տէր. Թո՛ղ զմեզ՝ և քաւեա զանօրէնութիւնս սորա, և արժանաւորեա զսա հանդչել յանապատում ուրախութիւնդ, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում վայելէ փառք իշխանու՛։

Ալէլո՛ւյա։ Սաղմոս իԹ. Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկի՛ր։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Աղաչեմք զքեզ ողորմած Աստուած, զթա՛ի հոգի ննջեցելոյս (այս անուն) քահանայիս. որ ի ձեռն կոչման քոյ փոխեցաւ յանցաւոր աշխատութենէս՝ հաւատացեալ ի ճշմարիտ Աստուած. և ընդեա զձեռագիր անօրէնութեան սորա զոր յանցեալ իցէ առաջի քոյ. և զրեա զանուն սորա ի գրքի կենաց. զի դու ես կեանք և յարութիւն մեռելոց։ Եւ զհաւատացեալ ժողովուրդս ընդ հովանեաւ բազկի քոյ

պահեա Քրիստոս Աստուած մեր։ Եւ քեզ հանցո՛ւք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ՝՝։

Աստուած անե՛ղ՝՝։ Երգ։ Հոգւոյ՝՝։ Եւ կնդիան զբեզեզմանն. և ասէն՝ Հայր մեր՝՝։

Կանոն Եօթներորդ աւուրն։ Երթան ի գերեզմանն. և ասեն զԱմբիծան, և զՀարական Հանգստեան, և զփառք ի բարձունսն. և Հող ընեն ի վերայ գերեզմանին, (որպէս և յանցեալ աւուրն։) Եւ այս կանոն կատարի։

Սաղմոս. Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսՙ՝։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէ է։

Եւ կատարեսցին աւուրքդ սգոյ քոյ. և ժողովուրդ քո ամենևին արդար. և յաւիտեանս ժառանգեսցեն զերկիր. պահել զնորատունկս գործոց ձեռաց իւրեանց ի փառս։ Սակաւատոհմն հազարաւոր եղիցի, և կրտսերն յազգ մեզ մեծ. զի ես Տէր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա։ Հոգի Տեառն ի վերայ իմ՝. վասն որոյ և էօծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զբեկեալս սրտիւք՝ քարոզել գերեաց զթողութիւն՝ և կուրաց տեսա-

նել։ Կոչել ամ Տեառն ընդունելի. և օր հատուցման Աստուծոյ մերոյ. մխիթարել զամենայն սգաւորս։ Տալ սգաւորաց սիօնի փառս, փոխանակ մոխրոյն օծումն ուրախութեան. և սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վհատութեան. և կոչեցին նոքա ազգք արդարութեան՝ տունկ Տեառն ի փառս։

Պետրոսի առաքելոյն ի կաթուղիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Որպէս ամենայն ինչ մեզ իւրոյ աստուածեղէն զօրութեանն առ ի կեանս և յաստուածպաշտութիւն շնորհեալ, ի ձեռն գիտութեանն այնորիկ՝ որ կոչեացն զմեզ յիւր փառան և վայելչութիւն։ Որով մեծամեծքն և պատուականք աւետիք պարգեւեալք են մեզ, զի նոքիմբք աստուածեղէն բնութեանն լինիմք հաղորդակից։ փախուցեալք ի ցանկութեանց աշխարհիս և յապականութենէ։ Եւ սմին այսմիկ զամենայն փոյթ ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարարեսջիք զառաքինութիւն, առաքինութեամբն զգիտութիւն։ Եւ գիտութեամբն զժուժկալութիւն. և ժուժկալութեամբն զհամբերութիւն. և համբերութեամբն զաստուածպաշտութիւն։ Եւ աստուածպաշտութեամբն զեղբայրսիրութիւն. և եղբայր-

սիրութեամբն զսէր։ Զայսոսիկ ձեր յանձին կալեալ և ի սոյն յաճախեալ՝ ոչ պատարկս և անպտուղս զձեզ հաստատիցեն ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պիտութիւնն։

Ալէլ-է։ Տէր լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդր՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս և յաշակերտաց անտի նորա երկու։ Եւ նայեցեալ ընդ Յիսուսի զի գնայր, ասէ. ահաւասիկ Քրիստոս Գառն Աստուծոյ։ Լուան ի նմանէ երկու աշակերտքն զի խօսէր. և գնացին զհետ Յիսուսի։ Իբրև դարձաւ Յիսուս և ետես զնոսա զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. զի՞նչ խնդրէք. նոքա ասեն ցնա, ռաբբի, որ թարգմանեալ կոչի վարդապետ. ո՞ւր են օթեվանք քո։ Ասէ ցնոսա՝ եկայք և տեսէք, եկին, և տեսին ուր էին օթեվանք նորա. և առ նմա ապան այն օր. զի ժամ էր իբրև տասներորդ։ Էր Ընդրէաս եղբայր Սիմոնի վիմի, մի յերկուց անտի. որք լուան ի Յովհաննէ՝ և գնացին զկնի նորա։

Ֆպող. վասն գառանելոյ մեզ՛։

Եւ քահանայն ասէ զՊօղմս։

Արարչագործ Աստուած՝ որ մարդասիրութեամբդ քո խոնարհեցար յերկնից. զկերպանս ծառայի առեր. եղեր մարդ անճառ միաւորութեամբ վասն մերոյ փրկութեան. չարչարեցար՝ բևեռեցար ի խաչին. զմահ ճաշակեցեր. եղար ի գերեզմանի. և յարուցեալ երեքօրեայ՝ աղատեցեր զաղգս մարդկան ի մահուանէ։ Ծառայս քո զոր ընտրեցեր ի քահանայութիւն, խրատել ի հրահանգս աստուածպաշտութեան զփրկեալ քո ժողովուրդս. որ էառ զկարգ հրեշտակաց. և ծառայեաց եկեղեցւոյ քումմ սրբոյ՝ հանապազ զփառաբանութիւն մատուցանելով ամենասուրբ Երրորդութեանդ. արդ ըստ անսուտ բանի քոյ դարձաւ ի հող ուստի առաւ։ Եւ արդ Տէր բարերար՝ ընկալ զաղաչանս մեր ամենեցուն ի հաճոյս քո. և խառնեա զհոգի սորա ի գունդս ամենայն մարտիրոսաց։ Մի՛ ամաչեսցէ սա ի հրապարակախօս առենի քոյ. զի զու միայն ես առանց մեղաց՝ և քաւիչ մեղուցելոց։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պա՛։

Խաղաղ-ի-ն ամէնց-ո-ն
Աստ-ծոյ երէկ պ-ե-ց-ո-ւ։

Բարերար Աստուած՝ և ամենայն բարեաց առաջնորդ. որ յօրինեցեր զմեզ ճանապարհ

կենաց և արդարութեան. զի դու իսկ գնացեր մարմնով ընդ անձուկ ճանապարհս, և նովաւ չանացան սիրելիք քո նեղութեամբ մարմնոյ մտանել ի հանգիստ քո սուրբ։ Որպէս ծառայ քո այս՝ որ ընտրեաց բարի յօժարութեամբ հրաժարիլ յաշխարհէ. և ոչ պարապեցաւ ի յաւելորդ զբաղմունս. այլ խոնարհեցաւ ընդ լծով ծառայութեան պատուիրանի քոյ. և տանջեցաւ ի ճգնութիւնս համբերութեան պահոց և ծարաւոյ, ոչնութեան և առօթից. և այժմ ի հրամանէ ակնարկութեան քոյ աւարտեցաւ ի մարմնի։ Եւ մեք ժողովեալք ի յուղարկումն եղբօրս մերոյ, լալով և արտասուօք՝ հողով գհոգս ծածկեմք, և աղօթիւք գհոգի սորա յուղարկեմք ի ձեռն քահանայական չնորհիս։ Որով պաղատիմք առ քեզ Տէր Աստուած մեր՝ հայեաց ի բարձրութենէ քումմէ ի խոնարհ քո ժողովուրդս. և ընկալ զաղաչանս մեր՝ զոր մատուցանեմք վասն վախճանի եղբօրս մերոյ։ Մի լեցի իշխանութիւն սատանայի և դիւաց նորա ի վերայ սորա. և մի՛ արտմեցուսցէ գհոգի սորա հոգի չարութեան. այլ հոգի քո բարի առաջնորդեսցէ սմա յերկիր ուղիղ. և յոտաւ հանդիցէ՛ ի դասս սրբոց քոց և յերևելի փառս քո՝ Քրիստոս Աստուած փրկիչ մեր։ Տո՛ւր սմա համարձակութեամբ կալ առաջի աստուածութեանդ քոյ.

անտեսս սրա զյանցանս սորա բարեգութ Տէր. զկամայ և զակամայ։ Մի մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քոյ. զի ոչ արդարանայ առաջի քոյ ամենայն մեղեալ. այլ ըստ մեծի ողորմութեանդ քոյ մարդասիրեա՝ և ընկալ ի յարկս սրբոց Հարցն. բարեխօսութեամբ սրբոյ Աստուածածնին, և սրբոյ քոց առաքելոց և մարգարէից՝ և սրբոց մարտիրոսացն։ Զի դու ես Տէր Աստուած բազումողորմ և մարդասէր. դատաւոր և փրկիչ և կարող յամենայնի. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պա՛՛։

Եթէ վախճանեալն Հայրապետ կամ Առաջնորդ իցէ, զայս Աղօթս ասս ընթերցիր։

Հայր երկնաւոր փրկիչ և ողորմած. որ ի նըմանութիւն քոյոյ պատկերիդ ստեղծեր զմարդն ի հողոյ. և կացուցեր զնա Տէր ի վերայ ամենայն ստեղծուածոց քոց. որ ի մարդկանէ ընտրեցեր մարգարէս և առաքեալս, հովիւս և վարդապետս. որս զծառայս քո (այս անուն) չնորհեցեր մեզ առաջնորդ և հովիւ հոգևոր, և այժմ

փոխեցեր ի մէնջ։ Շնորհեա սմա լինիլ ընդ սուրբս քո հանապազ. և զժողովուրդս քո յանձն արա ուղղափառ հովուի՝ զի հովուեցէ յերկիւղ քո սուրբ։ Եւ զտեղի բնակութեան սորա պահեա անդրդուելի յերեսի և յանեղբեւոյթ թշնամւոյն՝ մինչև յօր կրկնակի գալստեան քոյ։ Եւ զժողովուրդս քո օրհնեա և միխիթարեա. զի դու ես ճշմարիտ միխիթարութիւն յուսացելոցս ի քեզ։ Եւ քեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ՝ վայելէ փառք՝ իշխանութիւն և պա՛։

Խաղաղութեան աղեխցո՛ն

Աստուածոյ եկեղեցեացո՛ւ։

Փառաւորեմք զանճառ բարերարութիւնդ քո սուրբ՝ Որդի Աստուածոյ. որ լուսաւորեցեր զհաւատացեալս անուանդ քումմ սրբոյ. և փրկեցեր ի խաւարային իշխանութենէ և ի պայթակղութենէ սատանայի։ Գոհանամք զքէն Տէր, և աղաչեմք ամենայն սրտիւք մերովք. Հանգո՛ զծառայս քո (այս անո՛ւն,) որ կատարեաց զկեանս իւր խոստովանութեամբ քո. և գրեա՛ զանուն սորա ի դպրութիւն կենաց. և ընկեա՛ զձեռագիրս յանցանաց սորա։ Եւ զոր ինչ ի մեղանչական կենցաղումն մեղուցեալ իցէ սորա, բանիւ՝ կամ գործով՝ կամ մտածութեամբ.

ներեա՛ և թո՛ղ սմա քոյով բարերարութեամբդ։ Ընդունելի զքեզ մարդասէր Տէր՝ կարգեա՛ զհոգի սորա ընդ արդարս քո. և լուսաւորեալ պայծառացո՛ ընդ բարեգործողսն և ընդ ճշմարիտ պատուիրանապահսն քո։ Եւ որպէս արժանի արարեր զսա ուխտի կրօնից՝ և վարուց ժուժկալութեան՝ և ժառանգութեան սատիճանի սուրբ առաջնորդացն, արա՛ արժանի և նոցին սուրբ պսակացն, և կատարեա՛ ի բարի զինդրուածս ծառայից քոց. և հանգո՛ զհոգի սորա ընդ սուրբս քո. զի ընդ նոսին փառաւորեսցէ զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ և՛։

Ոհո գործեալ՛։ Երգ. (ե՛ն ենէ կախ գանձ ասա՛։) Հոգւոց՛։
Ե՛ն ինչէն պգերեզմանն, և ասէն՝ Հայր մեր՛։

Կանոն հնգետասան աւուրն, երթան ի գերեզմանն, և ասէն զԱմբիծան, և զՇարական հանգստեան ի ձայնէն։ Եւ այս կանոն կատարի։

Սաղմոս. Տէր լուր ազօթից իմոց. ազատակ իմ՛։

Ընթերցուած Յեսայեայ մարգարէ է։

Այսպէս ասէ Տէր. Հոգի յինէն ելցէ. և զամենայն շունչ ես արարի։ Ասան մեղաց առ սակաւ մի տրտմեցուցի զնա. հարի զնա՝ և

զարձուցի զերեսս իմ ի նմանէ. և տրտմեցաւ՝ և գնաց թախծեալ առաջի իմ զճանապարհս իւր։ Ճանապարհս սրտի նորա տեսի. և բժշկեցի զնա. և մխիթարեցի զնա. և եառ նմա մխիթարութիւն ճշմարտութեան՝ և ապաւորաց նորա։ Հաստատեցի զպատուղ խաղաղութեան ի վերայ խաղաղութեան՝ հեռաւորաց և մերձաւորաց, ասէ Տէր. և ես բժշկեցից զնոսա։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Հայր գթութեանց՝ և Աստուած ամենայն մխիթարութեան։ Որ մխիթարէ զմեզ յամենայն նեղութիւնս մեր. առ ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարութեամբն՝ որով մեք մխիթարիմք յԱստուծոյ։ Ճի որպէս առատանան չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս և ի մեզն Քրիստոսի առատանայ լեցի և մխիթարութիւնն մեր։ Եթէ ունիմք զմեզ տոկոս լինիլ եղբարցք՝ վասն նեղութեան մերոյ եղելոյ յԱսիայ. զի առաւել քան զկար մեր ծանրացաք. մինչև անյոյս լինելոյ մեզ և ի կենաց։ Այլ անձամբ յանձինս զմեռս մահու

ընկալաք. զի մի՛ յանձինս ապաստանիցիմք՝ այլ յԱստուած՝ որ յարուցանէ զմեռեալս. որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ և փրկեցէ։ Եւ յանդգնեալ եմ, եթէ տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր։

Ալէլուիա։ ի խորոց կարդացի առ քեզ՝։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ի ներքս աշակերտքն, և Թովմաս ընդ նոսա։ Գայ Յիսուս դրօքն փակելովք. եկաց ի մէջ նոցա և ասէ՝ ողջոյն ընդ ձեզ։ Ապա ասէ ցԹովմաս, բեր զմատունս քո և ա՛րկ այսր, և տես զձեռս իմ. և բեր զձեռն քո և մխեա՛ ի կողս իմ. և մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ։ Պատասխանի եւս Թովմաս և ասէ ցնա, Տէր իմ և Աստուած իմ։ Ասէ ցնա Յիսուս. այդ զի տեսեր զիս՝ և հաւատացեր. երանի, որոց ո՛չ իցէ տեսեալ և հաւատացեն։

Քարող. վասն գտանելոյ մեզ՝։

Եւ քահանայն ասէ զԱղօթս։

Ոյս արարածոց և փրկիչ աշխարհի Աստուած իմ Յիսուս. որ մարդասիրութեամբդ քո վասն մեր մեռելոցս մեղօք՝ զմահ յանձն առեր. և կենարար յարութեամբդ քո վերածեր զբնութիւնս մեր զաւուերանսանելս ի խաւարի. զդժոխս աւերեցեր. զաւանայ կապեցեր. և զամենեսեան յարուցեալ լուսաւորեցեր. և կեանս անապականս խոստացար սիրելեաց քոց ի միւսանգամ գալստեան քոյ։ Դու Տէր և այժմ օրհնեա զտեղի բնակութեան սորա. և զոսկերս սորա պահեացես անապական և անվհաս ամենազօր աջով քով սրբով. և Հոգւոյ սորա առաջնորդեացես յերկիր ուղիղ։ Օի ընդ սուրբս քո փառաւորեացէ զքեզ Քրիստոս, ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ"։

Խոպոպը-ին ածնեցո-ն։

Ասա-ծոյ երկրպագնեցո-ւ։

Որ զանապատում և զանհաս և զանբաւ պարգեւս ընտրեաս ամենեցուն՝ որք ճշմարտապէս ճանաչեն զքեզ Տէր. որ յայտնի ծագես զլոյս քո ի վերայ արդարոց և մեղաւորաց. որ կանգնես զգլորեալս, և բժշկես զբեկեալս սրտիւք։ Տո՛ւր մեզ Տէր և այժմ աղաչեմք զքեզ, Հոգի ըզ-

գաստութեան, Հոգի մխիթարութեան. և մխիթարեալ սիրտս զվշտացնեալս սրտիւք։ Օի միւսանգամ հաստատուն յուսով քո առողջացեալք՝ կացցուք առաջի քոյ զուարթ և պայծառ ի միւսանգամ գալստեան քոյ. զի ընդ սուրբս քո փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յա՛"։

Աստուած անե՛"։ Երգ. Հոգւոյ՛"։ Եւ կնոքն զգեցեալքն, և ասեն՝ Հայր մեր որ յերկինս՛"։

Կանոն Քառասուն աւուրն։ Երգեան ի գերեզմանն, և ասեն զԱմբիծսն, և զՇարական Հանգստեան ի ձայնէն։ Եւ այս կանոն կատարի. Սաղմոս ձգ։

Երանելիք են որք բնակեալ են ի տան Տեառն՛"։ Որպէս սիրելի՛"։

Ընթերցուած յԱստուածաշունչ մարգարէէ։

Այսպէս ասէ Տէր. զգո՛յշ կացէք իրաւանց՝ և գործեցէ՛ք զարդարութիւն. զի եկեալ հասեալ է փրկութիւն իմ. և յայտնելոց է ողորմութիւն իմ։ Երանի առն՝ որ առնիցէ զայն. և մարդոյ՝ որ կացցէ ի նմին. և պահիցէ զշաբաթս իմ, և ո՛չ պղծիցէ. և պահիցէ զձեռս իւր յառնելոյ զանիրաւութիւն։

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին Թղթոյն է ընթերցուած։

Ո՛չ կամիմ ևղբարք եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն. զի մի՛ տրտմեսջիք որպէս և այլքն՝ որոց ո՛չ գոյ յոյս։ Եթէ հաւատամք եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի առցէ ընդ նմա։ Բայց զայս ասեմք ձեզառն բանիւ, եթէ մեք՝ որք կենդանիքս մնացեալ եմք՝ ի գալստեան Տեառն ո՛չ ժամանեմք զննջեցեալոցն։ Զի ինքնին Տէր հրամանաւ և ի ձայն հրեշտակապետի՝ և ի փող Աստուծոյ՝ իջանէ յերկնից. և մեռեալքն ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք որք կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօքն հանդերձ յափշտակիցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։ Ընդհանուր մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

Ալէլուիա։ Սերձեցին խնդրուածք իմ առ՝։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Եւ ասէր՝ այսպէս է արքայութիւն Աստուծոյ. որպէս զի այր մի արկանիցէ զսերմանիս յերկիր։ Եւ ննջիցէ, և յառնիցէ զցայգ և

զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցին։ Եւ նա ո՛չ գիտէ, թէ երկիրն ինքնին բերէ զպտուղն. նախ զխոտն՝ և ապա զհասկն՝ ապա զծորեան ատոք ի հասկին։ Եւ յորժամ ապցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ՝ զի հասեալ են հունձք։ Եւ ասէր. ՈՒմ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ. կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա։ Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի՝ փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որք են յերկրի։ Եւ յորժամ սերմանիցի, բուսանի, և լինի մեծ քան զամենայն բանջար. և արձակէ ոստս մեծամեծս, մինչև բաւական լինիլ ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակիլ։ Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել։ Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա. բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն։

Բարող. Վասն գանձելոյ մեղ՝։

Եւ քահանայն ասէ զՍղօթս։

Որ արարիչդ ես ամենայն արարածոց, և բուսեղծիչ ազգի մարդկան. որ կեանքդ ես մահկանացուաց, և շահմարան և ափոփիչ հոգւոց մարդկան. որ սրբոց քոց Տէրդ ես, և յոյս և

ակնկալութիւն ամենայն արարածոց. որ փըր-
կելոց քոց առաջնորդես արդարութեամբ քով.
որ լուսաւորեցեր զաշխս որդւոց մարդկան, և
փոխեցեր յիշխանութենէ խաւարի յարքայու-
թիւն քո։ Դու Տէր և այժմ ընկալ զխըն-
դրուածս մեր. և հանգո՛ զհոգի սորա առ ամե-
նայն սրբոց և սիրելեաց անուան քոյ։ Եւ ըզ-
զգերեզման ծառայիս քո կնքեալ պահեացես.
զի միշտ պահեացին նշխաբք ոսկերաց սորա
մինչև յօր վերջնում կրկին գալստեան քոյ։
Եւ հոգւոյ սորա առաջնորդեա յերկիր ուղիղ.
բարեխօսութեամբ սրբոց քոց. զի քեզ վայելէ
փառք իշխա՛։

Խաղաղո՛ւ-թի՛ւն աշխարհաւ։

Ամո՛ն-ձայ եղիցի՛։

Տէր Աստուած՝ որ Տէր ես հոգւոց և ամե-
ծիչ մարմնոց. հանգո՛ զհոգի ծառայիս քոյ ընդ
սուրբս քո. զի դու ես հանգուցիչ քոյոց կա-
մարարաց. և սփոփիչ և մխիթարիչ հոգւոց
հանգուցելոց։ Ընկալ և այժմ զխնդրուածս մեր.
և կատարեա՛ ի բարի զաղօթս մեր. զի դու ես
Տէր գատաւոր կենդանեաց և մեռելոց. և իշ-
խան հոգւոց և մարմնոց։ Եւ քեզ վայելէ
փառք իշխանութիւն և պա՛։

Ձանազարհ մնդորելոյ՛։ Նըփ. Հոգւոյ՛։ Ե՛ ինչն պէնըզեղմանն,
և ասէն՝ Հայր մեր որ յերկինս՛։

Կանոն Տարելցին, Երթան ի գերեզմանն, և ասէն զԱմբիծան և զԸ-
րական Հանգստեան ի ձայնէն։ Եւ այս կանոն կատարի։

Սաղմո. իթ. Ընդ երեկոյս հանդիցեն լալիք՛։ Բայց առնեմ
զքեզ Տէր՝ զի ընկալար զիս՛։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէ է։

Երբև զի գեղեցիկք են ի վերայ լերանց ոտք
աւետարանչի համբաւոյն խաղաղութեան. երբև
աւետարանչի բարութեանց. զի լսելի արարից
զփրկութիւն քո. ասել Սիովն թէ. թագաւո-
րեացէ քեզ Աստուած։ Օ՛ի ձայն պահապանաց
քոց բարձրացաւ. և ի նոյն բարբառ առհասա-
րակ ցնծասցեն. զի զէմ յանդիման տեսցեն
զժամանակն՝ յորում ողորմեսցի Տէր սիօնի։
Ակերինք գոչեսցեն աւերակօքն Երու-
սաղէմի զփրկութիւն. զի ողորմեցաւ նմա Տէր.
և փրկեաց զԵրուսաղէմ։ Եւ յայտնի արաս-
ցէ Տէր զբազուկ իւր սուրբ առաջի ամենայն
ազգաց. և տեսցեն ամենայն ծագք երկրի ըզ-
փրկութիւն Աստուծոյ մերոյ։

Պղտոսի առաքելոյն յերբայեցւոյ թղթոյն է ընթերցուածս։

Քայց հաստատեալ եմ վասն ձեր սիրելիք ի լաւ անդր, և որ լեին է փրկութեամբ։ Օ՛ի թէպէտ և այսպէս խօսիմք, ո՛չ եթէ անիրաւ ինչ է Աստուած՝ մոռանալ զգործս ձեր և զաէր՝ զոր ցուցանէք յանուն նորա. զի պաշտէիք զսուրբսն, և պաշտէք։ Եւ մեք լրչամք՝ զի իւրաքանչիւրոք ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ ի հաստատութիւն յուսոյն՝ մինչև ցվախճան. զի մի՛ հիւանդամիտք լինիցիք։ Նմանողք եղերուք այնոցիկ՝ որք հաւատովք և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն։

Ալէլ-էյ։ Աստուած ողորմեա մեզ և օրհնեա զմեզ. երե՛։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Յայնմ ժամանակի պատասխանի եաւ Յիսուս, և ասէ. դոհանամ զքէն Հա՛յր՝ Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի պիտնոց՝ և յայտնեցեր տղայոց։ Ա՛յո՛ Հա՛յր. զի այսպէս հաճոյ եղև առաջի քոյ։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. և ո՛չ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր. և ո՛չ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ո՛չ Որդի. և ում Որդին կամի-

ցի յայտնել։ Նկա՛յք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք՝ և ես հանգուցից զձեզ։ Առէ՛ք զլուծ իմ ի ձեզ. և ուսարո՛ւք յինէն՝ զի հեզ եմ, և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց։ Օ՛ի լուծ իմ քաղցր է. և բեռն իմ փոքրոգի։

Փաղ. վ.ան ի վերուստ խոսպա՛։

Եւ քահանայն ասէ զաղօթս։


Ստեղծիչ յաւիտենից և աւետիչ ազգի մարդկան. որ խոնարհեցար յանճառ փառաց ի հոգեղէն բնութիւնս մեր, ազատել զմեզ յանիծից Ադամայ. և խոստացար անսուտ բանիւքո՝ ի միւսանգամ գալստեանդ նորոգել զապականեալս մեղօք։ Եւ այժմ ողորմած Տէր, գթա՛ ի հոգի ննջեցելոյս որ այժմ ի ձեռն կոչմանդ քոյ փոխեցաւ յանցաւոր կենցաղոյս, ի քեզ հաւատացեալ ճշմարիտ Աստուած։ Եւ ջնջեա զձեռագիր անօրէնութեան սորա զոր յանցեալ է առաջի քոյ, և գրեա զանուն սորա ի գրութիւն կենաց։ Օ՛ի դու ես յարութիւն և կեանք ամենայն ննջեցելոց. և քեզ վայելէ փառք՝։

Տարելցին Կանոն։

Խաղաղո–ւիւ–ն աղեխցո–ւ։
Ասպո–ժոյ երկնպաճեսցո–ւ։

Յիշեա Տէր զՀոգի ծառայիս քոյ (այս անուն) քահանայիս՝ զոր կարգեցեր սպասաւոր եկեղեցւոյ քում սրբոյ և քարոզ ժողովրդեան քում, համառօտել զբանն ճշմարտութեան քոյ· և այժմ ըստ հրամանի քոյոյ կոչմանդ, մերձեցաւ ի Հող ուստի ստեղծեր զսա։ Ընկա՛լ և դասաւորեա՛ զՀոգի սորա ընդ այլ ճշմարիտ վերակացուան, որք հաճոյ եղեն քեզ· և ներեա՛ յանցանաց սորա, բարեխօսութեամբ ընտրելոց քոց։ Եւ զմեզ զամենեսեան զՀաւատացեալքս ի քեզ օրհնեա՛· զի արժանի լինցուք փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ· այժմ և միշտ և յա՛։

ժողովեալքս՛։ եր. Հոգւոյ՛։ և– կ՚ուզեն պիտի ըսեմ. և ասեն՝ Հայր մեր որ յերկինս՝։



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՄԻՆԱՓ ԱԲԵՑ ՋՐԱՅԻՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0243347